

**ԹԻՖԼԻՍԻ ԵՎ ՄԵՐՁԱԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 5-21-ԸՂ ԴԴ.
(համառոտ ակնարկ)**

Թամարա Վարդանյան-Այվազյան*

Ներածություն

Մույն աշխատությունը հակիրճ անդրադարձ է Թիֆլիսի և մերձակա բնակավայրերի հայության հարուստ պատմությանը, վեր են հանված բազմաթիվ պատմա-ազգաբանական և քաղաքագիտական նշանակություն ունեցող հարցեր. ներկայացված են հայահոծ բնակավայրերի ձևավորման գործընթացը, ժողովրդագրական պատկերը, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը:

Հայությունն ավանդաբար մեծ թիվ է կազմել թե՛ Վրաստանի մայրաքաղաքում և թե՛ գավառներում՝ ավաններում, գյուղերում, որոնց թվում կան ոչ միայն բազմաթիվ հայաշատ, այլև «մաքուր» հայկական բնակավայրեր: Հայտնի է հայության հսկայածավալ ներդրումը Թիֆլիսի կառուցապատման, գեղեցկացման ու հզորացման գործում: Հայտնի է նաև հայազգի անվանի գործիչների՝ Վրաստանում ունեցած բարձր հեղինակության, քաղաքային կառավարմանն ու բարեկարգմանն ուղղված նրանց անասելի ջանքերի և առհասարակ երկրի ներքին կյանքին վիրահայության ակտիվ մասնակցության մասին: Իրավամբ, հայությունը Վրաստանում պետականաստեղծ ազգ է:

Աշխատության շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանացել XIX-XXդդ. պատմությունը, երբ քաղաքական-տնտեսական հասարակարգերի փոփոխությունն ու ազգային նախագծերի ակտիվացումը լուրջ խթան հանդիսացան նաև հայ-վրացական հարաբե-

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ, պ.գ.թ.:

րությունների վերաձևավորման համար: Մայր հայրենիքից դուրս բնակվող հայության ճակատագրի պարզ ամփոփումը դարձան տեղի հայության 1918-1920թթ. ապրած արհավիրքները, որոնք իրենց տրամաբանական շարունակությունն ունեցան թե՛ խորհրդային, թե՛ հատկապես հետխորհրդային տարիներին: Իհարկե, խորհրդային շրջանում «ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության» կարգախոսի ներքո վրաց հասարակությունը որոշակի հանդուրժողականություն էր ցուցաբերում այլազգիների, այդ թվում՝ հայերի նկատմամբ, ինչև, անշուշտ, հնարավորություն տվեց հատկապես թիֆլիսահայությանը զարկ տալու կրթամշակութային կյանքի զարգացմանը: Սակայն խորհրդային կարգերի ընդերքում նիրհող և արտաքնապես քողարկված վրացական ազգայնականությունն ու ազգային պետության ստեղծման նախագիծը շարունակում էին գործարկվել նաև այդ փուլում: Տեղի հայությունը, թեև չէր ենթարկվում ակնհայտ հալածանքների, այնուամենայնիվ, հայկական ազգանունների դեմ արշավն ու դրանց փոխակերպումը վրացականի գազաթնակետին հասավ «զարգացած սոցիալիզմի» շրջանում:

Հետխորհրդային ճգնաժամային տարիներն իրենց հետ բերեցին հայապահպանության տեսակետից նոր խնդիրներ ու մարտահրավերներ. հայությանը հետապնդում էր ոչ միայն ձուլման վտանգը, այլև արտագաղթի հեռանկարը, որը հազարավոր հայերի համար միակ ելքն էր: Արդյունքում՝ XXդ. վերջերին և XXIդ. սկզբին զգալիորեն նվազեց ոչ միայն բուն մայրաքաղաքի հայության թիվն ու կտրուկ անկում ապրեց նրանց հասարակական-քաղաքական կշիռը, այլև աստիճանաբար մարեցին երբեմնի հայկական և հայաշատ մի շարք գյուղեր ու ավաններ: Հիմնականում դաշտային հետազոտությունների մեթոդաբանությամբ իրականացված հետխորհրդային շրջանի զարգացումների ուսումնասիրությունը՝ տեղի հայությանն ուղղված մարտահրավերների լուսաբանումն ու դրանց հաղթահարման մեխանիզմների քննումն, անկասկած, ունեն նաև կիրառական քաղաքագիտական նշանակություն:

I. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Թիֆլիսում հայերը բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից: Դեռևս V դ. Վախթանգ Գորգասալ վրաց թագավորը¹ մայրաքաղաք դարձրած Տփղիսը (Թիֆլիս, 1936 թվականից՝ Թբիլիսի) բնակեցրեց հայերով: 631թ. Բերդի թաղում հայերը կառուցեցին Սբ.Գևորգ, 754թ.՝ Հրեշտակապետաց եկեղեցիները:

Համաձայն Առաքել Սյունեցու տեղեկության, VI դ. կեսերին Թիֆլիս է գալիս հայ իմաստասեր Դավիթ Անհաղթը, որը, հալածվելով Հայաստանում, ապաստան է գտնում Վրաստանում: Նա այստեղ ևս քարկոծվում է, ապա՝ մեկուսանալով «Գարեջայի բազմալեռանց» անապատներում և արձարծելով «իմաստնոց արտաքնոց» (գարե սջա) ուսմունքը, իբրև միակ *հայախոս* անապատական ցմահ մնում է այստեղ²:

Սակայն հայերի ներգաղթը Թիֆլիս հատկապես ուժեղացավ Անիի կործանումից և Հայոց Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045թ.): XII դարից Թիֆլիսը դարձավ վիրահայ թեմի առաջնորդանիստ քաղաք: XI-XII դդ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը սիրով ընդունում էր հատկապես հայ առևտրականներին ու արհեստավորներին և բնակեցնում նրանց խոշոր քաղաքներում՝ հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանը և քաղաքային արհեստների զարգացմանը նպաստելու նպատակով: Նրա կառավարման տարիներին՝ 1123-1125թթ. սկսած, Գորի քաղաքը վերածվեց վաճառաշահ քաղաքի՝ բազմամարդ հայկական գաղութով, բաղկացած արհեստավորական, առևտրական և հոգևորական խավերից, որոնք և

¹ Ըստ Ղազար Փարպեցու, Վախթանգ Գորգասալը Վահան Մամիկոնյանի համախոհն ու դաշնակիցն էր (տե՛ս *Մելիքսեթ-Քեկ Լ.*, Հին Թբիլիսիի և հայ-վրացական մշակութային կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական պրպտումներ», խմբ. Պ.Մուրադյան, Ս.Էջմիածին, 2010, էջ 268):

² *Մելիքսեթ-Քեկ Լ.*, Հին Թբիլիսիի և հայ-վրացական մշակութային կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական պրպտումներ», խմբ. Պ.Մուրադյան, Ս.Էջմիածին, 2010, էջ 271:

կառուցեցին թե՛ Գորիի և թե՛ շրջակայքի հայկական եկեղեցիներն ու վանքերը³: Բացի վրացական արքունիքից, վրաց հողատեր-կալվածատերերն էլ իրենց հերթին էին շահագրգռված Թիֆլիսի արվարձաններում բնակեցնելու հայ աշխատասեր գյուղացի հողագործներին:

Ճանապարհորդ Գիլդենշտադտը 1772թ. գրում է. «Հայերը Վրաստանում շատ են: Բնակվում են ամբողջապես իրենց սեփական հայկական գյուղերում, մի մասն էլ վրացիների հետ խառը: Նրանք, ովքեր խառն են ապրում, վրացիների հետ խոսում են վրացերեն»⁴:

XVIIIդ. երկրորդ կեսին հզորացած Վրաստանի թագավորներ Թեյմուրազն (Քարթլիի) ու Հերակլը (Կախեթի) մի շարք ավերիչ արշավանքներ են ձեռնարկում պարսկական տիրապետության տակ գտնվող հայկական բնակավայրերի վրա: Այդ շրջանում արևելահայությունը հույսեր էր փայփայում քրիստոնյա վրացիների օգնությամբ ազատագրվելու մահմեդական լծից: Այդ պատճառով է, որ Հերակլ II-ի գորքի գրեթե կեսը հայեր էին, որոնք աչքի էին ընկնում իրենց քաջությամբ⁵: Երբ 1795թ. Իբրահիմ խանը արշավանք կատարեց դեպի Տփղիս, քաղաքի մատույցներում նրա զորքերը կռվի բռնվեցին Հերակլ թագավորի զորքի հետ: Պարսիկները թնդանոթների վրա հարձակվեցին «ալլահ-ալլահ» գոռալով և խուճապ առաջացրին քաղաքի պաշտպանների շարքերում. «Երբ մեր թնդանոթների վարիչները տեսան այս պատուհասը, որ տեղում էր վայրենի մահացողների անհուն բազմութիւնից, խոյս տուին, մնաց մենակ հայազգի «Փրիմեր մայիօր» Գաբրիէլը մեկ վարիչով, որ անխոնջ աշխատանքով կրակ էր սփռում Քրիստոսի խաչի թշնամիների վրայ»⁶:

³ Մելիքսեթ-Քեկ Լ., Հայերը Վրաստանում, «Պատմա-բանասիրական պրպտումներ», խմբ. Պ.Մուրադյան, Ս. Էջմիածին, 2010, էջ 346:

⁴ *Гильденштедт И.А.*, Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, сс. 260-261.

⁵ Մարտիրոսյան Վ., Հայ-վրացական առնչությունները XVIIIդ. 50-60-ական թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1980, թիվ 1, էջ 45:

⁶ «Լուսմ», Թիֆլիս, 1896, Գիրք Ա, խմբագրական, էջ 318:

XVIIIդ. հեղինակներից մեկը՝ Մարտիրոս Խալիֆան, վկայում է, որ Հերակլը 1779թ. Երևանի վրա հարձակվել էր 40 հազար զորքով և երկիրն ավերելուց հետո իր զորքի հետ Տփղիս քշել 150 գյուղերի 30 հազար բնակիչներ և մեծ քանակությամբ անասուններ. «Ի սոյն թուին [1779] յուլիս 6-ին արքան Վրաց Հերակլ եկն ի վերայ Երեւանայ քաղաքին քառասուն հազար զօրօք եւ շատ աւերութիւն արար՝ երկիրն բոլոր քանդեաց եւ այրեաց, վերջ հարիւր յիսուն գեօղ քշեալ տարաւ, երեսուն հազար ոգիս եւ հարիւր հազար տավարս համարելով, որ տասանորդն իւր էր՝ տասն հազար տավար. եւ ինքն յանկարծ ի մարդկանէ վերացեալ գնաց Թիֆլիզ»⁷: Վրաստանում հայ գերիները չճորտացվեցին, բայց նրանց վիճակն աննախանձելի էր: Ծանր հարկադիր աշխատանքներ կատարել տալուց հետո նրանց բնակեցրին գյուղերում և մասամբ Թիֆլիսի Հավլաբար թաղամասում: Հետագայում նրանց մի մասին իրավունք տրվեց վերադառնալ ծննդավայր, իսկ մյուսներն ընդմիջտ մնացին իրենց նոր բնակավայրերում⁸:

Հերակլ II-ը զանազան կողմերից հայ բնակիչներ էր տեղահանում և բնակեցնում Սոմխեթում (Բոլնիս և այլ վայրեր), Թիֆլիսում: Այս վերաբնակեցումների արդյունքում ստեղծվեց Շուլավեր գյուղը: Խամսայի հինգ մելիքություններից մեկի՝ Գյուլիստանի գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյան Մելիք-Աբովը 1799թ. թողնում է Ղարաբաղը և իր հպատակ բնակչության հետ տեղափոխվում Վրաստան, ուր Գեորգի XII թագավորը նրան Բորչալուի ուղեմասում տվեց Աղքյորփի գյուղը: Արցախի Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյաններից էլ այդ թվականներին մնացին Վրաստանում հիմնադրված Դաղեթ-Խաչեն և Բոլնիս-Խաչեն գյուղերում: Այսօր էլ այդ գյուղերում կարելի է հանդիպել Մելիք-Բեգլարյանների շառավիղներին⁹:

⁷ Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հ. II, Եր., 1956, էջ 494:

⁸ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1971, էջ 119-120:

⁹ Մաղալյան Վ., Դաղեթ-Խաչեն, Եր., 1999, էջ 325:

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեծ թվով հայեր Գյանջայի և Ղարաբաղի խանություններից գաղթեցին Կախեթ, Սումխեթ և Քարթլի, որոնք արդեն Ռուսաստանի տիրապետության տակ էին: Ըստ Ալ.Երիցյանցի տվյալների՝ Վրաստանի քրիստոնյա բնակչության 1/3-ը հայեր էին, իսկ «վրացիք՝ պակաս, քան 2/3-ը: Հայք վերոհիշյալ վեց քաղաքներում (Թիֆլիս, Գորի, Անանուր, Թելավ, Սղնախ, Ելիզավետպոլ) ամենաբազմաթիվ տարրն էր... ութ քաղաքացիներից 7-ը՝ հայ էր և մեկը՝ վրացի, իսկ չորս գյուղացիներից երեքը՝ վրացի, մեկը՝ հայ...»¹⁰:

¹⁰ Երիցյանց Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա, Թիֆլիս, էջ 139:

II. ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆ. 19-Ը Դ. – 1918Թ.

Հաստատվելով Վրաստանի քաղաքներում՝ հայերը սկսում են առաջատար դեր կատարել երկրի առևտրաարդյունաբերական կյանքում, կազմում են, այսպես կոչված, մոքալաքների (վր.՝ քաղաքի բնակիչ, հայ.՝ քաղաքացի) դասը: Սկզբում «մոքալաքե» էին կոչվում քաղաքներում ապրող բոլոր բնակիչները, բայց այնուհետև այն դառնում է մի տեսակ պատվանուն, որ տրվում էր վրաց թագավորների կողմից Թբիլիսի և Գորի քաղաքների այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքացիական հին ծագում և վճարում էին հատուկ հարկ (մախթա): Որոշ արտոնություններով օժտված մոքալաքների իրավունքներն արտահայտություն են գտնում Վախթանգ VI թագավորի կազմած օրենսգրքում (XVIIIդ.): Մինչև XIX դարի սկզբները մոքալաքներն առավելապես հայերն էին¹¹:

Թիֆլիսի նահանգն իր աշխարհագրական դիրքով և բնակլիմայական պայմաններով բարենպաստ էր ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքների, այլ նաև առևտրի համար: Հատկապես XIX դարում, երբ Ռուսական կայսրությունը թևակոխում է կապիտալիստական զարգացման շրջան, նահանգի բնակչությունը մեծ աճ է արձանագրում: 1886թ. հայերի թիվը Թիֆլիսի նահանգում կազմում էր արդեն 195.946 մարդ, որոնց գերակշռող մասը լուսավորչական էին, կաթոլիկ էին 16.173-ը: 1897թ. առաջին համառուսաստանյան մարդահամարի տվյալներով կար 196.189 հայ: Այս ցուցանիշը հաշվարկվել է ըստ մայրենի լեզվի: Սակայն ըստ կրոնի հայերի թիվն առավել է և կազմում է 230.377, որոնցից 210.161-ը՝ լուսավորչական, 20.216-ը՝ կաթոլիկ¹²: Այսպիսով, պաշտոնական մարդահամարում 34.188 հայ վրացախոս լինելու արդյունքում գրանցվել է որպես վրացի:

Ըստ 1897թ. տվյալների, Թիֆլիսի նահանգի վարչական կառույցներում, դատական և ոստիկանական ծառայություններում աշխա-

¹¹ Պետրոսյան Ա., Մոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1966, թիվ 12, էջ 89:

¹² Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905, сс. 74-77.

տում էր 400 հայ: Նրանց թիվը զգալի էր նաև հասարակական գործունեություն ծավալողների մեջ (228), զինված ուժերում (1193), եկեղեցական սպասավորների թվում (166), ուսումնադաստիարակչական գործում (271), գիտության, գրականության և արվեստի գործիչների մեջ (97), բժշկասանիտարական ծառայությունում (185) և այլն¹³:

1913թ. տվյալներով, Թիֆլիսի նահանգում բնակվում էր 389.858 հայ, այդ թվում 348.373-ը՝ լուսավորչական, 40.648-ը՝ այլ դավանանքի (հիմնականում կաթոլիկ), 837-ը՝ ուղղափառ¹⁴: Իսկ 1914թ. տվյալներով, հայերի թիվը նահանգում 394.115 էր, այդ թվում 350.715-ը՝ լուսավորչական, 42.360-ը՝ այլ դավանանքի (հիմնականում կաթոլիկ), 1040-ը՝ ուղղափառ¹⁵:

Թիֆլիս քաղաք

Հայկական միջավայրի առանձնահատկություններից մեկը առավելագույն կենտրոնացումն էր քաղաքներում: Նահանգի հայության զգալի մասն ապրում էր բուն Թիֆլիս քաղաքում¹⁶: Այսպես, 1897թ. նահանգի 230.377 հայերից Թիֆլիսում ապրում էր ըստ կրոնի՝ 50.801 (որից 356-ը՝ կաթոլիկ), ըստ մայրենի լեզվի՝ 47.133 հայ¹⁷, 1905թ. նահանգի 300 հազար հայերից՝ 84.170-ը¹⁸, իսկ 1914թ. 394.115-ից՝ 129.569-ը¹⁹:

Հայության ազնվականական վերնախավը Թիֆլիսում զբաղեցնում էր պետական և արքունի կարևոր պաշտոններ և իր որոշակի կշիռն ուներ քաղաքի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում: Թումանյան իշխանական տան ներկայացուցիչները ժա-

¹³ *Ասոյան Լ.Ա.*, Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2003, թիվ 3, էջ 102:

¹⁴ *Кавказский Календарь на 1914 год*, Тифлис, 1913, с. 127.

¹⁵ *Кавказский Календарь на 1915 год*, Тифлис, 1914, с. 243.

¹⁶ Հարկ է նշել, որ Անդրկովկասի երեք հիմնական ազգությունների շարքում հայերն առաջին տեղն էին զբաղեցնում քաղաքաբնակների թվով: Այսպես, 1897թ. տվյալներով, քաղաքներում էր բնակվում հայերի 33.8%-ը, անդրկովկասյան թաթարների՝ 24.1%-ը, իսկ վրացիների՝ ընդամենը 18%-ը:

¹⁷ *Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г.*, под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905, сс. 74-77.

¹⁸ *Кавказский Календарь на 1907 год*, Тифлис, 1905, сс. 312-325.

¹⁹ *Кавказский Календарь на 1915 год*, Тифлис, 1914, с. 247.

ռանգաբար մղիվանբեգեր (արքունի դպրապետներ) էին, Բեհբուք-յանները՝ քաղաքի մելիք-մամասախլիսին (քաղաքագլուխ):

Անդրկովկասի էթնիկ կազմն ու ժողովուրդների բնակեցվածությունը խիստ բազմազան էին: Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար կոմս Ի.Ի. Տոլստոյն այդ մասին գրում է. «Չկա մի տարածք, որ խառը չլինի: Ոչ ոք չի կարող հատակ ասել, թե Թիֆլիսը վրացական քաղաք է, թե՞ հայկական... , թե կհամաձայնվե՞ն արդյոք հայերը Բաքվի նահանգը ճանաչել որպես թաթարական երկիր: Միայն կարող եմ հաստատ ասել, որ թաթարները չեն համաձայնվի, թե Բաքուն հայկական է»²⁰:

Թիֆլիսում հայերի թիվը 1817թ. կազմում էր 11.200 մարդ, իսկ վրացիներինը՝ 2.800: Նպաստավոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների շնորհիվ XIXդ. կեսից քաղաքում աճեց բնակչությունը: Այսպես, արդեն 1864թ. Թիֆլիսում բնակվում էր 28.500 հայ և 14.900 վրացի, 1876թ.՝ 37.600 հայ և 22.200 վրացի, 1899թ.՝ 63.000 հայ և 44.900 վրացի²¹: Իսկ 1886թ. ընտանեկան ցուցակներով հայերի թիվը 37.420 էր, որը կազմում էր քաղաքի բնակչության 47.7%-ը²²: Սակայն հայերի տեսակարար կշիռը XIXդ. աստիճանաբար նվազում էր, իսկ վրացիներինը՝ ավելանում (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Վրացիների և հայերի տեսակարար կշիռը Թիֆլիս քաղաքում XIXդ.

	1803	1817	1864	1876	1897	1899
Հայեր	74%	75,6%	47,4%	41%	29,5%	36,4%
Վրացիներ	22,6%	18,9%	24,9%	24,1%	26,3%	26%

²⁰ Վարդանյան Թ., Այրկովկասում թաթարական ազգայնականության դրսևորման արմատները, «Դրոշակ», Եր., 2002, թիվ 4, էջ 83:

²¹ *Анчабадзе Ю.Д., Волкова Н.Г.*, Старый Тбилиси: Город и горожане в XIX веке, М., Наука, 1990, с. 29; նաև Վարդանյան Թ., Վրաստան. Ինքնությունը քաղաքական ծրագրերում և գործողության մեջ, «21-րդ ԴԱԸ» ամսագիր, Եր., 2010, թիվ 3, էջ 102:

²² Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1883, с. 10, նաև <http://www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html>, <http://www.geostat.ge/>; Кавказский Календарь на 1907 год, Тифлис, 1906.

Զնայած դրան, ընդհուպ մինչև XXդ. սկզբները հայերը պահպանեցին Վրաստանի մայրաքաղաքում ձեռք բերած իրենց բարձր հասարակական-տնտեսական դիրքերը: 1850թ. աշնանը թագաժառանգ Ալեքսանդրի Թիֆլիս կատարած այցելության նկարագրությունից ակնհայտ երևում է հայ հասարակության ունեցած անվերապահ կշիռը Վրաստանի մայրաքաղաքում: Թիֆլիսի բնակչությունը դուրս էր եկել քաղաքի սահմաններից՝ դիմավորելու թագաժառանգին: Զինվորական շարայուններին հետևում էին բոլոր նահանգներից հրավիրված իշխանական տների՝ գեղեցիկ հանդերձավորված պատանի ձիավորները, որոնք կազմում էին պատվավոր հյուրի անձնապահ գունդը: Երեկոյան թագաժառանգը հրավիրված էր Տեր-Շմավոնյանի պարտեզում կազմակերպված քաղաքի ազնվականների խնջույքին: Գ.Պատկանյանի խոսքերով, հրավիրվածների «մեծագույն բազմությունն էին հայազգիք»²³:

1860-ականների երկրորդ կեսին Թիֆլիսում գործող 3000 առևտրական կետերի մեծ մասը պատկանում էր հայերին: Այսպես, 17 քարվանսարայներից 14-ի տերերը հայեր էին՝ Բեհբոջյանց, Արծրունի, Անանյանց, Խերիդինյանց, Կորխմազյանց, Շիոյանց, Շադինյանց, Մովսիսյանց և ընկ., Վարդանյանց, Խալաթյանց, Թամամշյանց և ուրիշներ: Հայ կապիտալիստներին էր պատկանում նաև հյուրանոցների, դուքանների, գինու մառանների և այլ կետերի մեծ մասը: Թիֆլիսի առևտրաարդյունաբերական դասի մոտ 2/3-ը կազմում էին հայերը²⁴:

1897թ. «Իվերիա» վրացական թերթն իր անհանգստությունն էր հայտնում հոգուտ հայերի Թիֆլիսի բնակչության էթնիկ կազմի փոփոխությամբ՝ հիշատակելով, որ քաղաքային ծառայողների 93%-ը հայեր են²⁵: Հայերը գերիշխում էին Թիֆլիսի քաղաքային դումայում, որտեղ

²³ Մխիթարյան Մ.Հ., Թիֆլիսյան խճանկար, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1991, թիվ 5, էջ 65-66:

²⁴ Чхетия III., Армяне в Тбилиси в шестидесятих годах XIX века, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1958, թիվ 3, էջ 163:

²⁵ Վարդանյան Թ., Հայ-վրացական ազգամիջյան հարաբերությունների պատմությունից, «Դրոշակ», Եր., 2003, թիվ 1, էջ 102:

80 քվեներից միայն մեկն էր վրացի, 13-ը ռուս էին, 3-ը՝ գերմանացի, մնացածը՝ հայեր²⁶: 1840 թվականից սկսած՝ երկար տարիներ հայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները զբաղեցնում էին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը: Առաջին քաղաքագլուխը Հ.Իզմիրովն էր, հետագայում՝ Ս.Խատիսյանը, Մ.Տեր-Գրիկուրովը, Ի.Շադինովը, Փ.Փրիդոնովը²⁷: Ինքնակառավարման տարիներին Թիֆլիսի քաղաքագլուխ են եղել Մատինյանցը, Վերմիշը, Ա.Խատիսյանը: Վրացական մամուլն ահագանգում էր, թե «հայերը խաղաղ գրավման ճանապարհով նվաճում են Վրաստանը»²⁸: Վրաց ազգայնականների անարդար դժգոհություններին բավական ծանրակշիռ պատասխան է տալիս Ա.Զամալյանը: Չժխտելով այն փաստը, որ հայերի թիվը վերջին ժամանակներում Վրաստանում աճել է, նա նշում է. «Նոր տիրողների կամքով Վրաստանը Անդրկովկասի վարչական, առևտրական և քաղաքակրթական կենտրոնը դառնալով՝ դեպի իրեն է քաշել բազմաթիվ ռուսների և օտարազգիների հետ նաև որոշ քանակությամբ հայեր: Մենք գիտենք, որ Հայաստանը սրանից շատ է տուժել՝ զրկվելով աշխատող ձեռքերից և ուշիմ, շինարար տարրից: Բայց թե դա Վրաստանի համար ինչ անպատեհություն է ունեցել – չգիտենք, քանի որ հայերը Վրաստանում երբեք ուրույն ազգային կամ քաղաքական շահեր չհետապնդելով հանդերձ՝ մեծապես զարկ են տվել այդ երկրի բարեշինությանը: Մտածել միայն, թե ինչ կլինե՞ր վրացիներին հրամցրած այսօրվա Թիֆլիսի վիճակը, եթե այնտեղ հայկական շինարար ձեռքի հետքը չլինե՞ր...»²⁹:

Եկեղեցի

Հայազգի իշխան Ումեկը 1251թ. Թիֆլիսում կառուցում է կաթողիկե Ս.Գևորգ եկեղեցին, իբրև ընդօրինակություն Հաղպատի Ս.Նշանի: Այն դառնում է Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնոր-

²⁶ Նույն տեղում, էջ 103:

²⁷ *Чхетия III.*, Армяне в Тбилиси в шестидесятих годах XIX века, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1958, թիվ 3, էջ 166:

²⁸ *Ա.Զամալյան*, Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, No 6, էջ 78:

²⁹ Նույն տեղում, էջ 77-78:

դանիատը: Այստեղ են գտնվում աշուղ Սայաթ-Նովայի և գեղանկարիչ Գ.Բաշինջադյանի գերեզմանները: Եկեղեցու բակում են թաղված հայ նշանավոր զորավարներ կոմս Մ.Լորիս-Մելիքովը, գեներալներ Ա.Տեր-Ղուկասովը, Հ.Լազարյանը, Բ.Շելկովնիկովը և ուրիշներ: Հետագայում Տիֆլիսում կառուցվել են բազմաթիվ հայկական եկեղեցիներ՝ Մուղնու Ս.Գևորգը (1356), Նորաշենի Ս.Աստվածածինը (1467), որտեղ պահպանվել են XVIIIդ. նկարիչ Հ.Հովնաթանյանի որմնանկարները, ինչպես նաև Զատիվայրի Ս.Կարապետը (1400), Բերդեհեմի Ս.Աստվածածինը (XIIIդ.), Կուսանաց Ս.Ստեփանոսը (1727), Ս.Նշան Նիկողայոսի (1703), Հավլաբարի Էջմիածնեցոց Ս.Գևորգ (1806) եկեղեցիները:

1655թ. հիմնադրվել է Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցին՝ Վրաց Ռոստոմ թագավորի աստենադպիր, ժամանակի «ուսյալ և կրթյալ այրերից» Աշխարհբեկ Բեյբությանի՝ թագավորից իբրև նվեր ստացած գերեզմանատեղում: Խոջիվանքի պանթեոնում են թաղված հայ մեծանուն իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ, գրողներ և մշակույթի գործիչներ: Դրանց թվում են Բաֆֆին, Ղ.Աղայանը, Մուրացանը, Գ.Արծրունին, Զիվանին, Նար-Դոսը, Պ.Պոռչյանը, Գ.Սունդուկյանը, Հ.Թումանյանը, Ա.Ծատուրյանը, Մ.Եկմայանը և ուրիշներ: Այն կոչվում է նաև հայ գրողների և հասարակական գործիչների Հավլաբարի պանթեոն:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը վկայում է, որ 1671թ. Թիֆլիսի 14 եկեղեցիներից 8-ը հայկական էին, իսկ արքահայր Հովսեփ Դելապորտը 1768թ., այցելելով Թիֆլիս, հիշատակում է 7 հայկական եկեղեցի³⁰: 1825թ. Թիֆլիսում գործում էր 25 հայ գրիգորյանական, 12 վրաց ուղղափառ եկեղեցի, իսկ երեք տասնամյակ անց հայ եկեղեցիների թիվը հասնում է 27-ի³¹: Այս եկեղեցիներից 11-ը կոչվել է Ս.Աստվածածին, դրանք իրարից տարբերվել են թաղամասի հիշա-

³⁰ *Иоселиани П.*, Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866, с. 274.

³¹ *Анчабадзе Ю.Д., Волкова Н.Г.*, Старый Тбилиси: Город и горожане в XIX веке. М., Наука, 1990, с. 45.

տակումով, իսկ 7-ը կրել են Ս.Գևորգ անունը: Թիֆլիսում Ս.Կարապետի անունով ևս երկու եկեղեցի է գործել, մեկը՝ բուն քաղաքում (Գրիբոյեդովի փ.), որը կոչվել է նաև Զրկինյանց, իսկ մյուսը՝ Հավլաբարում (Ս.Կարապետի փ.):

Դպրոց

Վրաստանի գրեթե բոլոր հայաբնակ գավառներում, քաղաքներում և գյուղերում գործում էին հայկական դպրոցներ: Հայկական արական ծխական դպրոցներ կային Ադրուվաղում, Դաղեթ-Խաչենում, Դուռնուկում, Ծղնեթում, Կախեթում, ծխական դպրոցներ՝ Թելեթում, Կոթիում, Կոջորում, Կումիսում, Մանգլիսում, Շամշուղայում³²: 1881թ. Թիֆլիսի նահանգում հաշվվում էր 80 հայկական հոգևոր վարժարան, որտեղ սովորում էր 4120 աշակերտ, դասավանդում էր 217 ուսուցիչ:

Հայկական դպրոցների ծախսերը հոգում էին եկեղեցին, հայ հասարակությունն ու մասնավոր բարեգործները: 19-րդ դ. երկրորդ կեսից հայկական դպրոցների քանակն անընդհատ աճում էր: Միջնակարգ դասընթացներով են գործել Թիֆլիսի Գայանյան (1869), Մուղնու (1849) և Հովնանյան (1877), Ախալցխայի Կարապետյան (1830) և Եղիսաբեթյան (1870) դպրոցները: Շատ ավելի մեծ թիվ են կազմել հայկական մեկդասյա և երկդասյա եկեղեցական-ծխական դպրոցները: Դրանք, չնայած կրել են եկեղեցական-ծխական անունը, բայց փաստորեն եղել են աշխարհիկ ուսումնական հաստատություններ:

Կրթասեր հայ ժողովուրդը ոչինչ չի խնայել ազգային դպրոցների պահպանման համար: Եկեղեցիների եկամուտների մեծ մասը հատկացվել է դպրոցներին: Մեծ օգնություն է ցուցաբերվել նաև հայ բարեգործական ընկերությունների և առանձին մեծահարուստների կողմից: Հայազգի շատ գործիչներ տարիներ շարունակ ազգային դպրոցներում դասավանդել են առանց վարձատրության:

³² *Խուրդյան Ս. Կ.*, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 600-605:

«Նովոյե օբոզրենիե» ռուսական լրագիրը 1884թ. իր խմբագրականներից մեկում գրել է. «Ձգտումը դեպի կրթություն այն ամենախոշոր հատկանիշներից մեկն է, որով զանազանվում են հայերը մեր երկրի մյուս ազգաբնակչություններից: Ծխական ուսումնարանները, նրանց պահպանության համար կատարվող կամավոր տուրքերը, ձրի ուսում տալը, դպրոցներին դրամ կտակելը կենսական նշանակություն են ստացել հայերի մոտ»: Այսպես, 1901թ. Անդրկովկասում գործող 12 կրթական հաստատություններում սովորող աշակերտների 43%-ը հայեր էին, 32%-ը՝ ռուսներ, 25%-ը՝ վրացիներ, թաթարներ չկային ընդհանրապես³³: Վարչակազմի պաշտոնյան նշում է. «Անհնար է անտեսել այդ ազգի [հայերի] մոտ կրթություն ստանալու անընդհատ ուժեղացող ձգտումը»³⁴:

Հայ եկեղեցու կառավարման մասին 1836թ. կայսեր կողմից հաստատված կանոններով հայերին թույլ է տրվել ունենալ երկու տիպի դպրոցներ՝ թեմական հոգևոր սեմինարիա՝ յուրաքանչյուր թեմում, և տարրական դպրոցներ՝ եկեղեցիներին ու վանքերին կից: Թեմական դպրոցները (6-ամյա դասընթացով) համարվում էին հոգևոր միջնակարգ ուսումնական հաստատություններ, որոնց հիմնական խնդիրն էր հայկական սովյալ թեմի եկեղեցիների համար հոգևոր պաշտոնյաների, հայկական ծխական դպրոցների համար ուսուցիչների պատրաստումը: Թեմական դպրոցներում ընդունվում էին հայկական եկեղեցական-ծխական երկդասյա դպրոցների շրջանավարտները: Դասավանդման ընթացքում կարևոր տեղ էր հատկացվում կրոնական և հայագիտական առարկաներին:

Հայկական եկեղեցական-ծխական դպրոցներում ուսուցանվում էին կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, վայելչագրություն, երգ, նկարչություն, իսկ աղջիկների դպրոցներում՝ նաև ձեռագրություն:

³³ М-ко Н.Н., Грузино-армянские претензии и Закавказская революция, Киев, 1906, сс. 13-14.

³⁴ Նույն տեղում, էջ 9:

գործ: Երկդասյա դպրոցներում ավելանում էին Հայաստանի աշխարհագրությունը, բնագիտությունը, հայոց պատմությունը, Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը: Սակայն հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության դասավանդումը 1889թ. արգելվեց:

Մինչև 1885թ. գործում էին նաև մի քանի հայկական արական և իգական միջնակարգ դպրոցներ: Սակայն ցարական կառավարության կարգադրությամբ 1886թ. դրանք վերածվեցին երկդասյա տարրական դպրոցների: Շատ տարիներ հետո մեծ ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ Թիֆլիսի Գայանյան և Հովնանյան դպրոցներում վերականգնել միջնակարգի դասընթացը: 1897թ. վերջերից մինչև 1905թ. հայկական ոչ մի ծխական դպրոց չի գործել:

Թիֆլիսի նշանավոր ուսումնական հաստատություններն էին Ներսիսյան, Գայանյան օրիորդաց միջնակարգ և Մարիամյան-Հովնանյան դպրոցները:

Հայկական միջնակարգ դպրոցների մեջ ամենանշանավորը *Ներսիսյան դպրոցն* էր: Այն հիմնվել է 1824թ. Ներսես Աշտարակեցու ջանքերով: Առաջին տեսուչն է եղել հայ ականավոր գրող և մանկավարժ Հարություն Ալամդարյանը: Այս շրջանը համարվել է դպրոցի կյանքի ամենաբեղուն շրջանը: Տեսուչներ են եղել Գ.Պատկանյանը, որը ստեղծել է գիշերօթիկ բաժին, Պ.Շանշյանը, Ս.Նազարյանը, որն առանձին ուշադրություն է դարձրել աշխարհաբարի ուսուցմանը, Ս.Մանդինյանը, որի նախաձեռնությամբ 1877-ին բացվել է 6-րդ դասարանը և դպրոցը դարձել է լրիվ միջնակարգ:

Այստեղ են ուսանել Պերճ Պոռոշյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Խաչատուր Աբովյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփանոս Նազարյանը, Երվանդ Լալայանը և հայ մշակույթի շատ ու շատ այլ ականավոր գործիչներ:

Մինչև 1876թ. դպրոցը եղել է 5-դասարանյան կազմով, իսկ այդ տարին ավելացել է 6-րդ դասարանը: 1873թ. դպրոցն ունեցել է 16 ուսուցիչ, 240 աշակերտ, 1882-ին՝ նույնքան ուսուցիչ, 442 աշակերտ: 1906-07թթ. դպրոցն ունեցել է 3 նախապատրաստական բաժանմունքներ (Ա, Բ, Գ) և 7 հիմնական դասարաններ, ինչպես նաև առանձին բաժանմունքներ Հավլաբարում և Սոլովակում: Աշակերտների ընդհանուր թիվը հասել է 1071-ի, որոնց մեծ մասը եղել է Թիֆլիսից (247 հոգի), Թիֆլիսի նահանգից (111 հոգի), եղել են նաև Գանձակի նահանգից՝ 70, Երևանի նահանգից՝ 86, Բաքվի նահանգից՝ 12, Բաթումի և Քուրթայիսի նահանգներից՝ 4, Կարսի շրջանից՝ 12, Հյուսիսային Կովկասից և Ռուսաստանից՝ 15, Պարսկաստանից՝ 26 և Թուրքիայից՝ 46 հոգի³⁵:

Ներսիսյան դպրոցը համազգային ուսումնական հաստատություն էր՝ միջնակարգ լրիվ դասընթացով:

Հայ նշանավոր կրթօջախներից էր 1869թ. մի խումբ հայրենասերների նախաձեռնությամբ հիմնադրված Թիֆլիսի *Գայանյան օրհորդաց միջնակարգ դպրոցը*: 1873թ. այն ունեցել է 19 ուսուցիչ, 97 աշակերտ: 1875թ. Մուղնու եկեղեցու բակում դպրոցի համար կառուցվում է նոր շենք: Այդ թվականից էլ այն վեր է ածվում միջնակարգի՝ 6-դասարանյան կազմով. ուներ 23 ուսուցիչ, 152 աշակերտուհի: 1879թ. մեծ հանդիսավորությամբ նշվել է դպրոցի գոյության առաջին տասնամյակը: 1881թ. դպրոցն ուներ 34 դասատու, 280 աշակերտուհի: 1885թ. այն փակվել է, իսկ 1886-ին վերաբացվելուց հետո դարձել է երկդասյա, ուր ավանդվել են՝ սրբազան պատմություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, ձեռագործ: Թիֆլիսի Գայանյան օրհորդաց դպրոցում 1869-1879թթ. 49 հոգի աշխատել է անվարձահատույց: Նրանց թվում էին նշանավոր մտավորականներ Գրիգոր Արծրունին, Պետրոս Սիմոնյանը, Ստեփանոս Պալասանյա-

³⁵ *Խուրդյան Ս. Գ.*, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 590:

նր, Մեղրակ Մանդինյանը, Արշակ Նահապետյանը, Գայանե Հովհաննիսյանը, Սոֆյա Բաբայանը, Նիկողայոս Խոսրովյանը, Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Արգար Հովհաննիսյանը, Աբիստղոմ Հովհաննիսյանը և ուրիշներ: 1896թ. ցարական կառավարության կողմից հայկական դպրոցների փակման ժամանակ առաջին հարվածը հասցվել է այս դպրոցին: 1905-ին այն կրկին վերաբացվել է: 1911թ. Թիֆլիսի ծխական դպրոցների մեջ միակն է եղել միջնակարգ դասընթացով:

Ուշագրավ է *Մարիամյան-Հովնանյան դպրոցի* բացման նախապատմությունը: Թիֆլիսի հայտնի մեծահարուստ, իսկական պետական խորհրդական Հովհաննես Ստեփանի Անանյանը 1876թ. մի նամակով դիմում է կաթողիկոսին՝ հայտնելով սեփական միջոցներով հայ աղջիկների համար դպրոց բացելու իր ցանկությունը: Հայ մեծահարուստը մի քանի պայման է դնում և խոստանում հոգալ բոլոր կարիքները: Պայմաններից են լինում բոլոր առարկաների դասավանդումը հայոց լեզվով, նաև պարտադիր առարկաների ցանկում հայոց լեզվի, հայոց կրոնի և հայ եկեղեցու պատմության ներառումը: Պետերբուրգում հրավիրվում է նիստ, և մինիստրների կոլեգիան իր համաձայնությունն է տալիս Անանյանի առաջարկած պայմաններին՝ միայն առարկաների ցանկում ավելացնելով Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը, որոնք պետք է դասավանդվեին ռուսաց լեզվով³⁶: Այսպես, 1877թ. դպրոցը բացվում է: Անանյանի պայմանի համաձայն, այն ղեկավարվում էր հայ հոգևոր իշխանության և Թիֆլիսի հայ բնակչության կողմից ընտրված հոգաբարձական խորհրդի կողմից: 1884-ին այն արդեն միջնակարգ դպրոց էր՝ 5-դասարանյան կազմով: 1881թ. ունեցել է 14 ուսուցիչ, 170 աշակերտուհի, իսկ 1910-1911 ուստարում՝ 24 ուսուցիչ, 345 աշակերտուհի: Սակայն հայ դպրոցների փակման արհավիրքը չի շրջանցում նաև այս դպրոցը: Այն փակվում է 1885թ., վերաբացվում մեկ տարի անց, 2-րդ անգամ

³⁶ Նույն տեղում, էջ 577:

փակվում է 1895թ., վերաբացվում միայն 1900թ. սակայն ոչ որպես ազգային դպրոց: Միայն 1905թ. այն անցնում է կրկին հայ հոգևոր իշխանությունների իրավասության տակ և նորից դառնում հայկական ազգային դպրոց: 1889թ. այստեղ հայոց լեզու է դասավանդել Մանուկ Աբեղյանը: Երկար տարիներ այստեղ բեղմնավոր աշխատանք են կատարել նաև Մակար Եկմայանը, Դերենիկ Դեմիրճյանը, Իսահակ Հարությունյանը, Խաչատուր Կանայանը և ուրիշներ, 1911թ. տեսուչ է ընտրվել նշանավոր հայագետ Ստեփանոս Մալխասյանը:

Թիֆլիսում գործել են նաև մի շարք այլ նշանավոր դպրոցներ և նախակրթարաններ, որոնցից են Բեթղեհեմի Ս.Աստվածածին եկեղեցու օրիորդաց Մարիամյան դպրոցը և նախակրթարանը (1863): Հայ աղջիկների համար բացված ամենաառաջին դպրոցներից է, որտեղ 1866թ. մոտ քառասուն սովորող է եղել: 1884թ. եկեղեցուն կից գործել է նաև մանկապարտեզ-նախակրթարան, որը 1885թ. փակվել է հայ բոլոր դպրոցների հետ միասին: Հիշատակության են արժանի նաև Բեթղեհեմի Ս.Աստվածածին եկեղեցու արական ծխական (1858), Զրկինյանց Ս.Կարապետ եկեղեցու արական ծխական, Զրկինյանց Ս.Կարապետ եկեղեցու Եղիսաբեթյան իգական (1866) դպրոցները, Թիֆլիսի հայկական մասնավոր օրիորդաց գիմնազիան (1885), Հավլաբարի Հռիփսիմյան օրիորդաց (1866), Հավլաբարի Ս.Մինաս եկեղեցու Իզմիրյան արական (1848), Հավլաբարի Շամբորեցոց Ս.Գևորգ եկեղեցու (1861), Մուղնու Ս.Գևորգ եկեղեցու արական միջնակարգ դպրոցները (1849), Նորաշեն Ս.Աստվածածին եկեղեցու Մարիամյան օրիորդաց դպրոցը (1866) և այլն³⁷:

Հասարակական-քաղաքական, մշակութային կյանք

XIXդ. սկզբից Թիֆլիսը դարձավ հայ ազատագրական պայքարի կենտրոն: 1827թ. Ն.Աշտարակեցու, Հ.Ալամդարյանի ջանքերով ստեղծվում են հայ կամավորական ջոկատներ, որոնք մասնակցում են Արևելյան Հայաստանի ազատագրմանը: 1862թ. Թիֆլիսում ստեղծ-

³⁷ Նույն տեղում, էջ 560-591:

վում է Զեյթունի ապստամբությանն աջակցող կումիտե, որը նյութական միջոցներ է հայթայթում գեյթունցիների համար: 1890թ. այստեղ է հիմնադրվում ՀՅԴ կուսակցությունը, իսկ 1912-1917թթ. գործել է Հայոց Ազգային բյուրոն, 1917-1918թթ.՝ Հայոց Ազգային խորհուրդը:

Հայկական մամուլ. Թիֆլիսում առաջին հայկական տպարանը հիմնվել է 1823թ. Ներսիսյան դպրոցին կից: Մինչև 1920թ. այստեղ գործել է ավելի քան 30 հայկական տպարան: Թիֆլիսում են առաջին անգամ լույս տեսել Խ.Աբովյանի, Պ.Պոռշյանի, Դ.Աղայանի, Գ.Սունդուկյանի, Բաֆֆու և այլոց երկերը: XIXդ. երկրորդ կեսին բուռն վերելք ապրեց հայկական մամուլը: 1846թ. թիֆլիսահայ առաջին պարբերականի («Կովկաս») հրատարակությունից հետո մինչև XXդ. սկիզբ Թիֆլիսում լույս են տեսել համահայկական նշանակություն ունեցող շուրջ 200 անուն քաղաքական, գրական-գեղարվեստական, մանկավարժական և այլ օրաթերթեր, շաբաթաթերթեր ու ամսագրեր: Թիֆլիսում հրատարակվում էին «Փորձ», «Մուրճ», «Մշակ», «Արձագանք», «Արոճ», «Նոր Դար», «Մանկավարժական թերթ», «Թատրոն», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականները:

Հայալեզու մամուլի բուռն վերելքը Թիֆլիսում նպաստեց նաև տեղի հայության շրջանում գրական լեզվի տարածմանը, որի հիմքում ընկած էր արարատյան բարբառը: Սակայն արարատյան բարբառի ազդեցությունը թիֆլիսյան բարբառի վրա սկսվել էր ավելի վաղ, երբ 1779թ. Հերակլը մեծ քանակությամբ հայեր Երևանից վերաբնակեցրեց Թիֆլիսի Հավլաբար թաղամասում: Մեծ էր նաև թատերագիր Գ.Սունդուկյանի դերը, որը, ստեղծագործելով իրեն հարազատ թիֆլիսյան բարբառով, աշխարհաբարի ազդեցությամբ ներմուծում էր նաև գրական լեզվի բազմաթիվ ձևեր³⁸:

³⁸ *Кочоян А.Н.*, Отражение структурных особенностей тбилисского диалекта в произведениях Г.Сундукяна, Автореф. канд. дисс. Ереван, 1958, с. 5. Հղումն ըստ Волкова Н.Г., Этнические процессы в Закавказье в XIX-XX вв. // Кавказский этнографический сборник. Вып. 4. М., 1969, с. 33.

XIXդ. 80-ականներից ցարական վարչակարգի քաղաքականությունն ընդունեց ակնհայտ հակահայկական ուղղվածություն, ինչը դրսևորվեց ոչ միայն հայկական դպրոցների դեմ լայնածավալ արշավի իրականացմամբ, այլև հայ մամուլի դեմ գրաքննության խստացմամբ: Այլևս արգելվեց գործածել *Հայկական հարց*, ինչպես նաև *Հայաստան* կամ *Արմենիա* բառերը: 1896թ. Հայկակը (Ա.Արփիարյանը) «Մշակ»-ին իր ուղարկած հոդվածում հայտնում է, որ Կ.Պոլսի լրագրերն «այլևս իրավունք չունեն *Արմենիա* կամ *Հայաստան* բառերը գործածելու, այլ փոխարենը գործ են ածում հետևյալ ծիծաղելի պարբերությունը՝ «հայ կրոնով օսմանցիներից բնակեցված երկիր»: Արփիարյանի այդ հոդվածը մերժվում է Թիֆլիսում ցարական գրաքննության կողմից, ինչը նշանակում է, որ այդ բառերից վախենում էին ոչ միայն թուրքական, այլև ռուսական իշխանությունները³⁹:

Գրականություն. 1899թ. Թումանյանի թիֆլիսյան բնակարանում է հիմնվել «Վերնատուն» գրական խմբակը, որն ընդամիջումներով գոյատևել է մինչև 1908թ.: Այն բնույթով և բովանդակությամբ առաջինն էր արևելահայ իրականության մեջ, քանզի այն թե՛ գրական խմբակ էր, թե՛ գրական կյանքը կազմակերպող սալոն և թե՛ գրական միավորում⁴⁰: Խմբակի անդամները (Ղ.Աղայան, Ա.Իսահակյան, Լ.Շանթ, Դ.Դեմիրճյան) կազմակերպել են ընթերցումներ, գրական զրույցներ, տպագիր ու անտիպ երկերի քննարկումներ, հայ և համաշխարհային գրականությանն ու արվեստին նվիրված դասախոսություններ, զբաղվել են հայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությամբ: Այցելուների թվում են եղել Ն.Աղբալյանը, Պ.Պոռոջյանը, Ա.Շիրվանզադեն, Նար-Դոսը, Վ.Փափազյանը, Վ.Տերյանը, Լեոն, Ս.Լիսիցյանը, Մ.Թումանյանը, Գ.Բաշինջաղյանը և ուրիշներ:

³⁹ *Գևորգյան Լ.Մ.*, Գրիգոր Արծրունու «Մշակը» և գրաքննությունը (1872-1892), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1990, թիվ 9, էջ 4:

⁴⁰ *Բայրամյան Հ.*, Թիֆլիսի հայ գրական կյանքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1992, թիվ 2, էջ 196:

Ճարտարապետություն. VIIդ. հայերը մեծ դեր են ունեցել Թբիլիսիի կառուցապատման գործում: Բազմաթիվ պաշտամունքային և աշխարհիկ շենքերում, երբեմն բացառիկ լուծումներով, հարազատորեն վերարտադրվել են հայկական ավանդական ճարտարապետության հորինվածքներն ու ոճային առանձնահատկությունները: XIXդ. հայկական աշխարհիկ շինություններից ուշագրավ են Ն.Աշտարակեցու՝ Թիֆլիսում կառուցած եռահարկ առաջնորդարանը, հայկական ուսումնարանը (1885), Հավլաբարի քաղաքատիպ բնակելի շենքերից Ռամազյանների տունը (1872) և այլն: XXդ. սկզբին Թիֆլիսում են աշխատել հայտնի ճարտարապետներ Մ.Օհանջանյանը, Գ.Տեր-Միքելյանը («Մաժեստիկ»), Տեր-Սարկիսովը (փոխարքայի գրասենյակի շենքը, բնակելի տներ), Պ.Զուրաբյանը (Ներսիսյան դպրոցի նոր շենքը, հիվանդանոցներ), Ղ.Սարգսյանը (Զուբալովի ժողովրդական տունը, այժմ՝ Կ.Սարջանիշվիլու անվան վրացական թատրոն) և այլն⁴¹:

Կերպարվեստ. XVII – XVIIIդդ. Թիֆլիսում ծաղկում էր ապրում հայ կերպարվեստը: Այդ շրջանում այստեղ են ստեղծագործել Հովնաթանյան ընտանիքի նկարիչները: Կազմակերպվել են՝ 1868-ին Հ.Այվազովսկու, 1883-1916-ին՝ Գ.Բաշինջաղյանի գործերի ցուցահանդեսներ: 1916թ. հիմնադրվել է Հայ արվեստագետների միությունը, որի կազմակերպմանը մասնակցել են Ե.Թադևոսյանը, Փ.Թերլեմեզյանը, Մ.Սարյանը, Վ.Գայֆեճյանը, Լ.Գյուրջյանը և ուրիշներ: Ծնունդով, ստեղծագործական կյանքի որոշակի շրջաններով կամ ամբողջապես XIX-XXդդ. Թբիլիսիի հետ են կապված Հ.Շամշինյանը, Գ.Շարբաբյանը, Լ.Ասլամազյանը, Ե.Քոչարը, Ա.Բաժբեուկ-Մելիքյանը, Վ.Հ. և Ռ.Էլիբեկյանները, Մ.Փարաջանովը և ուրիշներ, որոնցից շատերի արվեստը կազմավորել է հայ կերպարվեստի պատմության մեջ ընդունված «թիֆլիսյան դպրոց» հասկացությունը⁴²:

⁴¹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003, էջ 572:

⁴² Նույն տեղում, էջ 574:

Երաժշտություն. XVIIIդ. սկզբից Թիֆլիսը եղել է հայ երաժշտական մշակույթի կենտրոն, որտեղ կազմավորվել է վիրահայ աշուղական դպրոցը՝ Սայաթ-Նովա, Շամշի Մեքո, Ֆրեյդուն, Քիչիկ-Նովա և ուրիշներ: Կյանքի վերջին շրջանում այստեղ է ստեղագործել Ջիվանին: 1885-ին հայկական առաջին խմբերգային համերգն է տվել Ք.Կարա-Մուրզան, Ներսիսյան դպրոցում ստեղծվել են երգչախմբեր (ղեկ.՝ Մ.Եկմայան), Կ.Ալիխանովի ջանքերով հիմնվել են երաժշտական դպրոց (1876), երաժշտական ուսումնարան (1886): 1908-1912թթ. Ռ.Մելիքյանի նախաձեռնությամբ ստեղծվել է Երաժշտական լիգան, 1907-ին՝ Արևելյան երաժշտական ընկերությունը, 1912-ին՝ Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը, 1917-ին՝ Հայոց երգչախմբային ընկերությունը, 1919-ին՝ Հայ երաժիշտ-տեսաբանների «Կոմիտաս» ընկերությունը⁴³:

Թատրոն. Թբիլիսիում հայկական թատրոնի սկզբնավորման պատմությունը սկսվում է 1824թ., երբ Ներսիսյան դպրոցում սկսել էին բեմադրել ներկայացումներ հայերեն լեզվով՝ Հ.Ալամդարյանի ղեկավարությամբ: 1836-ին հիմնադրվել է «Շերմազանյան դարբաս» թատերասրահը, 1851-ին՝ Թամամշյան թատրոնը: Արդեն 1856թ. այստեղ հիմնվել էր արհեստավարժ հայկական թատրոն՝ Գևորգ Չմշկյանի գլխավորությամբ: Թատրոնի հետ համագործակցել են հայ թատերագրության հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը, թատերական գործիչներ Պ.Ադամյանը, Սիրանույշը, Հասմիկը, Ջաբելը, Գ.Պետրոսյանը, Ա.Հրաչյանը և ուրիշներ: Հայ թատրոնի առաջընթացին նպաստել են Հայոց դրամատիկական ընկերությունը (1901), Հայարտունը:

Թիֆլիսի գավառ

Հայերը մեծ թիվ էին կազմում նաև Թիֆլիսի գավառում: 1886թ. տվյալներով, այստեղ (առանց քաղաքի) բնակվում էր 11.944 հայ (2044 տուն) կամ ընդհանուր բնակչության 18%-ը: Գավառում հայությունը տեղաբաշխ-

⁴³ Նույն տեղում, էջ 575:

ված էր հետևյալ գյուղական հասարակություններում⁴⁴. Դաղեթ-Խաչեն՝ 388 տուն, Կումիս՝ 213 տուն, Կոթի (Կոդա)՝ 135 տուն, Թելեթ՝ 126 տուն, Շամշուղա (Սամշվիլդ)՝ 110 տուն, Դուռնուկ՝ 90 տուն, Ծղներթ՝ 90 տուն, Սագարեջո՝ 63 տուն, Լիլո՝ 60 տուն և այլն⁴⁵: 1897թ. մարդահամարով հայերի թիվը գավառում (ներառյալ Թիֆլիսը) ըստ կրոնի կազմում էր 64.008 (որից 382-ը՝ կաթոլիկ), ըստ մայրենի լեզվի՝ 57.933 մարդ⁴⁶:

Արդեն 1913թ. տվյալներով, Թիֆլիսի գավառում բնակվում էր 157.935 հայ, այդ թվում 149.894-ը՝ լուսավորչական, 7293-ը՝ այլ դավանանքի (հիմնականում կաթոլիկ), 748-ը՝ ուղղափառ⁴⁷: Իսկ 1914թ. տվյալներով, հայերի թիվը գավառում 151.142 էր, այդ թվում 141.630-ը՝ լուսավորչական, 8690-ը՝ այլ դավանանքի (կաթոլիկ), 822՝ ուղղափառ⁴⁸:

Ժողովրդագրական պատկեր. Ստորև ներկայացնում ենք Թիֆլիսի գավառի հայկական և հայաբնակ գյուղերն ըստ 1886թ. ընտանեկան ցուցակների:

Աղյուսակ 2

Թիֆլիսի գավառի հայկական և հայաբնակ գյուղերն ըստ 1886թ. տվյալների⁴⁹

	Գյուղեր	Ծուխ	Հայ (շունչ)	Արական	Իգական
1.	Դաղեթ-Խաչեն կամ Մեծ Դաղեթ	306	1693	978	715
2.	Փ. Դաղեթ	5	21	15	6
3.	Վարխունա	31	265	141	124
4.	Վաշլևան (հայ.՝ Խնձորավան)	76	408	222	186
5.	Դանիլովկա	14	106	58	48
6.	Կումիս	213	1337	717	620

⁴⁴ Նշենք, որ պաշտոնական վիճակագրությամբ նշված են թե՛ գյուղական հասարակությունները, թե՛ առանձին գյուղերը: Որպես կանոն, մի քանի գյուղեր կազմում են մեկ գյուղական հասարակություն: Առանձին գյուղերի հայ բնակչության թիվը կներկայացնենք ստորև, աղյուսակով:

⁴⁵ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, сс. 13-19.

⁴⁶ Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905, сс. 74-77.

⁴⁷ Кавказский Календарь на 1914 год, Тифлис, 1913, с. 131.

⁴⁸ Кавказский Календарь на 1915 год, Тифлис, 1914, с. 247.

⁴⁹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, сс. 13-19.

	Գյուղեր	Ծուխ	Հայ (շունչ)	Արական	Իգական
7.	Թելովանի	6	49	23	26
8.	Դուռնուկ	76	580	323	257
9.	Կոսիշ	14	100	54	46
10.	Բոզվի	12	46	33	13
11.	Շամշուկդա	110	681	387	294
12.	Կողա	84	423	228	195
13.	Սերգիսակոյե	26	106	61	45
14.	Շինդիս	61	422	245	177
15.	Մ. Թելեթ	62	401	220	181
16.	Փ. Թելեթ	30	244	144	100
17.	Սողանլոյ	22	82	52	30
18.	Ծղնեթ	81	533	309	224
19.	Ծալասկուրի	9	58	32	26
20.	Սամղրետ	27	211	111	100
21.	Տարախմելա	19	161	100	61
22.	Մեծ Թոնեթ	26	198	115	83
23.	Փոքր Թոնեթ	60	331	187	144
24.	Արդիսուբան	25	182	100	82
25.	Էնագեթի Մ.	59	361	194	167
26.	Էնագեթի Փ.	26	250	147	103
27.	Մուխաթ	41	294	167	127
28.	Մարաբդա	2	11	5	6
29.	Դիդումի	14	53	30	23
30.	Լիսի	14	132	73	59
31.	Մանգլիս	7	13	12	1
32.	Ախալսոփել	22	173	100	73
33.	Լիլո (Մեծ ու Փոքր)	60	127	101	26
34.	Մանավի	36	187	113	74

	Գյուղեր	Ծուխ	Հայ (շունչ)	Արական	Իգական
35.	Մարտոզով	16	52	33	19
36.	Նինոծմինդա	32	164	93	71
37.	Սագարեջո	63	390	220	170
38.	Էրտիս	7	46	24	22
39.	Բորբալո	11	63	33	30
40.	Նախշիր-գորի	12	83	46	37
41.	Օբրոդանա	11	78	42	36
42.	Գլյան	27	175	89	86
43.	Նիրի	27	149	77	72
44.	Սարտիս ճալա	7	39	24	15
45.	Վեձիսի	8	47	18	29
46.	Ծինծղարո	4	8	6	2
47.	Սամաղո	8	18	14	4
48.	Կարայազ	8	12	8	4

Սղնախի գավառ

Սղնախը կառուցել է վրաց թագավոր Հերակլ II-ը: Այստեղ XVIIIդ. 60-ական թվականներին մեծ թվով հայեր գաղթել են Արցախից, Գանձակից: Ճանապարհորդ Գիլդենշտադտը նշում է, որ Սղնախի բնակչությունը 1772թ. բաղկացած էր 84 հայ իշխաններից: Նրանք թեն բնակվում էին հիմնականում ամրոցից դուրս, սակայն մշտապես պաշտպանում էին Սղնախը՝ Թիֆլիսից ու Գորիից հետո հաջորդ անհաղթ ամրոցն ամբողջ Վրաստանում⁵⁰: 1821թ. տվյալներով, Սղնախում բնակվում էին 377 տուն հայեր, իսկ ռուսներն ու վրացիները միասին կազմում էին 12 տուն: 1886թ. տվյալներով, Սղնախ քաղաքում բնակչության կեսից ավելին հայեր էին. այստեղ բնակվում էր 5854 հայ, իսկ բնակչության ընդհանուր քանակն էր 10.604⁵¹: Նույն

⁵⁰ Гильденштедт И.А., Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 200.

⁵¹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, с. 10.

թվականին ամբողջ Սղնախի գավառում հայերի թիվը կազմում էր 10.067 մարդ կամ բնակչության 11.4%-ը⁵²:

XIXդ. վերջին Սղնախում կային հայկական երկու եկեղեցի՝ Ս.Կարապետ և Ս.Գևորգ (1793), մեկ մատուռ, երկու դպրոց, մեկ տպարան: Իսկ ընդհանուր գավառում՝ 15 հայկական եկեղեցի, 14 ծխական դպրոց, դրանց թվում են Լագոդեխ ավանի, Կակաբեթ, Վելիսցիխե գյուղերի արական և իգական ծխական դպրոցները⁵³: 1897թ. մարդահամարով գավառում (քաղաքը ներառյալ) բնակվում էր ըստ կրոնի՝ 9346 հայ (որոնցից միայն 17ը՝ կաթոլիկ), իսկ բուն քաղաքում՝ 3816, ըստ մայրենի լեզվի՝ 6392 (այդ թվում քաղաքում՝ 2536)⁵⁴: 1913թ. տվյալներով, Սղնախի գավառում բնակվում էր 16.052 հայ⁵⁵: Իսկ 1914թ. տվյալներով, հայերի թիվը 14.526 էր, այդ թվում 14.436-ը՝ լուսավորչական, 90-ը՝ ուղղափառ⁵⁶: Նույն տարին Սղնախ քաղաքում հաշվվում էր 9002 հայ, բոլորը՝ լուսավորչական: Սղնախը մինչև 1930-ականները հիմնականում եղել է հայաբնակ:

Աղյուսակ 3

Սղնախի գավառի հայկական և հայաբնակ գյուղերն ըստ 1886թ. տվյալների⁵⁷

	Գյուղեր	Ծուխ	Հայ	Արական	Իգական
1.	Ախաշենի	18	107	55	52
2.	Բաքուրցիխե	15	72	45	27
3.	Վեջինի	20	113	61	52
4.	Վելիսցիխե	354	1862	1014	848
5.	Գուրջասանի	46	276	156	120
6.	Քալաքի	5	22	14	8

⁵² Նույն տեղում, էջ 97-100:

⁵³ *Խուրդյան Ս. Կ.*, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 605-608:

⁵⁴ Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905, с. 74-77.

⁵⁵ Кавказский Календарь на 1914 год, Тифлис, 1913, с. 127.

⁵⁶ Кавказский Календарь на 1915 год, Тифлис, 1914, с. 247.

⁵⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, с. 17-20.

	Գյուղեր	Ծուխ	Հայ	Արական	Իգական
7.	Կարդանախի	13	71	43	28
8.	Մուկուզանի	35	175	85	90
9.	Չումլակի	13	105	50	55
10.	Բողբե-Ջուրաբաանի	15	30	14	16
11.	Ջիմիթի	8	48	20	28
12.	Ջիարո-Կաճրեթի	6	35	19	16
13.	Կակաբեթի	50	376	203	173
14.	Կանդաուրի	61	360	190	170
15.	Կողալո	24	123	82	41
16.	Մաղարո	10	45	28	17
17.	Փխովելի	12	42	27	15
18.	Ճալաուբանի	11	77	45	32
19.	Անագա	22	80	48	32
20.	Բողբիսխեվի	1	25	7	18
21.	Վակիրի	22	63	41	22
22.	Ջուղաանի	4	19	13	6
23.	Թիբաանի	11	55	48	7
24.	Վ. Մաճղաանի	4	12	6	6
25.	Միրզաանի	16	19	5	14

Թելավի գավառ

Թելավը եղել է վրաց Բագրատունյաց երբեմնի մայրաքաղաքը: XVIդ. վերջին և XVIIդ. սկզբին այստեղ հաստատվել են մեծ թվով հայեր: Գիլդենշտադտը նշում է, որ Թելավում բազմաթիվ հայկական առևտրական խանութներ կան, որտեղ վաճառվում էին մետաքայա ապրանքներ⁵⁸: 1779թ. Հերակլի Երևան կատարած արշավանքի հետևանքով հայերի նոր խմբեր հաստատվեցին Թելավում:

⁵⁸ *Гильденштедт И.А.*, Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 222.

1801 թվականից Թելավն ունի քաղաքի կարգավիճակ: Այն գտնվում է Թիֆլիսից մոտ 147 կմ հեռավորության վրա: 1821թ. տվյալներով, Թելավում բնակվում էին 236 տուն հայեր, ռուսներն ու վրացիները միասին կազմում էին 74 տուն: Ամբողջ գավառում 1856թ. բնակվում էր 2706 հայ (ընդհանուր բնակչությունը 7068 էր): 1886թ. մարդահամարի տվյալներով, Թելավ քաղաքի բնակչության 81.9%-ը հայեր էին⁵⁹: Նույն թվականին ամբողջ Թելավի գավառում հայերի թիվը կազմում էր 12.611 մարդ կամ բնակչության գրեթե 20%-ը⁶⁰: 1897թ. մարդահամարով գավառում (քաղաքը ներառյալ) բնակվում էր ըստ կրոնի՝ 9560 հայ (որոնցից միայն 8-ը՝ կաթոլիկ), իսկ բուն քաղաքում՝ 6258 հայ, ըստ մայրենի լեզվի՝ 4754 հայ (այդ թվում քաղաքում՝ 3465)⁶¹: 1913թ. տվյալներով, Թելավի գավառում բնակվում էր 12.227 հայ, այդ թվում 12.147-ը՝ լուսավորչական, 69-ը՝ այլ դավանանքի (հիմնականում կաթոլիկ), 11-ը՝ ուղղափառ⁶²: Իսկ 1914թ. տվյալներով, հայերի թիվը գավառում 9407 էր, այդ թվում 9406-ը՝ լուսավորչական, 1-ը՝ ուղղափառ⁶³:

Գավառում գործել են հայկական եկեղեցիներ՝ Ս.Գևորգ (1786), Ս.Կարապետ (1797), Ս.Երրորդություն (1860-ական), Ս.Աստվածածին (1891-1899):

«Այստեղ հայկական դպրոցի գոյությունը հիշատակվում է դեռևս 1858-ից, իսկ 1860-ին Թելավի հայությանն օտարախոսությունից փրկելու նպատակով Խաչատուր քահանա Մուքիսայանը այնտեղ հիմնել է Վարդանյան ազգային արական վարժարան՝ արժանանալով Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Ա-ի օրհնության կոնդակին»⁶⁴:

⁵⁹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, с. 10.

⁶⁰ Նույն տեղում, էջ 97-100:

⁶¹ Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905, сс. 74-77.

⁶² Кавказский Календарь на 1914 год, Тифлис, 1913, с. 127.

⁶³ Кавказский Календарь на 1915 год, Тифлис, 1914, с. 247.

⁶⁴ Մաղախյան Վ., Վրաստանի հայկական դպրոցները, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 246:

Թելավում են գործել նաև Վարդանյան արական, Գայանյան իգական, Ձվելգավալ ավանի օրիորդաց, Ուրիաթուբանի գյուղական ծխական դպրոցները⁶⁵:

Աղյուսակ 4

Թելավի գավառի հայկական և հայաբնակ գյուղերն ըստ 1886թ. տվյալների⁶⁶

	Գյուղեր	Ծուխ	Հայ	Արական	Իգական
1.	Հին Գավազի	9	28	15	13
2.	Ենիսելի	5	8	7	1
3.	Կվարելի	53	173	102	71
4.	Կուչատանի	17	73	36	37
5.	Խաչմիանի	3	10	4	6
6.	Արթանի	10	27	18	9
7.	Նացարեուլի	46	126	77	49
8.	Սանիորե	39	118	59	59
9.	Փաշահանի	10	27	15	12
10.	Տուրիսցիխե	23	57	34	23
11.	Լալիակուրի	8	38	21	17
12.	Փշավելի	12	18	13	5
13.	Շաքրիանի	14	53	30	23
14.	Շիլդա	22	66	45	21
15.	Ակուռի	13	17	15	2
16.	Ալավերդի	8	30	16	14
17.	Գուլգուլի	5	32	18	14
18.	Իկալտո	6	18	11	7
19.	Կալաուրի	5	27	20	7
20.	Կիստաուրի	77	465	245	220
21.	Կոնդոլի	14	50	31	19
22.	Թոդնիանի	10	24	16	8
23.	Կուրդգեղաուրի	17	56	30	26
24.	Խորխելի	14	59	31	28

⁶⁵ Խուրդյան Ս.Գ., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 554-556:

⁶⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1983, сс. 21-25.

	Գյուղեր	Ծովա	Հայ	Արական	Իգական
25.	Արտոզանի	47	240	136	104
26.	Ռուխսալիբի	58	408	224	184
27.	Ուրիաթուբանի	162	828	451	377
28.	Ցինանդալի	38	173	109	64
29.	Շալաուրի	14	91	50	41
30.	Շաշիանի	17	62	39	23

Զաքաթալայի շրջան

1897թ. մարդահամարով շրջանում (քաղաքը ներառյալ) բնակվում էր ըստ կրոնի՝ 2133 հայ (որոնցից միայն 1-ը՝ կաթոլիկ), իսկ բուն Զաքաթալա քաղաքում՝ 1406 հայ, ըստ մայրենի լեզվի՝ 2100 հայ (այդ թվում քաղաքում՝ 1400)⁶⁷: 1913թ. տվյալներով, Զաքաթալայի շրջանում բնակվում էր 2824 լուսավորչական և 1 կաթոլիկ հայ⁶⁸: Իսկ 1914թ. տվյալներով, հայերի թիվն ամբողջ շրջանում 3002 էր, որից բուն քաղաքում՝ 2165⁶⁹: 1918թ. Զաքաթալան անցավ Ադրբեջանին և ամբողջովին հայաթափվեց:

⁶⁷ Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Троицкого, СПб., 1905, сс. 74-77.

⁶⁸ Кавказский Календарь на 1914 год, Тифлис, 1913, с. 119.

⁶⁹ Кавказский Календарь на 1915 год, Тифлис, 1914, с. 235.

III. ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ (1918 – 1921)

1918թ. անկախության հռչակումից հետո 400 հազար հայ (որոնցից մոտ 100.000-ը՝ վրացախոս) հայտնվեց Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմում: Այդ պահին նրանք կազմում էին Վրաստանի բնակչության մոտ 20%-ը:

Նույն թվականի օգոստոսին Վրաստանի ազգային խորհուրդը, որը ճանաչվեց որպես ժամանակավոր բարձրագույն օրենսդիր մարմին, որոշում կայացրեց իր կազմում ընդգրկել նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ մասնավորապես հայերին հատկացնելով պատգամավորական 10 տեղ⁷⁰: Վրաստանի Ազգային խորհրդում աշխատանքի համար լիազորվեցին Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի անդամները՝ սոցիալ-դեմոկրատներ Ա.Երզնկյան, Ս.Փիրումյան, Ա.Իվանյան, դաշնակցականներ Զ.Ն. Զորյան, Դ.Դավիթխանյան, Տ.Ավետիսյան, սոցիալիստ հեղափոխականներ Լ.Թումանյան, Ն.Թարխանյան և ՀՏԿ ներկայացուցիչներ Պ.Դոլուխանյան և Ա.Բարխուդարյան⁷¹:

Վրաստանում մեծ թիվ էր կազմում հայ գաղթականությունը՝ մոտ 200 հազար մարդ: Վերջիններս ապաստան էին գտել այստեղ թե՛ մինչև անկախացումը, թե՛ հետո, երբ թուրք-թաթարական հրոսակներն անընդհատ հարձակումներ էին գործում հայաբնակ շրջանների բնակչության վրա: Սկզբում հայ գաղթականներն ապրում էին հայկական գյուղերում, սակայն անկախության հռչակումից հետո վրաց նոր իշխանությունները, «երկիւղ կրելով, թէ այս վիճակում գաղթականութիւնը կարող է հաստատուել Վրաստանի հողի վրայ եւ այնտեղի հայկական տարրը զօրացնել»⁷², սկսեցին արգելքներ ստեղծել

⁷⁰ Մախյան Բ., Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918թ. օգոստոս – 1921թ. փետրվար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2011, թիվ 1, էջ 64:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Զամայան Ա., Հայ-վրացական կնճիռը, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2011, էջ 102:

նրանց համար: Այս քաղաքականությունն իր ցայտուն արտահայտությունը գտավ Նուխիի ու Արեշի կոտորածներից մազապուրծ գաղթականներին նորից Ադրբեջանին հանձնելու մեջ: Այդ մասին Ա.Ջամալյանը գրում է. «Քանի, քանի անգամ հայերը, որոնք, շնորհիվ իրենց երկրի աշխարհագրական դիրքի, հարաւից Հայաստանի եւ Վրաստանի դէմ ուղղւած հարուածների առաջին զոհը պիտի լինէին, պատապարան են գտել Վրաստանում: Կարելի է ասել, միակ դէպքը, երբ Վրաստանը ամուր փակեց իր դռները աղիտահար հայ ժողովրդի առաջ, տեղի ունեցաւ 1918 թուի ամառը, երբ Նուխուայ եւ Զաքաթաւլայի կոտորածից հրաշքով ազատուած 15.000 հայ ժողովուրդը, որ ապաւինել էր վրացական գթասրտութեանը, Նոյ Ռամիշվիլիի հրամանով սուիններով դուրս քշուեց իր ապաստարաններից, հալածուեց դէպի Ալազանի միւս ափը եւ մատնուեց թաթարական վոհմակների սրածութեանը»⁷³:

Վրաստանում ապաստան գտած հայ գաղթականների հոգածության բեռը փորձեց իր վրա վերցնել Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը (ՀԱԽ), սակայն ստեղծված ծանր պայմանների և սուղ միջոցների պատճառով նրան «այդպես էլ չհաջողվեց հիմնովին և լիակատար կարգավորել գաղթականության սննդի մատակարարման ու բժշկասանիտարական սպասարկման խնդիրները, ինչը նրանց միջավայրում զանգվածային մահվածության պատճառը դարձավ: 1918թ. հունիսից նոյեմբեր Բակուրիանի անտառներում սովից և համաճարակներից զոհվեց ավելի քան 18 հազար մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի շրջանում ապաստանած հայ գաղթականները»⁷⁴: Միաժամանակ վրաց հասարակական-քաղաքական վերնախավը թշնամական դիրք էր բռնել ՀԱԽ-ի դէմ և փորձում էր

⁷³ Նույն տեղում, էջ 12:

⁷⁴ Մախլյան Բ., Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918թ. օգոստոս – 1921թ. փետրվար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2011, թիվ 1, էջ 68:

տարածել այն համոզմունքը, թե «դեմոկրատական Վրաստանում» բոլոր ազգերի իրավունքները պաշտպանված են, ուստի առանձին ազգային խորհուրդների գոյությունն այլևս նպատակահարմար չէ:

1918-1921թթ. վրաց իշխանությունների քաղաքականությունն ընդհանուր առմամբ միտված էր Վրաստանում հայկական տարրի աճի կանխմանը: Այդ ծրագիրը նախ իրականացվում էր դեպի Վրաստան հայ գաղթականների հոսքի կասեցման միջոցով: Սակայն հարցը միայն գաղթականներով չսահմանափակվեց, այլ ընդգրկեց նաև դարերով այստեղ հաստատված հայությանը: Պետք է նշել, որ Վրաստանի իշխանությունների ցանկությունն առ այն, որ տեղի հայությունը տեղափոխվի Հայաստան, համապատասխանում էր Հայաստանի Հանրապետության ղեկավարների ծրագրերին, նաև հայ ազգային շահերին: Սակայն կար մի էական տարբերություն: Ինչպես նշում է Ա.Ջամալյանը, «տարբերութիւնը մեր եւ վրացիների մէջ այն էր, որ մենք ցանկանում էինք, որ Վրաստանի հայութիւնը վերադառնայ հայրենիք ոչ թէ իբրեւ ընչազուրկ գաղթականութիւն, այլ իբրեւ մի բարեկեցիկ տարր, որ կարող էր իր երկրի տնտեսութեանը եւ բարգաւաճմանը զարկ տալ: Ամէն տեղից դեպի Հայաստան էին դիմում նպաստի եւ օգնութեան կարօտ բազմութիւններ: Մենք ցանկանում էինք, որ Վրաստանից գոնէ հայութիւնը այլ վիճակով մեզ հասնէր: Ուրիշ կերպ էին մտածում վրաց ղեկավարները: Նրանք ձգտում էին այնպէս անել, որ Վրաստանի հայութիւնը չնչին փոխհատուցումով թողնի իր ինչքն ու ստացուածքը վրացիներին եւ մերկանդամ տուն դառնայ»⁷⁵:

Անկախացած Վրաստանում հայերի վիճակը ծանրացավ հատկապես հայ-վրացական կարճատև (1918թ. դեկտեմբեր) պատերազմի ընթացքում: Դեկտեմբերի 24-ին հրատարակվեց Վրաստանի խորհրդարանի օրենքը, որը մահապատիժ և գույքի բռնագրավում սահմանեց դավաճանության համար: Երկու օր անց Հայաստանի բոլոր

⁷⁵ Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիռը, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2011, էջ 125:

հպատակները համարվեցին ռազմագերիներ: Թիֆլիսում սկսվեցին հայերի տների անօրինական խուզարկություններն ու ձերբակալությունները: Սովյակի թաղամասում, որտեղ բնակվում էին ունևոր հայերը, շրջում էին միլիցիոներները և պահանջում որոշակի գումար, հակառակ պարագայում սպառնում էին ձերբակալել և նետել Մետեխի բանտ: Այդ օրերին ձերբակալված հայերի ճշգրիտ թիվը հայտնի չէ, սակայն այն 2.000-ից ավելի է: Այս իրադրությունը պահպանվեց նաև պատերազմից հետո: Հայտնի է, որ միայն 1919թ. հունվարի 5-ին, երբ միլիցիայի ստորաբաժանումները կրկին որսի էին դուրս եկել հայության դեմ, ձերբակալվեց մոտ 6.000 հայ⁷⁶:

Ծանր դրության մեջ էր հայտնվել նաև գավառահայությունը: Բոլնիս-Խաչենի, Շուլավերի, Թերթիծղարոյի (հայ. թարգմ.՝ սպիտակ աղբյուր, ռուս.՝ Բելի կյուլ, թուրք.՝ Աղբուլաղ), ինչպես նաև Լոռվա Շնող, Ուզունլար (Օձուն) և մյուս գյուղերի հայերն անասելի հալածանքների էին ենթարկվում վրաց միլիցիոներների և զինվորականների կողմից:

Հակահայ քաղաքականության արդյունքներից մեկը եղավ այն, որ ահաբեկված հայությունը գրեթե չմասնակցեց 1919թ. Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրություններին: Պատերազմի օրերին պաշտոնագուրկ եղան բազմաթիվ հայեր, որոնց դիրքերն այդպես էլ այլևս չվերականգնվեցին:

Թեև Հայոց Ազգային խորհրդի նպատակն էր Վրաստանի հայագրի քաղաքացիների համար արտերկրյա ինքնակառավարում հաստատելը, սակայն այն չիրագործվեց թե՛ ներքին տարածայնությունների, թե՛ վրաց իշխանությունների հակադիր կեցվածքի պատճառով:

⁷⁶ Նույն տեղում, էջ 168-175:

Հասարակական-քաղաքական կյանք

Հայ բարեգործական ընկերությունները. Վրաստանում (հիմնականում Թիֆլիսում) էին գործում մի շարք հայ բարեգործական ընկերություններ, որոնց թվում էին Կովկասյան Հայոց բարեգործական ընկերությունը, Կովկասյան Հայոց հրատարակչական ընկերությունը, Հայոց ազգագրական ընկերությունը, Հայուհյաց բարեգործական ընկերությունը և այլն: Հայաստանի անկախացումից հետո այս ընկերությունները որոշեցին իրենց գործունեությունն այսուհետ ծավալել Հայաստանում: Մեծ հաշվով վրացիները կողմ էին, որպեսզի հայ մտավորականությունը դուրս գա Վրաստանից և հաստատվի Հայաստանում, սակայն միաժամանակ անհաղթահարելի խոչընդոտներ էին հարուցում ընկերությունների գույքն ու դրամական հաշիվները Հայաստան տեղափոխելու հարցում⁷⁷: Հայոց ազգագրական ընկերությանը մեծ դժվարությամբ հաջողվեց Երևան տեղափոխել իր թանգարանը՝ հայկական տարազների հավաքածուն: Մյուս ընկերությունների գույքի և դրամական միջոցների վրա արգելքներ դրվեցին: Մելիք-Ազարյանի շքեղ տունը, որը նա ցանկանում էր կտակել Հայաստանի Հանրապետությանը՝ որպես Վրաստանում Հայաստանի դեսպանության շենք, կառավարության կողմից նույնպես բռնագրավվեց: Երբ խուզարկություն անցկացվեց Արամյանցի տանը, որտեղ տեղակայված էր Վիրահայ Ազգային խորհուրդը, բռնագրավվեցին խորհրդին պատկանող գույքն ու դրամները:

Մամուլ. Ծանր օրեր էին ապրում նաև հայկական մամուլի օջախները: Վրաց կառավարությունը փակեց Դաշնակցական մամուլի օրգաններ «Աշխատավորը» և «Նոր Հորիզոնը», ինչպես նաև սոցիալիստ հեղափոխականների (էսեռ) «Տրուդավոյե գնամյա» և «Կավկազակոյե սլովո» լրագրերը: Իրենց տպագրական գործը շարունակում էին «Մշակը», «Ժողովրդի ձայնը» և «Տիֆլիսկի լիստոկը»:

⁷⁷ Նույն տեղում, էջ 113:

Դպրոց

1918-1919 ուստարվա սկզբից Վրաստանում ազգայնացվեցին միջնակարգ դպրոցները (գիմնազիաները): Հայկական պետական գիմնազիայի կարգավիճակ ստացան Թիֆլիսում գործող Երրորդ արականը և Երրորդ իգականը, որոնցում այդ տարի ուսանում էր 2868 հայազգի աշակերտ⁷⁸: Բացի պետական դպրոցներից, Թիֆլիսում շարունակում էին գործել Ներսիսյան, Հովնանյան, Գայանյան միջնակարգ դպրոցները: Հայ դպրոցների շարքում, թերևս, ամենաապահովվածը Ներսիսյան դպրոցն էր: Այստեղ կտակարարների ընդհանուր թիվը 1918թ. հասել է 35-ի, իսկ նրանց կտակած ընդհանուր գումարը եղել՝ 192.122 ռ. 68 կ., որից տոկոսներ է ստացել մոտ 10.000 ռ.: Բավական է նշել, որ միայն 1917-1918 ուստարում դպրոցն ունեցել է մուտք՝ 412 հազարից ավելի, ելք՝ մոտ 400 հազար⁷⁹:

Սակայն գավառներում 1918թ. միջնակարգ հայկական ուսումնական հաստատություններ չկային: Բացառություն էր կազմում Թելավը, որտեղ հայ անհատների ջանքերով բացվել էր մասնավոր գիմնազիա: Հետագայում հաջողվեց գիմնազիա ունենալ նաև Գորիում⁸⁰: Հատկապես լուրջ մարտահրավերների առջև կանգնեցին ծխական դպրոցները:

Այդ տարիներին Վրաստանում իշխանության եկած մենշևիկները բռնել էին ազգային պետության կերտման ուղին: Հարկ է նշել, որ վրաց բոլշևիկների պատկերացումները գրեթե չէին տարբերվում իշխանության գլուխ կանգնած մենշևիկների մոտեցումներից: Այսպես, Վրաստանի հիմնադիր ժողովում ՎՍԴԲԿ իշխող ֆրակցիայի առաջնորդ Ռ.Արսենիձեն համարում էր, որ հայերն արդեն ունեն Հայաստանի Հանրապետությունում մշակութային օջախ, ուստի հարկ չկա համանման պայմաններ ստեղծել Վրաստանի հայության համար:

⁷⁸ Մախյան Բ., Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում. 1918-1920, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 1, էջ 182:

⁷⁹ Խուրդյան Ս.Կ., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 590:

⁸⁰ Մախյան Բ., Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում. 1918-1920, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 1, էջ 182:

Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ենթակայության տակ էին գտնվում 53 ժողովրդական դպրոցներ, որոնք ճանաչված չլինելով կառավարության կողմից՝ փաստորեն, օգտվում էին ինքնավարությունից, մինչև որ մշակութային ինքնավարության մասին օրենքով վճռվեք դպրոցական խնդիրը: Դրանցում 1919-1920 ուստարում ուսանում էր 5506 հայ աշակերտ⁸¹: Հաջորդ ուսումնական տարում դրանց թիվը 49 էր, որից 8-ը՝ Թիֆլիսում, մնացածը՝ գավառներում⁸²:

Վրաց իշխանությունների և Վրաստանի Հայոց ազգային խորհրդի միջև առանձին վիճաբանության առարկա էր գավառաբնակ վրացախոս հայերի շրջանում հայկական դպրոցների բացման հարցը: 1918-1919 ուստարվա սկզբին լուսավորության նախարարության կարգադրությամբ դպրոցներում վրացախոս հայ մանուկների համար դասավանդումը պետք է իրականացվեք վրացերեն լեզվով, իսկ հայերենի ուսուցումը մնում էր իբրև առանձին առարկա⁸³: Նան սուր հակասություններ էին ծագել այն պատճառով, որ վրացական կողմը ձգտում էր հայկական դպրոցները հանձնել զեմստվո՞ներին՝ տեղական ինքնակառավարման մարմիններին: Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը դեմ էր այս քայլին: Սակայն դպրոցների հարցն այդպես էլ մինչև խորհրդային կարգերի հաստատումը չլուծվեք:

⁸¹ Առավել մանրամասն տե՛ս Մախյան Բ., Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում. 1918-1920, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 1, էջ 185:

⁸² Նույն տեղում, էջ 186:

⁸³ Նույն տեղում, էջ 187:

IV. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ (1921-1991թթ.)

Խորհրդային Վրաստանը ԽՍՀՄ հանրապետությունների շարքում (բացառությամբ Հայկական ԽՍՀ-ի) ամենահայաբնակն էր: 1926թ. պաշտոնական մարդահամարով Անդրկովկասից դուրս՝ ԽՍՀՄ մնացած հանրապետություններում միասին վերցրած, բնակվում էր 235.000 հայ այն պարագայում, երբ միայն Վրաստանում հայերի թիվը 307.018 էր, որն էլ կազմում էր Վրացական ԽՍՀ բնակչության 11.6%-ը: Նրանցից քաղաքաբնակ էր 149.545 հայ, այսինքն՝ 48.7%-ը⁸⁴: Ուշագրավ է, որ ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից հայերը ներգաղթում էին ոչ միայն Հայաստան, այլև Վրաստան, ինչի արդյունքում ԽՍՀՄ-ում (Անդրկովկասից դուրս) հայերի թիվը 1926 թվականից մինչև 1939թ. նվազեց և հասավ 213.000-ի⁸⁵ (անշուշտ, հայերի թվի նվազման պատճառների շարքում պետք է հիշատակել նաև ստալինյան բռնաճնշումները):

Սակայն խորհրդային շրջանը նշանավորվում է ամբողջ Վրաստանում և հատկապես Թիֆլիսում, հայերի դիրքերի և թվաքանակի աստիճանական անկմամբ: Վրաստանի հայաթափմանն ուղղված քաղաքականության մեջ վրաց կոմունիստները գրեթե չէին տարբերվում վրաց մենշևիկներից: Ա.Ջամալյանը գրում է. «Վրաստանի անկախութեան շրջանին Թիֆլիսում ապրած ամեն մի հայ գիտե, թե վրաց սոցիալ-դեմոկրատները ինչքան ջանք էին թափում այդ քաղաքը օտար տարրերից (իմա՝ հայերից) «մաքրելու» եւ վրացական դարձնելու համար: Վրաց կոմունիստները ոչ մի կերպով յետ չեն մնում իրենց սոցիալ-դեմոկրատ հայրենակիցներից»⁸⁶: Նույն կարծիքն ունի Ս.Վրացյանը. «Հակառակ հայ կոմունիստների, վրաց կոմունիստների բնորոշ յատկութիւնը այն է, որ նրանք ուժգնօրէն համակուած են ազ-

⁸⁴ http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_26.php?reg=2330

⁸⁵ Максудов С., Миграции в СССР в 1926-1939 гг. - «Cahiers du monde russe», 1999, 40/4, p. 788.

⁸⁶ Ջամալյան, նշվ. աշխ., էջ 156:

գային և ազգայնական գաղափարներով և Վրաստանի ճակատագիրը շօշափող հիմնական հարցերում չեն տարբերում Վրաց միւս հոսանքներից»⁸⁷:

1939թ. մարդահամարով Վրաստանում հայերի թիվն աճ արձանագրեց, սակայն տեսակարար կշիռն էական փոփոխության չենթարկվեց: Այսպես, Վրաստանում բնակվում էր 415.013 հայ, որն էլ կազմում էր հանրապետության բնակչության 11.7%-ը: Թեև Վրաստանը խորհրդայնացվել էր, սակայն սոցիալիստ վրացիներն, ըստ էության, շարունակում էին 1918 թվականից մեկնարկած ազգային պետության կերտման նախագիծը: Եվ պատահական չէ, որ վրաց բոլշևիկ Բ.Մդիվանին, ինչպես նշում է Ա.Ավտորխանովը, «առաջարկում էր հայաթափել Թիֆլիսը, հայտարարելով, որ «Պրոլետարներ՝ բոլոր երկրների, միացե՛ք» կարգախոսն ամեննին էլ չի նշանակում. «Հայե՛ր, Թիֆլիսում հավաքվեք»⁸⁸:


Վրաց ազգային պետության ստեղծման նախագիծը հակասության մեջ էր մտնում հանրապետությունում դեռևս մեծ թիվ կազմող ազգային փոքրամասնությունների գոյության փաստի հետ: Այդ իսկ պատճառով վրաց իշխանությունները գործարկում էին ոչ վրացի բնակչության աստիճանական ուժացման՝ վրացացման քաղաքականությունը: Եթե վեր հանենք ժողովրդագրական պատկերը, ապա պարզորոշ կտեսնենք, որ խորհրդային շրջանում Վրաստանն աստիճանաբար վերածվում էր միաէթնիկ պետության (տե՛ս *Գրաֆիկ 1*).

⁸⁷ Վրացյան Ս., Հայաստանը և իր հարևանները, - «Հայոց հյուսիսային դարպասները. Չավխք, Լոռի», 4-րդ հատ., Եր.: «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 134:

⁸⁸ Авторханов А., Загадка смерти Сталина (заговор Берия), Франкфурт на Майне, 1976, с. 43.


Գրաֆիկ 1

Վրաստանի ժողովրդագրական կազմի դինամիկան (1926-2002թթ.)⁸⁹



Գրաֆիկ 2

Վրացիների և հայերի թվաքանակը Թիֆլիս քաղաքում 1803-2002թթ. (%-ով)⁹⁰



Հայերի թիվը կրճատվում էր թե՛ ձուլման, թե՛ արտագաղթի արդյունքում: Խորհրդային շրջանում Վրաստանից բազմաթիվ հայ երիտասարդներ էին գալիս Հայաստան՝ ուսանելու, որոնց մի զգալի հատված հետագայում վերջնական բնակություն էր հաստատում

⁸⁹ Նշենք, որ 2002թ. տվյալները ներկայացված են առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի, <http://www.geostat.ge/>

⁹⁰ Նույն տեղում:

Մայր հայրենիքում: Այսպես, 1928/29 ուսումնական տարում համալսարանում սովորող 1283 ուսանողներից 219-ը Վրաստանից էին, այն պարագայում, երբ ԽՍՀՄ տարբեր վայրերից ժամանածների թիվը միասին վերցրած ընդամենը 66 էր⁹¹:

Ստալինյան տարիներին նույնպես Թբիլիսիում բնակվող հայերի թիվը զգալիորեն կրճատվեց: Բազմաթիվ հայեր զոհ գնացին բռնաճշումներին: Իսկ 1941թ. Հայրենական պատերազմի ժամանակ Թբիլիսիից ռազմաճակատ մեկնեց 12.500 հայ, որոնցից 4300-ը չվերադարձավ:

Խորհրդային Վրաստանում հայերի ուժացմանը նպաստում էին բազմաթիվ չգրված օրենքներ, որոնց մասին երբեմն բարձրաձայնում են նույնիսկ վրացի հետազոտողները: Այսպես, վրացական ազգայնականության ժամանակակից ուսումնասիրողներից պրոֆեսոր Մարի Չխարտիշվիլին, կարևորելով հայերի դերը վրացական ինքնության կերտման գործընթացում, նշում է. «Խորհրդային տարիներին չդադարեց հայ-վրացական ինքնությունների միջև առկա լարվածությունը: Շարունակվեց հայերի մարզինալացումը, հայկական ազգանուններով անձինք չէին կարող պաշտոններ զբաղեցնել Խորհրդային Վրաստանում: Սակայն, երբ հայը փոխում էր իր ազգանվան վերջավորությունը վրացականով, նրան ավելի բարձր պաշտոն էին շնորհում, քան մեկ այլ վրացու»⁹²: Հետաքրքիրն այն է, որ այս տողերի հեղինակը սա որակում է որպես խորհրդային քաղաքականության արդյունք, թեև ակնհայտ է, որ խորհրդային իշխանությունների ճնշման պայմաններում ավելի տրամաբանական կլինեք ազգանունների ռուսականացումը, այլ ոչ վրացացումը: Մեր կարծիքով, այս գործընթացն առավելապես բուն Վրաստանում խմորվող վրացական ազգայնականության արդյունք է, ինչն իր գազաթնակետին հասավ հատկապես Խորհրդային Միության վերջին շրջանում: Այս փուլում Վրաստանի

⁹¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, Հայաստանի լուսավորության ժողկոմ, ց. 1, գ. 932, թ. 13.

⁹² Chkhartishvili M., "On Georgian Identity and Culture", Nine International Presentations, Tbilisi, 2009, p. 124.

միաեթնիկացմանն ուղղված տեղական իշխանությունների քաղաքականությունը դարձավ անթաքույց երևույթ: Այսպես, վերակառուցման տարիներին՝ 1989թ., «Ախալգազրդա կոմունիստի» (Երիտասարդ կոմունիստ) թերթի հունիսյան համարում տպագրվեց Ռ.Միշվելաձեի նամակը, որտեղ պարզ ասվում էր հետևյալը. «Վրաստանն իրական աղետի առջև է կանգնած՝ ոչնչացման... Մենք պետք է ամեն կերպ ձգտենք ավելացնել վրացիների տոկոսային կշիռը Վրաստանում (այժմ 65% է): Վրաստանը կարող է հանդուրժել հյուրերի 5%-ից ոչ ավելի... Մենք պետք է կասկածելի արագությամբ բազմացող օտար ազգերին համոզենք, որ Դավիթ Շինարարի հողի վրա նրանց համար պայմաններ չկան»⁹³: Պաշտոնական տվյալներով, 1989թ. թեև 859 հայ Ռուսաստանից տեղափոխվեց և հաստատվեց Վրաստանում, սակայն նույն թվականին 1312 հայ էլ Վրաստանից արտագաղթեց Ռուսաստան⁹⁴: Թբիլիսիի քաղաքագիտության ինստիտուտի գիտաշխատող Մ.Կոմախիան փաստում է. «Իշխանությունների ազգայնական հռետորաբանության արդյունքում 1990-ականների սկզբներին հայերը զանգվածաբար արտագաղթում էին դեպի Ռուսաստան և Հայաստան, իսկ մի մասն էլ՝ հետապնդումներից խուսափելու նպատակով, փոխում էր ազգանունները՝ հիմնականում վրացական: Նման երևույթներ մինչ այդ էլ գոյություն ունեին, սակայն 1990-ականների իշխանափոխությունից հետո դրանք դարձան զանգվածային»⁹⁵:

Թիֆլիսի գավառ (ներառյալ Թիֆլիս քաղաքը)

Թիֆլիսի գավառում (Թիֆլիս քաղաքով) 1926թ. մարդահամարի տվյալներով, բնակվում էր 128.745 հայ, որից 100.148-ը՝ մայրաքաղաքում: Եթե հաշվի առնենք, որ ամբողջ Վրացական ԽՍՀ-ում բնակվում

⁹³ <http://www.otechestvo.org.ua/main/20071/520.htm>

⁹⁴ Трансформация миграционных процессов на постсоветском пространстве, под ред. Л.Рыбаковского, М., 2008, <http://rybakovsky.ru/migracia3c2.html>

⁹⁵ *Кوماхия М.*, Формирование этнической карты Грузии и современные миграционные процессы, «Центральная Азия и Кавказ», 2008, но. 1, сс. 184-185.

եր 279.967 հայ, ապա կարելի է ասել, որ հայության 1/3-ից ավելին թիֆլիսաբնակ էր⁹⁶:

Թիֆլիսի գավառում (առանց մայրաքաղաքի) բնակվում էր 28.597 հայ: Գերակշիռ մասը՝ 27.949 մարդ, բնակվում էր գյուղական վայրերում, որոնցից Թեթրիձղարոյի⁹⁷ շրջանում՝ 4916 մարդ, Ասուրեթում՝ 2.515, Զեմո-Ծավկայում՝ 4.435, Աշկալայում՝ 3.291, Թելեթում՝ 2.538, Ծղնեթում՝ 1.318: Գյուղական այս բոլոր շրջաններում տեղի հայ ազգաբնակչությունը թվային մեծամասնություն էր կազմում⁹⁸: Մայրենի լեզվով խոսում էր գավառի հայության 58.8%-ը, իսկ մնացած հատվածի շրջանում առավելապես տարածված էր վրացախոսությունը, ինչը և դարձավ նրանց աստիճանական ձուլման հիմնական պատճառը:

Խորհրդային շրջանում իրականացված վարչական փոփոխությունների արդյունքում Թիֆլիսի գավառը բաժանվեց շրջանների: Այսպես, 1939թ. նախկին Թիֆլիսի գավառի տարածքում (առանց մայրաքաղաքի) հայերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Թբիլիսիի շրջան՝ 12.226 (16.2%), Թեթրիձղարոյի շրջան՝ 11.444 մարդ (25.8%), Սազարեջոյի շրջան՝ 2160 մարդ (5.6%)⁹⁹: Իսկ մայրաքաղաքում հայերի թիվը 137.331 էր:

⁹⁶ Նշենք, որ խորհրդային տարիներին նույնպես Անդրկովկասի երեք հիմնական ազգությունների շարքում հայերը շարունակում էին առաջին տեղը զբաղեցնել քաղաքաբնակների թվով: Այսպես. 1926թ. տվյալներով, քաղաքներում էր բնակվում հայերի 30.48%-ը, անդրկովկասյան թաթարների՝ 16.4%-ը, իսկ վրացիների՝ 16.1%-ը: Իսկ 1959թ. քաղաքաբնակ էր Անդրկովկասի հայերի 51.6%-ը, ադրբեջանցիների՝ 15.7%-ը, վրացիների՝ 35.2%-ը: Տե՛ս *Волкова Н.Г., Этнические процессы в Закавказье в XIX-XX вв., «Кавказский этнографический сборник», Вып. 4, М., 1969, с. 20.*

⁹⁷ Թեթրիձղարոյի շրջանի տարածքի մի զգալի մասը նախկինում Գուգարք նահանգի Թռեղքից անջատված Մանգլեաց փոքր գավառին է պատկանել: Թեթրիձղարո քաղաքը հիմնադրվել է XIXդ. առաջին քառորդում: 1930թ. այն նույնանուն շրջանի վարչական կենտրոնն էր, իսկ 1966թ. ստացել է քաղաքի կարգավիճակ:

⁹⁸ *Ալեքսանյան Հ.*, Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-30-ական թվականներ), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 2, էջ 101:

⁹⁹ <http://www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html>

Նշենք, որ 1930-1947թթ. Թեթրիծղարոյում լույս էր տեսնում «Կոլխոզային ուղի» շրջանային թերթը, որն ուներ 1 էջ հայերեն, 1՝ ռուսերեն, 2՝ վրացերեն¹⁰⁰, ինչպես նաև «Հանուն սոցիալիստական խոզարուծության» (1933-1935) հայերեն թերթը¹⁰¹:

1959թ. տվյալներով, Թբիլիսիի շրջանում (առանց մայրաքաղաքի) բնակվում էր 7.001 հայ (8.7%), Թեթրիծղարոյի՝ 6887 (17.6%)¹⁰², Սագարեջոյի՝ 908 (1.8%), ինչպես նաև նորաստեղծ Սցխեթի շրջանում (նախկինում տարածքը գտնվում էր Թբիլիսիի շրջանի մեջ)՝ 2.245 հայ (6.8%):

Հայերը բնակություն հաստատեցին նաև Թբիլիսիից հարավ-արևելք գտնվող Ռուսթավի քաղաքում, որտեղ ինդուստրացման տարիներին կառուցվեցին մոտ 90 խոշոր և միջին արդյունաբերական գործարաններ: 1959թ. տվյալներով, այստեղ բնակություն էր հաստատել 4.367 հայ (7%): Հետագայում հայերի թիվն աստիճանաբար աճում է: 1970թ. այստեղ արդեն բնակվում էր 5943, իսկ 1979-ին՝ 6707 հայ:

Սակայն, ինչպես վերը նշվեց, գավառաբնակ հայերի շրջանում տարածված վրացախոսության հետևանքով ընթանում էր հայ ինքնության աղճատման՝ աստիճանական փոփոխության գործընթաց: Ազգագրագետ Ն.Գ. Վոլկովան 1970-ական թթ. անցկացված դաշտային հետազոտության հիման վրա գրում է. «Թեթրիծղարոյի շրջանի Կոդա գյուղում հայերի մեծ մասը փաստաթղթերում գրանցվում է վրացի, սակայն 3 սերունդ առաջ այդ նույն ընտանիքներում խոսում էին հայերեն, գնում էին հայկական եկեղեցի և տապանաքարերի վրա գրում էին հայերեն: Ներկայումս Կոդա գյուղում, որտեղ ապրում են

¹⁰⁰ Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Մ.Ա. Բաբոյան, Եր., 1986, էջ 330:

¹⁰¹ Մադայան Վ., Պատմական Թռեղքի ներկան, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 200:

¹⁰² Հատկանշական է, որ 1959թ. մարդահամարի ընթացքում, ի տարբերություն Բոլնիսի, Գարդաբանի և Դմանիսի վրացախոս հայերի, Թեթրիծղարոյի շրջանում հայ են համարվել միայն հայախոսները (տե՛ս Բադայան Վ., Գուգարքի հյուսիս-արևելյան գավառների հայ բնակչությունը 1886-2002թթ., «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», հոդվածների ժողովածու, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 123):

հայեր ու վրացիներ (փաստաթղթերում այդպես է գրված), հայերի շրջանում առանձնանում են հետևյալ խմբերը. 1) վրացական ազգանուններով, ովքեր հայերեն լեզվին չեն տիրապետում, սակայն էթնիկ ինքնագիտակցությամբ հայ են; 2) վրացական ազգանուններով, ովքեր հայերենին չեն տիրապետում և ունեն վրացական էթնիկ ինքնագիտակցություն, սակայն ծագումով հայ են; 3) հայկական ազգանուններով, խոսում են միայն վրացերեն և գիտակցում են իրենց որպես վրացի»¹⁰³.

Կրթական հաստատություններ

Խորհրդային իշխանության տարիներին հայաբնակ բոլոր բնակավայրերում բացվել են պետական նախ տարրական, այնուհետև 7-ամյա, 8-ամյա, մեծ մասամբ նաև միջնակարգ դպրոցներ: Այդ տարիներին հայկական դպրոցները շարունակեցին իրենց գրեթե անխափան գործունեությունը: Ներգրավված լինելով խորհրդային կրթական համակարգի մեջ՝ դրանք նույնիսկ թնակոխեցին զարգացման նշանակալից փուլ: Խորհրդային Վրաստանում՝ Թբիլիսիի հայաշատ թաղամասերում, որպես կանոն, հայազգի երեխաները հաճախում էին հայկական դպրոցներ, հազվադեպ բացառություններ կարելի էր տեսնել, հիմնականում՝ խառը ընտանիքներում: 1976թ., օրինակ, Թբիլիսիում գործում էր 32 հայկական դպրոց: Աշակերտների թիվն անընդհատ աճել է՝ ընդհուպ մինչև 1989թ.:

Հայկական դպրոցների շրջանավարտները լայնածավալ երկրի տարբեր բուհերում բարձրագույն կրթություն ստանալու լայն հնարավորություններ ունեին, քանի որ կրթական մակարդակն ամենուր գրեթե նույն էր (աննշան տարբերություններով):

Բացի Խորհրդային Հայաստանում իրենց ուսումը շարունակելու լայն հնարավորություններից, տեղի հայկական դպրոցների շրջանա-

¹⁰³ *Волкова Н.Г.*, Этнические процессы в Грузинской ССР, «Этнические и культурно-бытовые процессы на Кавказе», М., Наука, 1978, с. 16.

վարտները կարող էին նաև բարձրագույն կրթություն ստանալ տեղում: Այդ տարիներին Վրաստանի մայրաքաղաքում գործում էր երկու հայագիտական կենտրոն. Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնը և Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը:

Դեռևս 1918թ., երբ հիմնադրվում էր Թբիլիսիի համալսարանը՝ Իվանե Ջավախիշվիլու ղեկավարությամբ, կազմվեց համալսարանում դասավանդվելիք առարկաների ծրագիր, որտեղ ներառված էին հայագիտական առարկաներ՝ գրաբար (դասախոս՝ Ա.Շանիձե), աշխարհաբար (Դ.Ղիփչիձե) և հայ պատմական գրականություն (Իվ. Ջավախիշվիլի): 1922թ. համալսարանում կազմակերպվեց հայագիտության ամբիոն, որի առաջին վարիչը եղավ Լ.Մելիքսեթ-Բեկը, որը պաշտոնավարեց այստեղ մինչև իր կյանքի վերջը (1963թ.): 1929-1933թթ. հայագիտության ամբիոնը մտավ արևելյան լեզուների ամբիոնների միավորման մեջ, որի վարիչը դարձավ Լ.Մելիքսեթ-Բեկը: 1934թ. հայագիտության ամբիոնն առանձնացավ: Ամբիոնում գիտահետազոտական աշխատանքներ են ծավալել հայագետներ Իլ.Աբուլաձեն, Իվ.Բեգլարովը, Ի.Շիլակաձեն: 1950-70-ականներին ամբիոնի ասպիրանտներ էին Ա.Խառատյանը, Ս.Մեսխիշվիլին, Մ.Ռոբաքիձեն, Ջ.Մեդուլաշվիլին: Ամբիոնը պատրաստեց մի շարք հայագետներ՝ Է.Դավլիանիձե, Բ.Արվելաձե, Ջ.Ալեքսիձե, Ն.Ջանաշիա, Ն.Ցագարեիշվիլի, Մ.Ռաֆավա: Վերջին չորս հայագետներին ղեկավարում էր պրոֆեսոր Իլ.Աբուլաձեն¹⁰⁴: Թբիլիսիի համալսարանի հայագիտության բաժանմունքի շրջանավարտներից Ռ.Գորգաձեն ասպիրանտուրան ավարտեց Երևանի պետական համալսարանում, որտեղ պրոֆ. Գ.Սևակի ղեկավարությամբ 1971թ. պաշտպանեց ատենախոսություն գրաբարի բայական կատեգորիաների վերաբերյալ:

¹⁰⁴ Առավել մանրամասն տե՛ս *Շիլակաձե Ի.*, Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1971, թիվ 3, էջ 267-269:

Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկը մեզ է թողել մոտ 600 աշխատություն: Նրա մահից հետո հայագիտության ամբիոնի վարիչ ընտրվեց Իվ.Շիլակաձեն: Մեկ տարի անց, պրոֆեսորի մահվան տարելիցին, համալսարանի արևելագիտության ֆակուլտետում ստեղծվեց պրոֆ. Լ.Մելիքսեթ-Բեկի անվան հայագիտության կաբինետ: Հանգուցյալ պրոֆեսորի ընտանիքն այս կաբինետին հանձնեց նրա անձնական գրադարանի բոլոր հայերեն գրքերը, որով կաբինետը մեծապես հարստացավ հայագիտությանը վերաբերող գրականությամբ (հետխորհրդային շրջանում, երբ ամբիոնը ճգնաժամի մեջ էր, այդ գրքերը տեղափոխվեցին համալսարանի գրադարան և փոշիացան):

Արդեն դասավանդվող առարկաներին ավելացան ևս մի քանիսը՝ հայ ժողովրդի պատմություն, հայ իրավունքի պատմություն, հայ հին և նոր գրականության պատմություն, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի ուսումնասիրության ներածություն: Ամբիոնի հայագետները բազմաթիվ արժեքավոր աշխատություններ են հրատարակել, նաև կատարել հայ հեղինակների թարգմանություններ հայերենից վրացերեն, կազմել են Վրաստանի հայկական դպրոցների համար դասագրքեր, ուսանողների համար ձեռնարկներ. օրինակ՝ «Հայ հին գրականության պատմություն» (Լ.Մելիքսեթ-Բեկ, հրատ. 1941թ.), «Գրաբարի քերականությունը քրեստոմատիայով ու բառարանով» (Իվ.Շիլակաձե, հրատ. 1955թ.), «Հայ գրականության քրեստոմատիա» (Իվ.Շիլակաձե, հրատ. 1968թ.), «Աշխարհաբարի քերականությունը՝ քրեստոմատիայով և բառարանով» (Իվ.Շիլակաձե, հրատ. 1971թ.) և այլն:

Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը գործում էր 1939թ.: Այն կոչված էր պատրաստելու ֆիզիկայի և մաթեմատիկայի, բնագիտության և աշխարհագրության, մայրենի լեզվի և գրականության ուսուցիչներ Վրաստանի հայկական դպրոցների համար: 1970-1971 ուսումնական տար-

վանից բաժանմունքում բացվեց նոր ֆակուլտետ՝ պատմա-բանասիրական: Ուսանողների հիմնական մասը Վրաստանի հայկական դպրոցների շրջանավարտներ էին: Ուսանելու էին գալիս նաև Հայկական ԽՍՀ շրջաններից՝ Թումանյանից, Իջևանից: Հայկական բաժանմունքում աշխատել են պրոֆ. Մ.Ա. Մազմանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Հայկ Ազատյանը, Լևոն Մելիքսեթ-Բեկը, պրոֆեսորներ Սիմոն Յուզբաշյանը, Տիգրան Աթաբեկյանը, Հարություն Նահապետյանը և ուրիշներ: Մեծ է հայկական բաժանմունքի դերը Վրաստանի բազմաթիվ հայկական դպրոցների և մշակութային օջախների կյանքում: Այստեղ բարձրագույն կրթություն ստացած շատ երիտասարդներ Վրաստանի հայկական շրջաններում հայերեն գիր ու գրականություն էին սովորեցնում մանուկներին: Բաժանմունքն ավարտած շրջանավարտներն աշխատում էին նաև գրադարաններում, թերթերի խմբագրություններում, մշակութային-կրթական այլ հիմնարկներում:

1953թ. ստեղծվում է նաև հայերենի և ադրբեջաներենի ամբիոն: Այստեղ դասավանդվում էին ժամանակակից հայերեն լեզու, գրաբար, բարբառագիտություն, լեզվաբանություն, գրականություն, հայ գրականություն և այլն: Բաժանմունքը և ամբիոնը 1970-1971 ուսումնական տարվա ընթացքում մի շարք կարևոր միջոցառումներ են ձեռնարկել, հատկապես մեծ շուքով նշվեց Խորհրդային Հայաստանի 50-ամյակը, որի կապակցությամբ անցկացվեց գիտական նստաշրջան: Հաջորդ տարին նշվեց նաև Խորհրդային Վրաստանի 50-ամյակը, որին նվիրված գիտական նստաշրջանին ամբիոնի չորս անդամ հանդես եկան զեկուցումներով¹⁰⁵:

Ամբիոնն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ինստիտուտի գրադարանի հայկական ֆոնդին: Մեծ չէ հայկական ֆոնդը՝ 3.000 անուն գիրք. քաղաքական, փիլիսոփայական, պատմական, լեզ-

¹⁰⁵ Առավել մանրամասն տե՛ս *Մխիթարյան Ա., Թբիլիսիի Ա.Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1971, թիվ 3, էջ 269-271:*

վաբանական, մանկավարժական, գրականագիտական, գեղարվեստական գրականություն: Խորհրդային շրջանում պարբերաբար Երևանից նոր հրատարակվող գրականություն էր ստացվում:

1970-1971 ուսումնական տարվանից ուսանողների փոխանակման կարգով Վրաստանից 50 հայ ուսանող սովորում էր Երևանի մանկավարժական ինստիտուտում, մասնագիտանում ֆիզիկայի, մաթեմատիկայի, բնագիտության, քիմիայի գծով: Ավարտելուց հետո նրանք աշխատում էին Վրաստանի հայկական դպրոցներում:

Ամբիոնում ընդգրկված հայագիտական առարկաների դասախոսները հիմնականում առաջնորդվում էին Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսումնական ծրագրերով: Ուսանողներն օգտագործում էին Երևանում լույս տեսած ձեռնարկները, դասական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչների գործերը (Մ.Աբեղյան, Հր.Աճառյան, Գր.Ղափանցյան, Ժամանակակից լեզվաբանների և գրականագետների աշխատությունները):

Ամբիոնի անդամների հողվածները տպագրվում էին Երևանում և Թբիլիսիում հրատարակվող գիտական ամսագրերում:

Հայ գրականություն, մամուլ

Խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո հրատարակվեց Գ.Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսի վերջին՝ 7-րդ գիրքը (հանդեսը լույս էր տեսնում 1908թ.): Այնուհետև սկսեց հրատարակվել «Խելովներա-Արվեստ» հանդեսը, որը խորհրդային կարգերի օրոք Թիֆլիսում լույս տեսած արվեստագիտական առաջին լուրջ պարբերականն էր: Չնայած հայերեն լեզվով լույս է տեսել միայն մեկ համար, այդուհանդերձ զգալի է նրա դերը վրացահայ մշակութային-թատերական կյանքում: «Խելովներա-Արվեստ» հանդեսի լույսընծայումից մեկ տարի անց՝ 1927թ., Թիֆլիսի Հայարտունը (Հայ արվեստի տուն) հիմնադրում է «Լուսաբաց» գրական-գեղարվեստական տարեգիրքը:

Նրա տպագրությունը շարունակվել է մինչև 1931թ., լույս է տեսել ընդամենը 6 համար¹⁰⁶: «Լուսաբացը» սկզբում եղել է Վրաստանի գրողների միության, իսկ 1929թ., 3-րդ համարից, Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական սեկցիայի գրական-գեղարվեստական ժողովածուն:

1920-30-ական թվականներին Թիֆլիսում հրատարակվում էին «Դարբնոց» (1922-1923), «Անդրկովկասի աշխատավորուհի» (1922-1924), «Կարմիր ծիլեր» (1923-1939), «Դիրքերում» (1924), «Զարթոնք» (1926), «Լուսաբաց» (1927-1931), «Պրոլետար» (1927-1938), «Գրոհ» (1931 -1933), «Բարձունքներ» (1934), «Սովետական Վրաստան» (1938թ., ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվեց «Վրաստան») և այլ հանդեսներ¹⁰⁷:

Հետպատերազմյան Թբիլիսիում լույս էին տեսնում «Լենինյան դրոշ» (1945-1956), «Անդրկովկասի երկաթուղային» (1953-1958), «Ազիտատորի բլոկնոտ» (1956-1959), «Ալմանախ» (1956-1960), «Կամուրջ» (1961-1980) և այլ հանդեսներ¹⁰⁸: Ընդհանուր առմամբ, XIXդ. Սկսած մինչև 1980թ. Թիֆլիսում հրատարակվել է 218 անուն հայկական լրագիր¹⁰⁹:

1921-1938թթ. Թիֆլիսում լույս է տեսել 707 անուն հայերեն գիրք՝ 1.576.392 տպաքանակով, այդ թվում՝ մարքսիզմ-լենինիզմի բնագավառում 66 անուն՝ 72.500 օրինակով, պատմության՝ 26 անուն գիրք՝ 20.950 օրինակ, պարտմասսայական գրականություն՝ 70 անուն գիրք՝ 155.200 օրինակ, սոցիալիստական շինարարության բնագավառում՝ 66 անուն գիրք՝ 139.870 օրինակով, պետության և իրավունքի՝ 37 անուն՝ 103.411 օրինակով, մանկական գրականություն և դասագրքեր՝ 126 անուն՝

¹⁰⁶ Մաղալյան Վ., Վրաստանի արվեստագիտական հայ մամուլը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1991, թիվ 3, էջ 83-84:

¹⁰⁷ Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, Եր., 1986, էջ 329:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 330:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 328:

425.200 օրինակով, գրականագիտական և գեղարվեստական գրականություն՝ 103 անուն գիրք՝ 154.665 օրինակով, մանկավարժական գրականություն՝ 24 անուն գիրք՝ 31.800 օրինակով և այլն¹¹⁰:

Այդ տարիներին Վրաստանի մայրաքաղաքում լույս տեսան այնպիսի արժեքավոր աշխատություններ, ինչպիսիք էին Լեոյի «Անցյալից»-ը (1925), «Հայոց լեզու»-ն (1931), «Վահրամ Փափազյան. բեմական գործունեության XXV-ամյակի առթիվ»-ը (1927), «Ավետիք Իսահակյան. մեծ պոետի ծննդյան 60-ամյակի առթիվ»-ը (1936), ինչպես նաև աշխարհագրության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, բնագիտության, բուսաբանության դասագրքեր, տարբեր ուսումնական ձեռնարկներ և այլն:

1922թ. Հ.Հակոբյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է Վրաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական մասնաճյուղը: Հայարտան գրական բաժանմունքը և պրոլետգրողների ասոցիացիան 1926թ. միավորվում են և ստեղծում Հայ գրողների միությունը, որը սկսում է պայքար մղել «վնասակար» և «ծայրահեղ» գրական հոսանքների, ընկերությունների, միավորումների, խմբակցությունների ու կազմակերպությունների դեմ¹¹¹:

1934թ. կազմավորվում է Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը, որից հետո գրական, հասարակական-քաղաքական բանավեճերը կորցնում են իրենց հետաքրքրությունն ու ոգին: Գրական փոթորկոտ կյանքը մտնում է վերահսկվող կադապարի մեջ: Գրական կյանքի աղքատացման պատճառներից մեկն էլ գրողների և գրականագետների շարքերի նստրանալն էր. նրանց մի մասը տարբեր ժամանակներում տեղափոխվում է Երևան (Դ.Դեմիրճյան, Ա.Վշտունի, Հո.Պողոսյան, Ս.Արագի, Վ.Ատրյան, Վեսպեր և ուրիշներ), մի մասն էլ

¹¹⁰ Տե՛ս Հայկական գիրքը Վրաստանում 1921-1938թթ. (բիբլիոգրաֆիա), Թբիլիսի, 1941, նախաբան:

¹¹¹ *Բայրամյան Հ.*, Թիֆլիսի հայ գրական կյանքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1992, թիվ 2, էջ 199:

գոհ է դառնում անհատի պաշտամունքի կամայականություններին (Մ.Դարբինյան, Գ.Մեսյան, Մ.Ավետիսյան, Գ.Խալաթ, Ռ.Լուսինյան, Հ.Սուրխաթյան, Արշ.Մելիքյան, Ս.Խանոյան, Ա.Խումարյան)¹¹²:

Թիֆլիսի հայ գրական կյանքը շարունակվում է նաև պատերազմյան և հետպատերազմյան շրջանում: Սակայն հայ բանաստեղծները չունեին իրենց հրատարակության օրգանը (լույս են տեսել միայն 1941թ.՝ «20 տարի», իսկ 1947թ.՝ «30 տարի» ավանախները): Եվ ահա, 1956 թվականից սկսում է հրատարակվել մասնաճյուղի գրական-գեղարվեստական և տեսական-քննդատական «Ալմանախ» (1960-ից՝ «Կամուրջ») տարեգիրքը¹¹³:

1960-ական թթ. գրական կյանքը մի փոքր աշխուժանում է: 1962թ. տեղի է ունենում հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնի (Խոջիվանքի) վերաբացումը, որը, Վրաստանի կառավարության որոշմամբ, վերածվում է պետական փակ պանթեոնի: Վերականգնվում է 1914թ. հանդիսությամբ նշվող սայաթնովյան Վարդատունը, որն անցկացվում է յուրաքանչյուր տարվա մայիսի վերջին կիրակի օրը: Սակայն 1980-ականներին կրկին գրական կյանքն անկում է ապրում: 1992թ. հայկական մասնաճյուղն ուներ ընդամենը երեք անդամ, որից մեկը՝ վրացի: Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահի պաշտոնը վարել են Կորյուն Ագրոյանը, Ռուբեն Աղաբաբյանը, Մկրտիչ Ասլանյանը, Մարտին Քարամյանը, Վարդան Ատրյանը, Մարտին Ղարաբյոբյանը, Աշոտ Մարգարյանը, Սոս Սիմավորյանը, Աղասի Վարդանյանը: Կարճատև ընդմիջումներով շուրջ քառորդ դար այդ աշխատանքները ղեկավարում էր արձակագիր Բենիկ Մեյրանյանը¹¹⁴:

¹¹² Նույն տեղում, էջ 200:

¹¹³ Նույն տեղում, էջ 200:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 201:

Թատրոն

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնը շարունակեց իր գործունեությունը: 1921թ. մարտին այն դարձավ Ստ.Շահումյանի անվան, իսկ մայիսին թատրոնին շնորհվեց պետական կարգավիճակ, որը պահպանվել է մինչև մեր օրերը: Թատրոնը ղեկավարում էր Լ.Քալանթարը:

1936թ. մարտի 29-ից թատրոնն ունի իր շենքը, որը գտնվում է Թիֆլիսի հայաշատ Հավլաբար թաղամասում: Խորհրդային տարիներին ներկայացումները շաբաթական երեք անգամ էին: Թատրոնի ռեժիսորներն էին Ա.Աբարյանը և Ֆ.Բժիկյանը: Բեմադրվում էին Ն.Գոգոլի «Ամուսնություն», Շիլլերի «Ավագակներ», Մ.Մետերլինկի «Սուրբ Անտոնիոսի հրաշքը», Գ.Սունդուկյանի «Պեպո», «Էլի մեկ գոհ», Ալ.Շիրվանզադեի «Նամուս», «Պատվի համար», Մ.Գորկու «Թշնամիներ», Ա.Օստրովսկու «Անմեղ մեղավորները» և այլ ներկայացումներ: Դերասանական կազմում էին Մարիա Մոջորյանը, Արուս Ոսկանյանը, Աշոտ Քաջվորյանը, Արտեմ Լուսինյանը, Իվան Աբելյանը, Դորիան Ամիրբեկյանը, Իսահակ Ալիխանյանը, Մարիա Բերոյանը, Պահարեն (Պետրոսյան), Բաբկեն Ներսիսյանը, Բարդուղիմեոս Եղշատյանը, Ցվետանա Վրույրը և ուրիշներ:

Թատրոնը չդադարեցրեց ներկայացումները նույնիսկ Հայրենական պատերազմի տարիներին: Բեմադրվում էին Մուրացանի «Գևորգ Մարգալեստունի», Ա.Քաջվորյանի «Դավիթ Բեկ», Կ.Սիմոնովի «Մեր քաղաքի երիտասարդը» ներկայացումները: Թատերացանկում էին նաև վրաց թատերագիրներ Գ.Բերիաշվիլու, Գ.Նախուցրիշվիլու, Օ.Չիջավաձեի, Ն.Դումբաձեի և այլոց գործերը:

1956թ. Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը նշեց իր 100-ամյա հոբելանը: Իսկ 1991թ. այն վերանվանվեց և կրում է հայ մեծ դերասան, բանաստեղծ և նկարիչ Պ.Ադամյանի անունը, որը դեռևս 1880թ. նոյեմբերի 20-ին հայ թատրոնի պատմության մեջ առաջին անգամ խաղացել է Համլետի դերը:

Սղնախի գավառ

1926թ. տվյալներով, գավառում բնակվում էր 12.181 հայ՝ Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 3.9%-ը: Հայերը կազմում էին Սղնախի գավառի ամբողջ բնակչության 7.7%-ը¹¹⁵: Բուն քաղաքում՝ Սղնախում, նույն տարին հայերի թիվը կազմել է 2.400 (քաղաքի բնակչության 49.5%-ը): Հայերը բնակվում էին նաև քաղաքային ավաններ Վելիսցիխեում՝ 3559 մարդ (60%), Լագոդեխիում՝ 666 (42.6%), ինչպես նաև Զեմո-Կեդի՝ 343 (11.7%), Գուրջաանի՝ 622 (6%), Կակաբեթի՝ 885 (13.1%), Կանդաուրա՝ 675 (16.9%), Ծիթելի-Շղարո՝ 344 (7.5%), Ախաշենի՝ 310 (5.8%), Վելիսցիխե՝ 292 (43.3%) գյուղերում: Ալազանի ջրանցքի հողային տարածքներում ապրում էր 541 հայ (44.9%)¹¹⁶:

Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 25.6%-ի համար¹¹⁷: Փաստորեն, հայերի գերակշիռ մասը վրացախոս էր, ինչով և պայմանավորված է նրանց շրջանում հետագա ձուլման բարձր ցուցանիշը: Խորհրդային իշխանության տարիներին հայերի թիվը Սղնախի գավառում աստիճանաբար նվազեց: 1939թ. տվյալներով, Սղնախի շրջանում բնակվում էր արդեն 2362 հայ (ամբողջ բնակչության 4.5%-ը), նախկին Սղնախի գավառից անջատված Ծիթել-Շղարոյի շրջանում՝ 1085 (3.5%), իսկ Լագոդեխի շրջանում՝ 1188 հայ (2.6%):

1959թ. տվյալներով, Սղնախի շրջանում բնակվում էր 1757 (3.4%), Լագոդեխիում՝ 1240 հայ (2.6%): 1970թ. Սղնախում արդեն բնակվում էր ընդամենը 1371 հայ, իսկ 1979-ին՝ 1377: Սղնախում են ծնվել անվանի նկարիչ Գ.Բաշինջաղյանը, գեներալ-մայոր Մ.Հարությունյանը և ուրիշներ:

¹¹⁵ Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-30-ական թվականներ), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 2, էջ 102:

¹¹⁶ <http://www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html>

¹¹⁷ Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-30-ական թվականներ), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 2, էջ 102:

Թելավի գավառ

1926թ. տվյալներով, գավառում բնակվում էր 9.135 հայ՝ Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 2.9%-ը: Հայերը կազմում էին Թելավի գավառի բնակչության 8.6%-ը: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայ բնակչության 99.6%-ի համար¹¹⁸: Բուն Թելավ քաղաքում հայերի թիվը 3606 էր (37.2%): Հայաշատ էին հետևյալ գյուղերը. Չվեղի-Գավազի՝ 210 հայ (2.5%), Ջեմո-Խոդաշենի՝ 587 (8.7%), Իկալտո՝ 857 (13.2%), Կվարելի՝ 281 (4.7 %), Կուրդգելաուրի՝ 265 (3.3%), Մատանի՝ 861 (28.9%), Նապարեուլի՝ 605 (15.1%), Ցինանդալի՝ 241 (3%), Շաշիանի՝ 1131 (12.6%), Շիլդա՝ 134 (2.6%)¹¹⁹: Թելավի գավառում կար նաև հայ կաթոլիկների Սանավարդո գյուղը, որը դեռ 1910-ական թթ. կանգուն էր, սակայն հետագայում տեղի հայությունն ամբողջությամբ վրացացավ¹²⁰:

1939թ. Թելավի շրջանում բնակվում էր 7.370 հայ, որը կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 8.7%-ը: Բուն Թելավ քաղաքում ապրում էր 3.787 հայ՝ կազմելով քաղաքի բնակչության 26.2%-ը: Սակայն Թելավի շրջանի հայությունը նույնպես աստիճանաբար նոսրանում է: Եվ 1959թ. մարդահամարով այստեղի հայությունը կազմում էր 3828 մարդ, բնակչության 6.5%-ը: Բուն քաղաքում՝ 2861 հայ (18.7%):

Իսկ արդեն 1979-ին շրջանն ուներ 73.731 բնակիչ, այդ թվում վրացի՝ 61.976, հայ՝ 2265: Բուն Թելավ քաղաքի ընդհանուր բնակչությունը կազմում էր 25.007 մարդ, որից վրացի էր 19.961-ը, հայ՝ 1997, ռուս՝ 1670, օս՝ 159, ադրբեջանցի՝ 130, ուկրաինացի՝ 339, քուրդ՝ 558:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 102-103:

¹¹⁹ <http://www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html>

¹²⁰ *Հակոբյան Պ.*, Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լույսի տակ, Հրավեր Ողջատության, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 1993, էջ 132:

V. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

(1991թ. - առ այսօր)

ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանում կրկին ստեղծվեց ծանր իրադրություն: Երկրի բնակչությունը կանգնեց բազմաթիվ մարտահրավերների առջև. մի կողմից՝ վրացական իշխանությունների անթաքույց ձգտումներն՝ օր առաջ ազատվել խորհրդային կադապարներից և ստեղծել ազգային պետություն, մյուս կողմից՝ նախկին համակարգի փլատակների վրա ձևավորվող նոր տիպի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, երրորդ՝ միջէթնիկ տարաձայնություններն ու զինված հակամարտությունները վերստին տազնապալի օրեր էին խոստանում տեղի հայությանը:

1991թ. Վրաստանի նախագահ ընտրվեց ծայրահեղ ազգայնական Ջ.Գամսախուրդիան (1991-1992թթ.), որի կառավարման տարիներին վիրահայությանը սպառնում էր ոչ միայն աստիճանական վրացացում կամ զանգվածային արտագաղթ, այլև չէր բացառվում նույնիսկ ֆիզիկական հաշվեհարդարը: Ջ.Իոսելիանիի ղեկավարած «Մխեդրիոնի» (ձիավորներ) ոչ ֆորմալ զինված խմբերն ահուսարսափ էին տարածում խաղաղ բնակչության, հատկապես այլազգիների շրջանում (չնայած Ջ.Գամսախուրդիայի և Ջ.Իոսելիանիի միջև բացահայտ առճակատմանը): Իրադրությունն այնքան էր սրվել, որ հայաշատ Հավլաբար թաղամասում տեղի հայությունը տարերայնորեն ինքնակազմակերպվել էր՝ հնարավոր հարձակման դեպքում ինքնապաշտպանություն կազմակերպելու նպատակով:

Հետխորհրդային փուլում վրացական ազգայնականությունը կտրուկ վերելք էր ապրում: Կրկին (ինչպես և 20-րդ դ. սկզբներին) մեծ ժողովրդականություն էր վայելում «Վրաստանը՝ վրացիների համար» կարգախոսը: Երկրում ազդարարվեց ազգային պետականության կերտման նոր փուլ: Ի թիվս այլ միտումների, այս փուլը նշանավորվում էր էթնիկ կառուցվածքում որոշակի փոփոխություններով՝ Վրաս-

տանն օր օրի դառնում է առավել միատարր: Այսպես, եթե 1989թ. մարդահամարով վրացիները կազմում էին հանրապետության բնակչության 70%-ը, ապա 2002թ.՝ արդեն 83,3%: Միաժամանակ զինված հակամարտությունների, սոցիալ-տնտեսական պայմանների կտրուկ վատթարացման արդյունքում մեծ թափ ստացավ արտագաղթը:

Այժմ տեսնենք, թե ըստ ազգային հատկանիշի ինչ փոփոխություններ է կրում Վրաստանի ժողովրդագրական կազմը հետխորհրդային շրջանում:

Աղյուսակ 5

Վրաստանի ժողովրդագրական կազմի դինամիկան 1989-2002թթ.¹²¹

Բնակչություն	Թվաքանակ		Աճ		Տեսակարար կշիռը	
	1989	2002 (առանց Աբխ. և Հրվ. Օսիայի)	Մարդ	%	1989	2002 (առանց Աբխ. և Հրվ. Օսիայի)
Վրացիներ	3787393	3661 173	-126220	-3.3	70.1 %	83.8 %
Ադրբեջանցիներ	307556	284761	-22795	-7,4	5.7 %	6.5 %
Հայեր	437211	248929	-188282	-43.1	8.1 %	5.7 %
Ռուսներ	341172	67671	-273501	-80.2	6.3 %	1.5 %
Հույներ	100324	15166	-85158	-84.9	1.9 %	0.3 %
Հրեաներ	24720	3772	-20948	-84.7	0.5 %	0.1 %

Ինչպես տեսնում ենք, քանակական անկման ամենաբարձր ցուցանիշներն ունեն հույները (-84.9%), հրեաները (-84.7%), ռուսները (-80.2%), հայերը (-43.1%): Ադրբեջանցիներն (-7.4%) ու վրացիներն (-3.3%) արձանագրել են անկման չնչին տոկոս, ինչը հնարավոր

¹²¹ Пугкарадзе Т., Вуркадзе З., Этническая структура и демографические проблемы в Грузии, «Этнографическое обозрение», М., 2007, но. 5, с 72.

րություն է տվել նրանց բարձրացնել ընդհանուր բնակչության կազմում իրենց տեսակարար կշիռը: Եթե 1989թ. ազգային փոքրամասնությունների շարքում քանակական առումով առաջին տեղում էին հայերը, ապա ժողովրդագրական այս փոփոխության արդյունքում հայերն այդ տեղը զիջեցին ադրբեջանցիներին: 2002թ. տվյալներով, հայերի տեսակարար կշիռն էր 5.7%, իսկ ադրբեջանցիներինը՝ 6.5%:

Միննույն ժամանակ նշենք, որ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ էր Վրաստանի հայերի 171.139-ը, որը կազմում է երկրի ամբողջ բնակչության 3.9%-ը¹²²:

Թիֆլիս քաղաք. նոր իրողություններ

Վրացիների վերաբերմունքը հայության նկատմամբ հիմնականում պայմանավորված է նախևառաջ պատմական անցյալով ու դրա շուրջ ձևավորված կոլեկտիվ հիշողությամբ: Այդ հիշողության կարևոր բաղադրիչներից մեկն այն փաստն էր, որ Վրաստանում բնակվող հայերը դեռ 100 տարի առաջ իրենց ձեռքում էին կուտակել Թիֆլիսում և մերձակա բնակավայրերում շրջանառվող կապիտալի մեծ մասը, ունեին բարձր հասարակական դիրք, նաև թվային գերակշռություն մայրաքաղաքում: Այս ամենը հայ-վրացական հարաբերություններում խոր մրցակցության հիմք էր հանդիսանում: Վրացիների շրջանում արդեն ձևավորվել էր հայերի՝ որպես ներուժ ունեցող ազգի, ընկալումը: Արմատացած ընկալումները սնունդ ստացան ԽՍՀՄ փլուզումից հետո՝ նոր պայմաններում, երբ հայերը հաղթանակ տարան Ղարաբաղյան պատերազմում: Ընդ որում, չմոռանանք, որ գրեթե նույն տարիներին վրացիները պարտություն կրեցին վրաց-աբխազական պատերազմում (նշենք, որ հետխորհրդային շրջանում վրացիները երկու պարտություն են կրել՝ նախ վրաց-աբխազական, հետո նաև

¹²² Նույն տեղում, էջ 71:

վրաց-օսական պատերազմներում): Այս պատմական խոշոր իրադարձությունները նույնպես իրենց կնիքը դրեցին հայ-վրացական միջերկրյա հարաբերությունների վրա՝ ներարկելով որոշակի զգուշավորություն հայերի նկատմամբ: Փաստացի, այժմ էլ հայերն ընկալվում են որպես տարածաշրջանի միակ հաղթող ազգը (նույնիսկ վրաց-աբխազական պատերազմում վրացիների կրած պարտությունը հաճախ բացատրվում է հայերի՝ աբխազների կողմում կռվելու հանգամանքով):

Սակայն, միննույն ժամանակ, Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակը կարծես թե խոր ազդեցություն չգործեց թիֆլիսահայության (ըստ մեր դաշտային նյութի¹²³) էրնիկ վարքաբանության վրա: Հաղթող հայի կերպարը թիֆլիսահայ միջավայրում համեմատաբար թույլ է արտահայտված:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ Վրաստանում, հատկապես թիֆլիսահայերի շրջանում, պատմականորեն համայնական կյանքով ապրող ժողովուրդներին (առաջին հերթին՝ հայերին) բնորոշ ինքնապաշտպանական մեխանիզմները (իմունիտետը) ցայտուն չեն դրսևորվում: Սրա բացատրությունը նույնպես, հավանաբար, պետք է փնտրել պատմության էջերում, երբ անցյալում հայկական տարրն ակտիվ ներգրավված էր Թիֆլիսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում, և հայն այդ քաղաքը չէր դիտում որպես ժամանակավոր կացարան Մայր հայրենիք վերադառնալու ճանապարհին: Այս ընկալումը պահպանվել է մինչև օրս:

Սովորաբար, դրսում ապրող հայությանն ընդհանուր առմամբ բնորոշ են վիրտուալ հոգեբանական կապը Հայրենիքի հետ և երբևիցե Մայր հայրենիք վերադառնալու թաքուն փայփայած հավատը: Թիֆլիսի հայության միջավայրում այս սպասումը նույնիսկ մտերմիկ զրույցներում չի նկատվում, քանի որ «Թիֆլիսն իր տունն է»: Ինչ-

¹²³ Հեղինակը 2006 և 2011թթ. «Նորավանք» ԳԿՀ պատվերով դաշտային հետազոտություն է իրականացրել թիֆլիսահայ համայնքում:

պես նշում են մեր զրուցակիցներից շատերը, «մենք հյուր չենք այս տարածքում, ընդհակառակը, մենք միշտ եղել ենք, մենք ենք ուրիշներին ընդունել»¹²⁴:

Մյուս կողմից՝ Թբիլիսին այնքան մոտ է Հայաստանին, որ թիֆլիսահայության շրջանում անկախության այս 23 տարիների ընթացքում արտերկրում ապրողի գիտակցությունը դեռևս չի ձևավորվել, մեր զրուցակցի խոսքերով՝ «մեզ միշտ թվացել է, թե մենք ապրում ենք երկու սենյականոց բնակարանում, ոչ մի հայի մտքով չէր անցնում, որ տեղափոխվելով Երևանից Թիֆլիս՝ ինքը հայտնվել է այլ երկրում: Մեզ համար Վրաստանը Հայաստանի շարունակությունն է. և՛ այնտեղ է Հայաստան, և՛ այստեղ, և՛ այնտեղ հայեր կան, և՛ այստեղ: Հիմա ամեն ինչ փոխվել է, բայց մենք դեռ չենք փոխվել»¹²⁵:

Այսօր թիֆլիսահայն ապրում է անմիջապես իր հայրենիքի հարևանությամբ գտնվող քրիստոնեական երկրում, որտեղ հայկական տարրի ներկայության մասին իրեն հիշեցնող բազում ապացույցներ կան. «Մեզ մոտ չկա տրադիցիոն համայնքային ինքնագիտակցություն, ինչպես սփյուռքում դա կա: Պատճառն այն է, որ Վրաստանում մենք չենք զգում, թե մենք տանը չենք, թիֆլիսահայերս զգում ենք Թիֆլիսը որպես մեր տունը, 90%-ի համար էս քաղաքը հայի սեփականությունն է, քանի որ ամեն ինչ հայն է ստեղծել, հայի շունչն այստեղ կա: Այստեղ չի գործում սփյուռքին բնորոշ ինքնապահպանման որևէ մոդել»¹²⁶: Հավանաբար, այս գործոններով է պայմանավորված Թբիլիսիի հայերի շրջանում ինքնապաշտպանական ավանդական մեխանիզմների թույլ արտահայտվածությունը:

Փաստորեն, ստեղծվել է մի իրավիճակ, երբ ներքին համայնական կյանքում տիտղոսակիր ժողովրդի (վրացիների) և ազգային

¹²⁴ Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ («Նորավանք» ԳԿՀ արխիվ), դաշտային հետազոտություն, 2006:

¹²⁵ Նույն տեղում:

¹²⁶ Նույն տեղում:

փոքրամասնության (հայերի) հարաբերություններում նկատվում է ոչ համարժեք փոխադարձ ընկալում: Մեր դիտարկումների համաձայն՝ վրացիների ընկալմամբ հայերը բավական ուժեղ ու կարող ազգ են: Հետևաբար, վրացիների կողմից հայկականության նկատմամբ մրցակցությունն առավել կազմակերպված, համակարգված ու հետևողական է: Փոխարենը՝ Թբիլիսիի հայկական միջավայրում մրցելու, որոշակի սոցիալական բարձր տեղ զբաղեցնելու հավակնություններ գրեթե չեն դրսևորվում:

Վրաստանի անկախացումից հետո թիֆլիսահայ համայնական կյանքի կազմակերպումը, կարելի է ասել, ընթանում էր տարերայնորեն և չէր ղեկավարվում որևէ կենտրոնից՝ լինի համայնական կառույց, քաղաքական կուսակցություն (կամ կուսակցություններ), հասարակական կազմակերպություն, եկեղեցի, մշակույթի տուն, թե որևէ այլ օղակ: Իրականում այստեղ գործում են հայկական մշակութային, կրթական, հոգևոր և այլ կառույցներ (հայ քաղաքական կուսակցություններ չեն գործում), բայց համայնական կյանքի կազմակերպման «կենտրոնական իշխանություն» փաստորեն չկա: Թիֆլիսի հայ համայնքի ակտիվ անդամների հիմնական մտահոգությունն այն էր, որ այն պառակտված էր տարբեր խմբավորումների, անհատների, կազմակերպությունների, խարխիված են ներքին միասնությունն ու համախմբվածությունը: Սակայն, հարկ է նշել, որ վերջին տարիներին իրադրությունը բավականաչափ փոխվել է. Վիրահայոց թեմն ուժեղացրել է իր հայնապաստ գործունեությունը և ակտիվացրել իր ներգրավվածությունը տեղի հայության կյանքում:

Այնուամենայնիվ, հետխորհրդային Վրաստանում նույնպես հայերի թիվն անընդհատ նվազում է: Այդ գործընթացը տեղի է ունենում թե՛ աստիճանական ձուլման և թե՛ դանդաղ արտագաղթի հետևանքով: Ձուլման մեխանիզմներից ամենատարածվածը մայրենի լեզվի կորստի և վրացերենին անցնելու ճանապարհն է: Այսպես, 2002թ. մար-

դահամարի տվյալներով, Վրաստանում ապրող հայերի (որոնց ընդհանուր թվաքանակը 248.929 է) մի մասը հայերենն իր մայրենի լեզուն չի համարում. 5692 մարդ իր մայրենին համարում է վրացերենը, իսկ 7525-ը՝ ռուսերենը¹²⁷: Փաստացի, այս երկու խմբերը ներկայումս բացահայտ հեռանում են հայությունից՝ բռնելով ձուլման (վրացալեզունների դեպքում) կամ հիմնականում արտագաղթի (ռուսալեզուների դեպքում) ուղին: Այս խմբերն այլևս չեն դիմադրում ձուլմանը կամ որևէ ջանք չեն գործադրում հայկական ինքնության պահպանման համար և գիտակցաբար հեռանում են իրենց ազգային արմատներից¹²⁸:

Այս խմբերից գատ, միևնույն ժամանակ բազմաթիվ են այն հայերը, հատկապես մայրաքաղաք Թբիլիսում, որոնք իրենց մայրենի լեզուն թեև համարում են հայերենը, բայց որպես հաղորդակցման լեզու լայնորեն կիրառում են ռուսերենն ու վրացերենը՝ անգամ ազգակիցների հետ շփվելիս: Այս խմբերի ձուլման գործընթացը թեև կարող է ավելի դանդաղ ընթանալ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում դա անխուսափելի է, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն:

Ձուլման մեխանիզմներից մեկը խառնամուսնություններն են: 2002թ. տվյալներով, հայ-վրացական խառը ընտանիքների թիվը կազմում է 15013, այն պարագայում, երբ վրաց-ադրբեջանականը ընդամենը 2229 է¹²⁹:

Բավական հետաքրքիր են «մաքուր» ընտանիքների վերաբերյալ տվյալները:

¹²⁷ www.ecmi.de/emap/download/Samtskhe_Statistics.pdf

¹²⁸ Համեմատության համար նշենք, որ ադրբեջանցիների շրջանում իրենց մայրենին վրացերենը կամ ռուսերենը համարողների թիվն անհամեմատ քիչ է (համապատասխանաբար՝ 934 և 385 մարդ), տե՛ս նույն տեղում:

¹²⁹ Как мы жили вместе в Грузии в XX веке, проект евроклио/матра, 2008/2011, Тбилиси, с. 40.

Աղյուսակ 6

Շնտանիքների բաշխումն ըստ ազգերի
(որտեղ ընտանիքի բոլոր անդամները նույն ազգության են)¹³⁰

N	Ազգություն	1979	1989	2002
1	Վրացիներ	750.430	817.875	837.535
2	Հայեր	84.234	74.253	49.229
3	Ադրբեջանցիներ	44.325	56.668	60.623

Ինչպես տեսնում ենք, «մաքուր» ընտանիքների թիվը նվազել է միայն հայերի շրջանում: Վրացիների և ադրբեջանցիների մոտ, ընդհակառակը, այն հետևողական աճ է արձանագրել:

Հատկանշական է, որ արտագաղթող էթնիկ փոքրամասնություններից քանակապես կրկին առաջին տեղում են հայերը: Այսպես, 1990-1996թթ. ընթացքում Վրաստանից արտագաղթել են 230.000 հայ, 200.000 ռուս, 170.000 ադրբեջանցի, 75.000 օս, 75.000 հույն և 85.000 այլ էթնիկ խմբեր¹³¹: Այդ տարիներին երկրից արտագաղթել է նաև 550.000 վրացի, որը կազմում է Վրաստանից արտագաղթողների 39.7%-ը: Նույն տարիներին երկրից արտագաղթեց էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների 60.3%-ը:

Արտագաղթի արդյունքում տեղի ունեցավ հայության ոչ միայն քանակական, այլև զգալի որակական անկում, քանի որ երկրից հեռացավ սոցիալապես ակտիվ և գրագետ զանգվածը: Բհարկե, նույնը տեղի ունեցավ ՀՀ-ից արտագաղթի ժամանակ, սակայն Վրաստանի հայերի պարագայում երկրից արտագաղթած սոցիալապես ակտիվ հայ զանգվածի զբաղեցրած սոցիալական խորշը չհամալրվեց «նոր հայերով», քանի որ ստեղծված էթնոցենտրիկ միջավայրում հայազգի անհատի սոցիալական աճը հանդիպեց բազմաթիվ խոչընդոտների: Եվ արդյունքում՝ համայնքը մնաց, կարելի է ասել, առանց ընտրանու: Իսկ վրացիների պարագայում սոցիալական հին էլիտային փոխարի-

¹³⁰ Նույն տեղում, էջ 39:

¹³¹ www.ecmi.de/emap/download/Samtskhe_Statistics.pdf

ներու եկավ նորը՝ կրկին վրացականը: Հետևաբար, ամենևին էլ օբյեկտիվ չէ տարածված այն տեսակետը, թե 1990-ականների արտագաղթի հետևանքով հավասարապես տուժել են Վրաստանի բոլոր էթնիկ և կրոնական հանրույթները, և այն, որ զանգվածային արտահոսքի պատճառը զուտ սոցիալ-տնտեսական խնդիրներն էին¹³²:

Հասարակական կյանք

Անկախացած Վրաստանում հայերի հասարակական դիրքն օր օրի անկում էր ապրում: 2006թ. ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ պետական համակարգում հայերի թիվը 1-2%-ից չի անցնում: Գործող օրենքի համաձայն, հայերը՝ որպես ազգային փոքրամասնություն, Վրաստանի Ազգային ժողովում ունեն 5 պատգամավոր, սակայն գործադիր իշխանությունում (նախարարություններ և գերատեսչություններ) հայերի գրեթե չենք հանդիպի: Վրացական կողմը նման իրավիճակը բացատրում է հայերի՝ իբր պետական լեզվի չիմացությամբ (Ջավախքի դեպքում միգրացիոն կարելի է նման պատճառաբանություն հրամցնել, թեպետ դա էլ առանձին քննարկման խնդիր է), սակայն Թբիլիսիի հայության մեծ մասը լեզվին տիրապետում է: Մեր զրուցակիցների կարծիքով՝ պետական սեկտորում աշխատանք չգտնելու հիմնական պատճառը հայկական ազգանուններն են, որոնք լուրջ խոչընդոտ են ոչ միայն ներկա փուլում, այլև դեռևս Խորհրդային Վրաստանում: Իսկ ինչ վերաբերում է մասնավոր հատվածին, ապա այստեղ էլ իրադրությունը, մեղմ ասած, բարվոք չէ. «Եթե հայը համապատասխանում է մասնագիտական պահանջներին, նրան ընդունում են աշխատանքի, բայց նույն աշխատանքի դիմաց հային վարձատրում են ավելի քիչ, քան վրացուն», - նշում է մեր զրուցակիցը¹³³:

¹³² Նման տեսակետներ հաճախ են հնչեցվում քաղաքական գործիչների, նաև փորձագետների կողմից, տե՛ս, օրինակ, *Komakhia M.*, Georgia's ethnic history and the present migration processes, Central Asia and Caucasus, 2008, 1/16,

http://www.ca-c.org/online/2008/journal_eng/cac-01/16.shtml

¹³³ Նույն տեղում:

Հետխորհրդային Վրաստանում, հատկապես մայրաքաղաքում, հայության հասարակական դիրքերի անկումն այնքան խորն է, որ ներկայումս արդեն մեծ ջանքեր կպահանջվեն, որպեսզի գոնե մասամբ դրանք վերականգնվեն: 2006թ. իրականացված դաշտային հետազոտությունից ընդհանուր առմամբ պարզ դարձավ, որ անկումային տրամադրություններն ամբողջովին համակել էին տեղի հայությանը, որոնցից շատերն արդեն համոզված էին, որ Թբիլիսին այլևս անհեռանկարային վայր է հայերի համար:

Այդ տարիներին հասարակական ընդհանուր պասիվությունն, իհարկե, երբեմն ընդհատվում էր բողոքի առանձին պոռթկումներով: Օրինակ, 1995թ. ակտիվ հայերը մեծ աղմուկ բարձրացրին, երբ վրացական կողմը փորձում էր յուրացնել «Նորաշեն» հայկական եկեղեցին (մինչև օրս այս հարցը երկու կողմերի միջև լուծված չէ):

Ազգային զարթոնքի թույլ դրսևորումները բացատրվում են ոչ թե վրացական իշխանությունների «մեղմ» քաղաքականությամբ, այլ առավելապես նրանով, որ տեղի հայությանը սպառնում է որպես հայ այդ տարածքում «լինել-չլինելու» վտանգը: Մեր զրուցակիցներից մեկն ասաց, որ «ամբողջ աշխարհից Հայաստանին օգնություն է գալիս, Հայաստանը դրանք բաշխում է, բայց Հայաստանը, վերջապես, պետք է որոշի՝ Վրաստանի համայնքը պահի, թե ոչ»: Իսկ հայկական դպրոցների փակման վտանգը քննարկելիս (մանրամասն տե՛ս ստորև) մեկ ուրիշն ասաց. «Հայկական դպրոցները փրկելն ուշ է»:

Սակայն վերջին տարիներին տեղում նկատելի են հասարակական ակտիվության նոր դրսևորումներ՝ Վիրահայոց թեմում (այդ մասին ստորև կլիտսվի «Եկեղեցի» բաժնում) և հասարակական կազմակերպությունների շարքերում:

Հետխորհրդային համակարգի փլուզումից հետո սկսեց ձևավորվել հասարակական կյանքի կազմակերպման նոր օղակ՝ հասարակական կազմակերպությունների (ՀԿ) սեկտոր: 2005-2006թթ. տվյալ-

ներով, Վրաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված էր 67 հայկական ՀԿ (հայկական ենք համարում այն ՀԿ-ները, որոնք իրենց անվանման մեջ ունեն «հայ», «հայերի» կամ «հայկական» բառերը): Դրանց երեք տասնյակից ավելին գործում էր միայն Թբիլիսիում: Թեպետ իրականում ակտիվորեն գործում էին գրանցված ՀԿ-ներից մի քանիսը միայն, բայց և այնպես, Վրաստանի մյուս ազգային փոքրամասնությունների շարքում ամենակտիվը և քանակապես գերազանցողը հայկական ՀԿ-ներն ու ՀԿ առանձին գործիչներն են: Ստորև ներկայացնում ենք այդ ՀԿ-ների ոչ պաշտոնական ցուցակը.

Աղյուսակ 7

Վրաստանում գրանցված ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները (ոչ պաշտոնական տվյալներ)

Հայկական	Ադրբեջ.	Օս.	Ռուսակ.	Հրեական	Լիովական	Եզդիական	Չեչեն.
67	20	20	15	10	6	5	4

Առաջին ազգային երիտասարդական կազմակերպությունը ստեղծել են հայերը 1996թ., «Վրաստանի հայ երիտասարդական միություն» անունով: Դրա օրինակով հետագա տարիներին նմանատիպ կազմակերպություններ են հիմնել ադրբեջանցիները, հույները, ասորիները, ռուսները և այլն: Տեղում այն կարծիքին են, որ մյուս ազգային փոքրամասնությունները սպասողական դիրք են բռնել և հետևում են հայերի որդեգրած մարտավարությանը: Թերևս, պատճառն այն է, որ հայերն այդ տարիներին դեռ Վրաստանի ամենամեծաթիվ ազգային փոքրամասնությունն էին և շեշտում էին Վրաստանում իրենց պետականաստեղծ ազգ լինելու հանգամանքը: Հայերը նաև աչքի էին ընկնում համեմատաբար ավելի բարձր կազմակերպվածությամբ, քան մյուս փոքրամասնությունները: Չնայած մեր զրուցակիցներից ոմանք նշում են, թե Թբիլիսիի հրեական համայնքն առավել կազմակերպված է գործում, բայց իրականում հայկական տարրի

ներկայությունը Թբիլիսիի ներթնիկ միջավայրում շարունակում է մնալ ամենաառանցքայինը:

Միաժամանակ, բացի գուտ հայկականից, գործում են ընդհանրապես ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներ, որոնք, իրենց ուղղությանը հավատարիմ մնալով, այսպես թե այնպես շոշափում են նաև հայության հարցերը: Թեպետ մենք այդ ՀԿ-ները հայկական չենք համարում, այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտը նույնպես, բնականաբար, առնչվում է տեղի հայության հիմնախնդիրներին: Գործունեության այս ուղղվածությունը համահունչ է արևմտյան ուժի կենտրոնների հռչակած սկզբունքներին, որոնցից այստեղ առավել ակտիվ գործում են Եվրախորհուրդն ու ԵԱՀԿ-ն:

Այսպես, Վրաստանի նոր ձևավորվող ՀԿ դաշտում հայկական կազմակերպություններն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում: Ուստի, ակտիվ հայկական ՀԿ-ները կարելի է դիտարկել որպես Թբիլիսիում հայապահպանության սաղմնային բջիջներ կամ նոր, ժամանակակից տիպի համայնքային օղակներ, որոնք գործում են ազգապահպան ավանդական կառույցներին զուգահեռ:

Սակայն Թբիլիսիի հայկական ՀԿ-ների ակտիվ գործունեության համար գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ և դժվարություններ: Այդ խնդիրների մի մասն օբյեկտիվ է, քանի որ նման դժվարություններ ունեն թե՛ ՀՀ-ում, թե՛ Վրաստանում գործող ՀԿ-ները: Խնդիրներից մեկն այն է, որ նրանց գործունեությանը ծանոթ է հիմնականում հայության ակտիվ հատվածը: Իսկ նրա պասիվ և մեծաթիվ հատվածը, որը զբաղված է առօրյա հոգսերով, հաճախ անտարբեր է, իսկ առավել հաճախ՝ ուղղակի անտեղյակ:

Այդուհանդերձ, հայկական ՀԿ դաշտում նոր միտումներ նկատելի են: Սկզբնական փուլում (1995-2002թթ.) այստեղ ձևավորված հայկական ՀԿ-ները հիմնականում մշակութային ուղղվածության մի-

ջոցառումներ էին իրականացնում՝ գեղեցկության մրցույթներ, «Ուրախների և հնարամիտների ակումբի» խաղեր, երիտասարդական ժամանցային տարբեր միջոցառումներ, դիսկոտեկներ, ինտելեկտուալ խաղեր, օլիմպիադաներ, համերգներ, նաև կազմակերպում և անցկացնում էին եկեղեցական տոներ: Այսինքն՝ նման միջոցառումների շնորհիվ աստիճանաբար սկսել էր ձևավորվել մի ընդհանուր հաղորդակցման դաշտ՝ մտքերի փոխանակման, նոր գաղափարների մեկտեղման համար: Սա շատ կարևոր փուլ էր ոչ միայն ՀԿ-ների կայացման, այլև ընդհանուր համայնական կյանքի աշխուժացման համար: Այս փուլը կարելի է համարել հասարակական ակտիվիստների նոր սերնդի ձևավորման փուլ:

2002-2006թթ. նոր միտումներ նկատվեցին. ՀԿ-ների քանակական աճն արդեն զուգորդվում էր նրանց գաղափարականացմամբ: Այս փուլում ՀԿ-ների գործունեության մեջ շարունակում էր գերիշխել մշակութային ուղղվածությունը, բայց և զուգահեռ անցկացվում էին քաղաքական ակցիաներ. օրինակ՝ ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ, այդ թվում՝ նստացույց թուրքական դեսպանատան առջև, Ջավախքում տիրող իրավիճակին նվիրված տարբեր հանդիպումներ, ելույթներ, գնահատականներ, հոչակագրերի ընդունում և այլն: Այսինքն՝ հայկական ՀԿ դաշտն աստիճանաբար և արդեն բավական ակտիվորեն ներգրավվում էր համահայկական հիմնախնդիրների հորձանուտ՝ ոչ միայն սահմանափակվելով Թբիլիսիի հայությանը հուզող հարցերով, այլև փորձում է իր ներուժը միավորել և ներդնել համայն հայության շահերի առաջնորդմանը:

Այս առանձնահատկությունները լուրջ նախադրյալներ ստեղծեցին վերազարթոնքի, վերակազմակերպման, հայ-վրացական հարաբերություններում իր դերի վերազնահատման և վերիմաստավորման համար:

Եկեղեցի

Հայ Առաքելական Եկեղեցին ավանդաբար առանցքային դերակատարում ունի հայապահպան գործում: Վիրահայոց թեմի հայանպաստ գործունեությունը Թիֆլիսում վերջին ժամանակներս ավելի ու ավելի նկատելի է դարձել: Զրույցների ժամանակ բազմիցս շնորհակալական խոսքեր են ուղղվել Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին այս կամ այն խնդրի (կրթական, բարեգործական, մշակութային և այլն) լուծմանն աջակցելու համար: Ընդհանուր առմամբ, տպավորությունն այնպիսին է, որ Վիրահայոց թեմում խորապես գիտակցում և պատկերացնում են թիֆլիսահայության խնդիրները, որոնք արդյունք են համայնքի դերի նվազման և գրեթե բոլոր ոլորտներում հայկական տարրի ներկայության թուլացման: Թեմին կից գործում են 3 խորհուրդներ՝ երիտասարդների հարցերով, մշակութային և կրթական: Վիրահայոց թեմը կարևոր քայլեր է ձեռնարկում հատկապես երիտասարդների շրջանում՝ վերջիններիս ազգային արմատներին դարձնելու, նրանց մեջ հայկական ոգին պահպանելու ուղղությամբ: Մեծ ջանքեր են գործադրվում հատկապես հոգևոր կառույցի և տեղի հայ երիտասարդության միջև հարաբերությունների սերտացման ուղղությամբ: Այսպես, երկար տարիներ թեմի ջանքերով հայկական դպրոցներից մեկում կազմակերպվում էին հայոց լեզվի դասընթացներ նրանց համար, ովքեր չէին տիրապետում մայրենի լեզվին (նշենք, որ դրանց թիվը հատկապես մեծ է երիտասարդների շրջանում): Մեր երիտասարդ գրուցակիցները մեծ ոգևորությամբ էին նշում, որ ամեն շաբաթ հաճախում են այդ անվճար դասընթացներին, որտեղ 18-20 անձից բաղկացած խմբերում ուսանում են մայրենի լեզուն: Իսկ վերջին տարիներին արդեն այդ դասընթացներն անցկացվում են թեմին կից գործող «Հայարտուն» կենտրոնում, որն ունի նաև շենքային և գույքային բոլոր պայմանները՝ շնորհիվ հայազգի բարերարների:

Այսօր էլ եկեղեցին հիմնականում այն վայրն է, որտեղ հայերը հանդիպում են իրար, շփվում, նորություններ փոխանակում, մտքեր արտահայտում:

Երկար տարիներ Վիրահայոց թեմը խնդիրներ ուներ իրավական դաշտում: Վրացական իշխանությունները հրաժարվում էին թեմը գրանցել որպես կրոնական համայնք կամ կազմակերպություն՝ փոխարենը առաջարկելով մասնավոր իրավունքի սուբյեկտի կարգավիճակ: Այս հարցերին լավատեղյակ մեր զրուցակիցը 2006թ. նշում էր. «Վրաստանի պետությունը մեր թեմին իրավական կարգավիճակ չի ընձեռում: Առաջնորդարանը պետք է լինի թեմի հաշվապահական հաշվեկշռում, բայց իրավական տեսակետից մենք գտնվում ենք փողոցում, քանի որ թեմը կարգավիճակ չունի: Մեզ առաջարկում են գրանցվել որպես հիմնադրամ կամ հասարակական կազմակերպություն, որն իրավունք ունի զբաղվել կրոնական հարցերով: Մենք չենք համաձայնվում, քանի որ պարզ չէ, թե ինչպես կլուծվի այդ պարագայում ժառանգության հարցը: Ի դեպ, մյուս կրոնական փոքրամասնությունները՝ հրեաները, մահմեդականները, կաթոլիկները, նույնպես չունեն իրավական կարգավիճակ»¹³⁴:

Այս խնդրի լուծման նպատակով Վիրահայոց թեմը համագործակցում էր մյուս կրոնական համայնքների հետ: Այսպես, 2006թ. մարտի 27-ին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Վրաստանի քրիստոնեական հարավանությունների առաջնորդների 2-րդ հանդիպումը, որտեղ Լյութերական եկեղեցու առաջնորդն ընդգծեց, որ «կառավարությունը հիշյալ խնդիրների կարգավորմանն ընդառաջ չի գնում, ինչը կարող է հանգեցնել Ստրասբուրգի դատարան դիմելուն՝ պաշտպանելու համար սեփական իրավունքները: Այն պարագայում, երբ ըստ 2002թ. Վրաց

¹³⁴ Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ («Նորավանք» ԳԿՀ արխիվ), դաշտային հետազոտություն, 2006:

ուղղափառ եկեղեցու և Վրաստանի կառավարության միջև ստորագրված սահմանադրական համաձայնագրի՝ վրաց եկեղեցին կողմ էր Վրաստանում գործող կրոնական ավանդական հարանվանություններին իրավաբանական կարգավիճակ տրամադրելուն»¹³⁵:

Եվ վերջապես, 2011թ. հուլիսին Վրաստանի խորհրդարանն ընդունեց օրենք, ըստ որի՝ Վրաստանում գործող կրոնական համայնքները կարող են ստանալ կարգավիճակ: Այդ օրենքի հիման վրա, 2012թ. մարտի 12-ին, Վիրահայոց թեմը Վրաստանի Արդարադատության նախարարության հանրային ռեեստրում գրանցվեց որպես Հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Հոգևոր դաշտում առաջնային խնդիրներից է հայկական եկեղեցիների վերադարձման հարցը: Առաջին հերթին խոսքը 6 եկեղեցիների վերադարձման մասին է, որոնցից 5-ը Թբիլիսիում են, մեկը՝ Ախալցխայում: Թեմի չլուծված իրավական կարգավիճակի հետևանքով եկեղեցիների վերադարձման հարցը երկար մնաց օդում կախված, ինչը խորացրեց վրացիների և հայերի միջև բարոյահոգեբանական անջրպետն ու փոխադարձ անվստահության մթնոլորտը: Ի դեպ, այս խնդրի մասին իր կարծիքն էր արտահայտել նաև ԱՄՆ Պետդեպարտամենտը, որը «2005թ. կրոնի ազատության ասպարեզում առկա դրության մասին» 2005թ. նոյեմբերի 8-ի իր զեկուցման մեջ նշել էր. «Առանձնապես սուր է ծառացած «Նորաշեն» եկեղեցու հարցը: Մինչև խորհրդային ժամանակաշրջանը տաճարը պատկանում էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն: Խորհրդային ժամանակաշրջանում այստեղ տեղադրվել էր գիտությունների ակադեմիա: 1995թ. փետրվարի 15-ին պատրիարքության որոշմամբ եկեղեցին օծվեց որպես Աստվածամոր ավետման եկեղեցի, և այնտեղ մատուցվեց ուղղափառ պատարագ: Այդ կապակցությամբ Հայ եկեղեցին բողոք հայտնեց: Պատրիարքությունը հարկադրված եղավ հեռանալ եկեղե-

¹³⁵ <http://www.azg.am/?lang=AM&num=2006060707>

ցուց, սակայն չզիջեց Հայ եկեղեցուն: Այսօր «Նորաշենը» մատնված է անգործության»¹³⁶: Նշենք, որ այս և մյուս եկեղեցիների վերադարձի հարցը մինչև օրս լուծված չէ: «Ներկայումս Վիրահայոց թեմը վրաց իշխանություններից պահանջում է վերադարձնել խորհրդային իշխանության տարիներին բռնագրավված Թբիլիսիի Սուրբ Նորաշեն Աստվածածին, Սուրբ Նշան, Մուղնեցոց Սուրբ Գևորգ, Երևանցոց Սուրբ Մինաս, Շամխորեցոց Կարմիր Ավետարան եկեղեցիները, Ախալցխեի Սուրբ Նշան եկեղեցին: Վրաց իշխանությունները դեռևս չեն ընդառաջել այդ պահանջին»¹³⁷, գրված է թեմի պաշտոնական կայքէջում:

Եկեղեցիների վերադարձման հարցը հուզում է նաև տեղի հայ երիտասարդությանը: Նրանց կազմակերպված հատվածը ոչ միայն մշտապես ներկա է լինում Սուրբ Գևորգ եկեղեցում տրվող կիրակնօրյա պատարագին, այլև պարբերաբար անցկացնում է «Նորաշեն» եկեղեցու շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ, ինչն աննկատ չի մնում տեղի իշխանությունների և հոգևորականների կողմից: Եկեղեցիների խնդրի «բորբոքմանը նոր «շունչ» հաղորդեց 2004թ. գարնանը Թբիլիսիում անցկացված «Քրիստոնեությունը մեր կյանքում. անցյալը, ներկան, ապագան» միջազգային սիմպոզիումը, որտեղ հայ հոգևորականության ներկայացուցիչների առաջադրած մի շարք դրույթներ՝ անցյալում մոտ 600 շինությունների վիրահայ թեմի կազմում գտնվելու մասին, արտակարգ հուզեցին վրացական գիտական շրջանների առանձին ներկայացուցիչների: Խորհրդաժողովի ընթացքում նրանք ոչ կոռեկտ դիտողություններ արեցին Հայ եկեղեցու ներկայացուցիչների հասցեին, իսկ հետո այդ զայրալից դեմարշը փոխադրվեց մի շարք վրացական թերթերի էջեր»¹³⁸: Այսպես, «Ջորջիան թայմս» լրագրում Վրաստանի հոգևոր ակադեմիայի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ս.Վարդոսանիձեի հարցազրույցում աս-

¹³⁶ Նույն տեղում:

¹³⁷ <http://armenianchurch.ge/hy/tem>

¹³⁸ <http://www.azg.am/?lang=AM&num=2006060707>

վում էր. «Նա (Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը– Թ.Վ.) երևանցի է, և զարմանալի է, որ տեղի հայությունը ձգտում է ազդել նրա վրա: Տեղացի հայերը բավական ագրեսիվ են, ցավոք, մի երկրի նկատմամբ, որն իրենց մեծացրել է, կիսվել մի կտոր հացով»¹³⁹: Գիտնականն իր խոսքն ավարտում է՝ մեջբերելով Իլյա Ճավճավաձեի խոսքերը. «Ավելի լավ է առյուծի հանդիպել ճանապարհին, քան թշնամի ունենալ տանը»¹⁴⁰: Կա մեկ այլ խնդիր ևս. Վրաց ուղղափառ եկեղեցու հոգևորականներն իրենց հավատացյալների շրջանում քարոզում են, թե իբր հայերը քրիստոնյաներ չեն: Ինչպես նշում է իմ զրուցակիցը, «շատ ու շատ վրացիներ մեզնից վախենում են, հարցնում են՝ «դուք սատանայականնե՞ր եք», քանի որ իրենք չեն հասկանում մոնոֆիզիտ բառի իմաստը և իրենց եկեղեցիներում ասում են, որ վրացիներն են առաջինն ընդունել քրիստոնեություն, իսկ հայերը քրիստոնյաներ չեն»¹⁴¹:

Վիրահայոց թեմի առջև ծառայած խնդիրներից է նաև թիֆլիսահայերի շրջանում աղանդավորների թվի աճը: Մեր զրուցակիցներից մեկի հավաստմամբ՝ «աղանդավորներ են գալիս Հայաստանից, որոնք տեղի հայերի շրջանում քարոզում են աղանդավորական ուսմունքներ»: Բնական է, որ հայաստանցի հայերի նկատմամբ վստահությունն ավելի բարձր է, քան աղանդավոր վրացիների նկատմամբ, ինչի մասին, թերևս, տեղյակ են աղանդների տարածման առաքելություն ստանձնած կազմակերպությունները: Այդ պատճառով կազմակերպվում է Հայաստանից աղանդավոր քարոզիչների «գործուղում» Թիֆլիսի՝ տեղի հայության շրջանում համապատասխան քարոզչական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Արտահայտելով իր հետևողականությունը վիրահայերի հոգևոր անվտանգության

¹³⁹ Газета «Джорджиан Таймс» от 20-27 июля 2006г., №29 (393), www.armenia.ge.

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ («Նորավանք» ԳԿՀ արխիվ), դաշտային հետազոտություն, 2011:

հիմնահարցերում, ինչպես նաև հայ եկեղեցիների վերադարձման խնդրում՝ Վիրահայոց թեմը 2006թ. ձեռնամուխ եղավ հոգևոր, մշակութային, լրատվական հանդեսի հրատարակմանը, որն անվանվեց «Նորաշեն»: Առաջին համարի ներածական խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը նշում է. «Վիրահայությունը, ավաղ, շարունակում է ապրել միայն իր անցյալի փառքով: Ազգային-եկեղեցական ու կրթական-մշակութային կյանքում, որոշ հանգամանքների բերումով, դեռևս նկատելի չէ դրական լուրջ տեղաշարժ: Սակայն այլևս ժամանակն է իրատեսություն գնահատել արդի մարտահրավերները և արթմնի տեր կանգնել մեր պատմական ժառանգությանը, վերանորոգել մեր խոնարհված եկեղեցիները, վերականգնել թեմական և ծխական կառույցները, զարգացնել մշակութային և կրթական կյանքը՝ հայորդիներին ոգեշնչելով Հայոց պատմությամբ, մայր Հայրենիքով ու Սուրբ Էջմիածնով»¹⁴²:

Վիրահայոց թեմին կից այժմ լայն գործունեություն է ծավալել «Հայարտուն» կենտրոնը (այդ մասին ստորև՝ «Մշակութային օջախներ» բաժնում):

Դպրոց

Հետխորհրդային շրջանում հայության հասարակական դիրքերի թուլացմանը զուգընթաց՝ լուրջ խնդիրներ առաջացան կրթության բնագավառում: Թբիլիսիի հայության ազգապահպանման խնդիրը մեծապես պայմանավորված է առաջին հերթին հայկական դպրոցների անխափան գործունեությամբ: Իրապես, եթե չլինի հայկական դպրոցը, հայկական թատրոնը կկորցնի իր հանդիսատեսին, հայերեն հրատարակվող թերթը՝ իր ընթերցողին, հայկական հեռուստատեսերը՝ հեռուստադիտողին, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը՝ իր հավատացյալին:

¹⁴² http://www.armenia.ge/norashen/norashen_2_arm.pdf.

2003թ. տվյալներով, Թբիլիսիում գործում էր 8 դպրոց, որոնցից թիվ 21-ը, 86-ը, 110-ը՝ հայ-ռուսական, իսկ թիվ 93-ը, 95-ը, 104-ը, 109-ը, 131-ը՝ հայկական: Ընդհանուր աշակերտների թիվը 1330 էր:

2006թ. Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլու կրթական «բարեփոխումը» ճակատագրական դարձավ: Նույն թվականի տվյալներով, Թբիլիսիում դեռ շարունակում էին գործել նշված 8 դպրոցները, սակայն ներդրվեց, այսպես կոչված, վաուչերային համակարգը, և հայկական 6 դպրոցների ճակատագիրը վտանգվեց: Այս «բարեփոխումը» ենթադրում էր, որ բոլոր այն դպրոցները, որտեղ աշակերտների թիվը 700-800-ից պակաս է, մեխանիկորեն պետք է փակվեն, քանի որ պետությունն ի վիճակի չէ այլևս սուբսիդավորել դրանք: Ցավոք, նշված 8 դպրոցներում սովորող հայ աշակերտների թիվը միասին վերցրած էր մոտ 700 աշակերտ: Դպրոցներից միայն երկուսն էին (թիվ 95 և 104) մնացել ամբողջությամբ հայկական: Իսկ աշակերտների թիվը նշված երկու դպրոցներում միասին վերցրած 253 է. 104-րդ դպրոցում՝ 153, 95-րդում՝ 100: Մնացածն ունեին հայկական սեկտորներ, որոնք գործում էին ռուսական և վրացական սեկտորներին զուգահեռ:

Այսպես, փակման վտանգը կախվեց թիվ 93-րդ դպրոցի գլխին, որը դեռևս խորհրդային տարիներին խոշոր հայկական դպրոցներից էր: Այն գտնվում է հայաշատ թաղամասում՝ Հավլաբարում: Դպրոցի հայկական սեկտորում 2006թ. դրությամբ ուսանում էր ընդամենը 60 աշակերտ (ռուսականում՝ 340): Ընդ որում՝ ռուսական սեկտորի աշակերտների ճնշող մեծամասնությունը հայեր էին: Զուգահեռ՝ դպրոցի ներսում գործում էր նաև վրացական սեկտոր, որտեղ ուսանում էին նախկին 98-րդ վրացական դպրոցի սաները: Բանն այն է, որ 98-րդ վրացական դպրոցը հրդեհի պատճառով մասամբ այրվել էր: Սակայն տեղի հայության շրջանում կարծիք էր շրջանառվում, թե այն հրդեհվել էր միտումնավոր, որպեսզի վրացի աշակերտներին տեղափոխեն հարևանությամբ գտնվող 93-րդ հայկական դպրոց, ինչը կհանգեցներ վեր-

ջինիս վրացացմանը: Կարծիք կա նաև, թե դպրոցի շենքի հրդեհմամբ լուծվել է նաև նեղ անձնական շահերից բխող խնդիր՝ հետագայում դպրոցի շենքը շուկայականից ցածր գնով վաճառելու նպատակով:

Պետք է նշել, որ չնայած ԽՍՀՄ-ն անցել էր պատմության գիրկը, սակայն հետխորհրդային տարիներին Թբիլիսիի հայերը դեռ զանգվածաբար շարունակում էին հաճախել ռուսական դպրոցներ: 2006թ. դրանցում սովորողների մոտ 90%-ը, իսկ ուսուցիչների 75-80%-ը հայեր էին: Պատճառներից մեկը, հավանաբար, դեռ խորհրդային կարգերից մնացած իներցիան էր, երբ մարդիկ իրենց զգում էին մեծ ռուսական տարածքի քաղաքացիներ: Մյուսն այն էր, որ ծնողների մի մասը երեխաների ապագան տեսնում էր ոչ Վրաստանում, ցավոք՝ ոչ էլ Հայաստանում, այլ արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանում: Բայց կար նաև մեկ այլ կարևոր պատճառ. այն, որ ռուսական դպրոցները կարծես թե ապահովում էին թիֆլիսահայի համար մի տեսակ անցումային կամ միջանկյալ կարգավիճակ: Թաքնվելով «հզոր լեզվի» և երբեմնի «հզոր կայսրության» հեռացող սովերի հետևում՝ հայության մի զգալի հատված, կարծես թե, այդ կերպ փորձում էր խուսափել անկախության տարիներին օրըստօրե հզորացող վրացական էթնոմշակութային միջավայրի կլանող ազդեցությունից:

Տեղում ակտիվ շրջանառվում էր այն կարծիքը, թե հայկական դպրոցների փակումն արդարացված է: Ծնողները, մտահոգված լինելով երեխաների ապագայով, խուսափում են նրանց հայկական դպրոց ուղարկել՝ պատճառաբանելով, որ վերջիններն ի վիճակի չեն ապահովել իրենց երեխայի՝ Վրաստանի լիիրավ քաղաքացի լինելու և ներքին կյանքին ինտեգրվելու հեռանկարը: Վրաստանում այդ տարիներին ՀՀ դեսպան Հ.Սիլվանյանի խոսքերով, «Թբիլիսիում հայկական դպրոց հաճախում է յուրաքանչյուր քառասուներորդ հայ սովորողը, մյուսները տարակենտրոնացված են ռուսական և վրացական դպրոցներում»¹⁴³:

¹⁴³ <http://www.azg.am/?lang=AM&num=2006060707>

Տեղում գտնում են, որ Թիֆլիսի հայկական դպրոցները փրկելու ջանքերն արդեն ուշացած են, և գործընթացն անդառնալի հետևանքներ կունենա հայապահպանության առումով:

Վրաստանի հայկական դպրոցների ապագայի վերաբերյալ դեռ 2006թ. առկա էր երկու հիմնական մոտեցում.

Առաջին (որը նաև Վրաստանի կառավարության՝ ի դեմս կրթության նախարարության, տեսակետն է)՝ փակել 8 հայկական դպրոցները, փոխարենը թողնել միայն քաղաքի կենտրոնում գտնվող 2 դպրոց՝ 95-րդը և 104-րդը: Այս մոտեցման կողմնակիցները, որպես դրա դրական կողմ, նշում են, որ ավելի լավ է 8 վատ դպրոցի փոխարեն ունենալ 2 բարձրակարգ ժամանակակից դպրոց: Գտնում են, որ պետք է քայլեր ձեռնարկվի նշված 2 հայկական դպրոցներում հանրակրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, վրացերենի դասավանդման որակի բարելավման ուղղությամբ (օրինակ՝ երկլեզու կրթության համակարգի ներդրում¹⁴⁴, որը կիրառվում է մի շարք եվրոպական երկրներում, ուր բնակվում են ազգային փոքրամասնություններ) և այլն: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ նման ձևով կարելի է կասեցնել թիֆլիսահայերի օրեցօր աճող արտագաղթը: Գտնում են, որ պետք է ներշնչվել և ոգևորվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի պատմական օրինակով, որտեղ ուսանելը արտասահմանցիների համար մեծ պատիվ էր: Ինչպես նշեց մեր գրուցակիցը, «երբ Ներսես կաթողիկոսը Ներսիսյան դպրոցը ստեղծեց, թիֆլիսահայերի 80%-ը հայերեն չէր խոսում, բայց նա դպրոցը հզորացրեց, ու բոլորը ավտոմատ գնացին էլ դպրոց: Եթե լավ դպրոց լինի, ծնողները կտեսնեն, որ հեռանկար կա»¹⁴⁵:

¹⁴⁴ Գոյություն ունեն երկլեզվյա կրթության տարբեր մոդելներ: Հայապահպանության տեսակետից նախընտրելի մոդելների մասին առավել մանրամասն տե՛ս *Վարդանյան Թ.*, Երկլեզու (բիլինգվալ) կրթության առանձնահատկություններն ազգապահպանության հարցերի տեսանկյունից, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», Եր., 2010, թիվ 5:

¹⁴⁵ Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ («Նորավանք» ԳԿՀ արխիվ), դաշտային հետազոտություն, 2011:

Սակայն այս մոտեցումը վտանգներ էր պարունակում, քանի որ դրա կյանքի կոչման պարագայում քաղաքի տարբեր շրջաններում գտնվող 6 դպրոցների հայկական սեկտորների աշակերտները կնախընտրեն տեղափոխվել իրենց բնակավայրին մոտ գտնվող ռուսական կամ վրացական դպրոցներ, որովհետև 2 բարձրակարգ դպրոցներ հաճախելու համար լրացուցիչ տրանսպորտային ծախսեր են հարկավոր: Արդյունքում՝ հայ աշակերտների թիվը կնվազեր և կսահմանափակվեր միայն այդ երկու դպրոց հաճախող աշակերտներով, որոնք բնակվում են մոտակայքում:

Երկրորդն ավանդական մոտեցում է՝ ամեն գնով աշխատել պահել բոլոր 8 դպրոցները: Այս մոտեցման կողմնակիցները գտնում էին, որ անիմաստ է սպասել Վրաստանի կառավարության աջակցությանը, միայն Հայաստանն է, որ կարող է միջամտել և ուղղակի ֆինանսավորել այդ դպրոցները: Անշուշտ, այս մոտեցման կողմնակիցների բանակը մեծ է. նրանց թվում են հիմնականում փակման ենթակա հայկական դպրոցների ուսուցիչները, որոնց մեծ մասը գործազրկության կմատնվեր, ինչպես նաև 2006թ. դեռևս գործող բուհական համակարգի միակ՝ հայոց լեզվի և գրականության բաժնի աշխատակազմը: Սակայն 2006-2007թթ. ուսումնական տարում նշված 8 դպրոցները դեռ շարունակեցին իրենց կրթական առաքելությունը, բայց մի քանի դպրոցներում իրականացվեց հետևյալ ծրագիրը. ձևավորվեցին, այսպես կոչված, կոմպլեկտ դասարաններ: Այսինքն, երբ միավորվում են մի քանի դասարաններ (օրինակ՝ 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ և այլն), կրթական գործընթացը վարում էր մեկ ուսուցիչ, բայց դասարանում նստած էին տարբեր տարիքի և դասարանի աշակերտներ: Այս կերպ հնարավոր դարձավ կրճատել դպրոցի ուսուցչական կազմը, սակայն, անշուշտ, տուժում էր ուսումնառության որակը, առաջանում էին նոր դժգոհություններ ծնողների շրջանում, և աշակերտների թիվը շարու-

նակում է նվազել: Փաստորեն, այս մեթոդով հայկական դպրոցների և հայեցի կրթությունն ստանալու գլխավոր խնդիրը ոչ միայն չլուծվեց, այլև խորացավ:

Այս զարգացումներին զուգահեռ՝ տարեցտարի ավելանում էր վրացական դպրոցներում ազգությամբ հայ աշակերտների թիվը, որը 2006-2007թթ. հասավ մոտ 15%-ի: Դրան նպաստում էր 2006թ. կառավարության որոշումը, ըստ որի՝ բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները (թե՛ հայկական, թե՛ ռուսական և թե՛ այլ դպրոցների) պարտավոր էին հանձնել վրացերեն լեզվի քննություններ նույն բարդությամբ, ինչ և պահանջվում էր վրացական դպրոցների շրջանավարտներից: Արդյունքը եղավ այն, որ եթե մինչև այդ տարիները հայերը զանգվածաբար հաճախում էին ռուսական դպրոցներ, ապա դրանից հետո նկատվում է դեպի վրացական դպրոցներ հայերի հոսքի ավելացում:

Հետագա տարիներին իրավիճակը շարունակական անկում ապրեց: Արդեն 2006-2007թթ. կար ընդամենը 7 հայկական դպրոց, որոնցից ընդամենը երկուսն էին, որ ամբողջությամբ հայկական էին՝ 95-րդը և 104-րդը: Իսկ մնացած դպրոցները հայ-ռուսական էին: Նշված յոթ դպրոցներում միասին վերցրած սովորում էր 732 աշակերտ:

Ներկայումս կարող ենք արձանագրել, որ Թբիլիսիի հայոց ազգային կրթության պատմությունը մոտենում է ավարտին: Փլուզմանն, անշուշտ, նպաստեց կրթության ոլորտում վրացական իշխանությունների «բարեփոխիչ» քաղաքականությունը, սակայն հայկական կողմն էլ իր մեղքի բաժինն ունի. թիֆլիսահայությունը պատրաստ չգտնվեց անկախության տարիներին առաջացած նոր մարտահրավերների դիմակայմանը: Վերջին տարիներին անդառնալիորեն պատմության գիրկն անցան Թբիլիսիի այնպիսի խոշոր հայկական դպրոցներ, ինչպիսիք էին 93-րդը (դարձավ վրացական), 110-րդը (փակվեց):

110-րդ միջնակարգ հայկական դպրոցը գտնվում էր հայաշատ «Մետրոստրոյ» թաղամասում: Բավական մեծ հայկական դպրոց էր,

որի սաները հաջողությամբ մասնակցում էին օլիմպիադաներին: Դպրոցում կազմակերպվում էին բազմաթիվ միջոցառումներ: 2011թ. այն փակվեց, իսկ սաներին տեղափոխեցին հարևանությամբ գտնվող վրացական 103-րդ դպրոց: Նախապես աշխատանքից հեռացվեց դպրոցի տնօրենը, որին նախ կարճաժամկետ փոխարինեց փոխտնօրենը, այնուհետև դպրոցը փակվեց: Ներկայումս 110-րդ հայկական դպրոցի հայազգի տնօրենը հայտնվել է փոխտնօրենի կարգավիճակում վրացական 103-րդ դպրոցում, իսկ բազմաթիվ հայ ուսուցիչներ կրճատվել են: Փակման եզրին են 131-րդի, 132-րդի, 81-րդի հայկական բաժինները, որոնցում 2011թ. առաջին դասարաններ չեն կազմավորվել (նշենք, որ օրենքը թույլ է տալիս առաջին դասարան կազմավորել ընդամենը երեք աշակերտի առկայության դեպքում): Նշված դպրոցներում մնացել են միայն բարձր դասարաններ, որոնց ավարտելուց հետո հայկական բաժիններն ինքնըստինքյան կփակվեն: Սակայն հնարավոր է ավելի տխուր հեռանկար. երբ այդ բաժինները փակվեն մինչև աշակերտների ավարտական տարիքի հասնելը: Բանն այն է, որ թեև առաջին դասարան կազմավորելու համար բավական է ընդամենը երեք աշակերտ, սակայն, համաձայն գործող կրթական օրենքի, 6-րդ դասարանը պետք է համալրված լինի ամենաքիչը 18 աշակերտով (ավագ դպրոցում՝ ամենաքիչը 21 աշակերտ), հակառակ պարագայում տնօրինությունն իրավունք ունի լուծարել այդ դասարանը և աշակերտներին ցրել: Ներկայումս այդ դասարաններում առկա աշակերտների թիվն էական հույսեր չի ներշնչում, որ դրանք կպահպանվեն մինչև սաների ավարտական տարին: Եթե դասարանները փակվեն, չի բացառվում, որ աշակերտների մի մասը կնախընտրի ոչ թե տեղափոխվել իր բնակավայրից հեռու մեկ ուրիշ դպրոց, որտեղ կա հայկական բաժին, այլ կգնա նույն դպրոցի ներսում գործող վրացական բաժին:

2011թ. ևս շրջադարձային եղավ: Երկրի ղեկավարությունը որոշեց փակել ռուսական դպրոցները՝ պատճառաբանելով, թե, իբր, այդ դպրոցների շրջանավարտները ցածր ցուցանիշներ են ներկայացրել ավարտական քննությունների ժամանակ: Շրջանառվող կարծիք կար, որ ռուսական բաժինների շրջանավարտների քննական գնահատականները դիտմամբ են ցածր նշանակվել (հրականում դժվար է պնդել այս կարծիքը, սակայն նման մեղադրանքների գոյությունն իսկ արդեն անհանգստացնող է և ցույց է տալիս հայ հասարակության շրջանում իշխանությունների նկատմամբ վստահության ցածր աստիճանը): Ինչևէ, ռուսական դպրոցները փակվեցին: Հայերի համար երկու ելք էր մնում. կամ վերադառնալ արմատներին՝ հայկական դպրոց, կամ գնալ վրացական դպրոց՝ անդառնալիորեն վրացանալ: 2011թ. սեպտեմբերին դեռ ակնկալիքներ կային, որ ռուսական դպրոցների փակման արդյունքում դեպի հայկական դպրոց կամ հայկական բաժիններ հոսք կնկատվի: Սակայն, ցավոք, այդպես չեղավ: Երկրնտրանքի պարագայում հայ ծնողների գերակշռող մասը որոշեց երեխային տանել վրացական դպրոց:

2011թ. դրությամբ Թբիլիսիում գործում էր մեկ հայկական դպրոց՝ 104-րդը, որտեղ սովորում էր 207 աշակերտ (նույն թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ) և մեկ հայ-վրացական դպրոց (103-րդը), որտեղ հնարավոր եղավ կազմավորել առաջին դասարան (ընդամենը 15 հոգի):

Ինչպես տեսանք, Վրաստանի կառավարությունը հետևողական ջանքեր է գործադրել Թբիլիսիում հայապահպանության հիմնական օջախի՝ հայ դպրոցի վերացման ուղղությամբ: Հայեցի կրթության ոլորտում խնդիրներն արդեն համակարգային բնույթ են կրում, իսկ իրավիճակն այնքան օրհասական է, որ այսօր արդեն մեծ ջանքեր կպահանջվեն առկա զարգացումները կասեցնելու համար: Եթե իրատես լինենք, ապա պետք է նշենք, որ ներկայումս հայության ներուժը

բավարար չէ այս խնդրի կարգավորման համար: Տեղի հայությունը խնդիրը լուծելու միակ ուղին համարում է ՀՀ իշխանությունների և սփյուռքի աջակցությամբ համատեղ ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումը:

Բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ)

Հայտնի է, որ միայն կրթական ամբողջական համակարգը (մանկապարտեզ-դպրոց-բուհ) կարող է ապահովել դպրոցների գոյությունը: Ծնողների գերակշիռ մասը երեխաներին դպրոց ուղարկելիս մտածում է հետագայում բուհ ընդունվելու նրա հնարավորությունների մասին: Որքան նշված դպրոցը լայն հնարավորություններ է ընձեռում հետագայում ուսումը շարունակելու համար, այնքան այն արագ է համալրվում աշակերտներով. սա պարզ է ու հասկանալի:

Հետխորհրդային շրջանում Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտը, որտեղ 1939-ից գործում էր հայկական ամբիոնը, տարիներ շարունակ հայկական դպրոցներին ապահովել է բարձրորակ ուսուցիչներով ոչ միայն հայոց լեզու, հայ գրականություն, այլև հայերեն լեզվով ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա և այլ առարկաներ դասավանդելու համար: Այսօր այս ինստիտուտն այլևս գոյություն չունի: Այն միացվել է Օտար լեզուների ինստիտուտին և վերանվանվել Ի.Ճավճավաձեի անվան լեզուների համալսարան: Սկզբում գործում էր հայկական բաժին, բայց վերջերս այն միավորվել է ադրբեջանական, ռուսական և այլ բաժինների հետ: Խորհրդային շրջանում հայկական ամբիոնը միջինը տարեկան ունենում էր 10 ուսանող: 2005-2006 ուսումնական տարում ամբիոնը 2 դիմորդ է ունեցել, հետո դասախոսական կազմի ջանքերով հասցվել է 6-ի, բայց 1 ուսանող վճարովի համակարգից դուրս է մնացել վարձը չմուծելու պատճառով: Պատճառն այն է, որ դպրոցներում շարունակաբար կրճատվում են հայոց լեզվի և գրականության դասաժամերը, որի

արդյունքում նույնիսկ տարիների փորձ ունեցող ուսուցիչներն են հայտնվում գործազուրկի կարգավիճակում: Պարզ է, որ դպրոցի շրջանավարտները շահագրգռված չեն լինի ընդունվելու մի բաժին, որն ավարտելուց հետո աշխատանքի տեղավորման լուրջ, գրեթե անլուծելի խնդրի առջև են կանգնելու: Այս խնդրի լուծումը պետք է ապահովեր հայ-վրացական համալսարանը, որի ստեղծման համար բավական ջանքեր էին գործադրվել լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օրոք, սակայն վերջին տարիներին այս գաղափարը վերջնականապես տապալվեց:

Տպագիր մամուլ

Ներկայիս գլոբալացվող աշխարհում օրըստօրե աճում են տեղեկատվության դերն ու նշանակությունը: Եթե հետևենք հայտնի տեսաբան Բ.Անդերսոնի կարծիքին, ապա տպագիր արտադրանքի դերն ազգային ինքնագիտակցության ձևավորման (ավելացնենք՝ նաև վերագործոնքի) մեջ գրեթե իրեն հավասարը չունի¹⁴⁶: Նա նշում է, որ կապիտալիզմը և տպագրությունը ձևավորեցին միալեզու զանգվածային ընթերցողների հանրույթ, որն էլ նպաստեց (համենայնդեպս Եվրոպայում) ազգերի ձևավորմանը: Տպագրության կազմակերպման գործընթացում ընթերցողներն «աստիճանաբար սկսեցին գիտակցել հարյուր հազարավոր կամ միլիոնավոր մարդկանց ներկայությունն իրենց հետ միևնույն լեզվական դաշտում, նաև այն, որ հենց այդ հարյուր հազարը կամ միլիոնն են միայն պատկանում այդ դաշտին: Եվ ազգային պատկերացրած հանրույթի բջիջը ձևավորում են այդ համաընթերցողները, որոնք տպագրության միջոցով միավորված են իրար»¹⁴⁷: Մի կողմ թողնելով ազգերի ձևավորման դիսկուրսը (այն սույն աշխատության մեջ արծարծվող խնդրի շրջանակներից դուրս է՝

¹⁴⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս *Андерсон Б., Воображаемые сообщества: размышления об истоках и распространении национализма*, М., 2001.

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 67:

նշենք, որ ազգային լեզվով հրատարակվող տպագիր մամուլն ի գորու է խթանել ազգային վերագարթոնքը, նպաստել ինքնագիտակցության աճին, ազգային լեզվամտածողության ձևավորմանը և նոր լիցք հաղորդել համայնքներում հայապահպանման գործին:

Սակայն ցավով պետք է նշել, որ Թբիլիսիի տեղեկատվական դաշտում հայկական տարրը թույլ է ներկայացված: Խոսքն առաջին հերթին հայալեզու տպագիր մամուլի խիստ սակավաթիվ լինելու մասին է: Այսպես, Թբիլիսիում հետխորհրդային շրջանում գրեթե անխափան լույս է տեսնում հայերեն ընդամենը 1 թերթ՝ «Վրաստան»-ը: Այն պաշտոնական թերթ է (խմբ.՝ Վրաստանի ԱԺ պատգամավոր Վ.Բայբուրթ), այդ պատճառով տեղի հայության կողմից թերթն ընկալվում է որպես վրացական իշխանությունների խոսափող, ուստի չի կարող բավարարել հայկական թեմատիկայի նկատմամբ առկա տեղեկատվական պահանջարկը: Թերթում հիմնականում զետեղվում են պաշտոնական լրահոսը և վրացալեզու պաշտոնական թերթերի համեմատ ավելի մանրամասն նյութեր հայ-վրացական միջպետական մակարդակի հանդիպումների ու քննարկումների մասին:

Կարճ ժամանակով լույս է տեսել նաև հայերեն մեկ մանկական թերթ՝ «Արևիկ»-ը (համանուն բարեգործական ՀԿ ջանքերով): Առաքվում էր հիմնականում Թբիլիսիի, Ջավախքի, Երևանի հայկական դպրոցներ: Թերթը պարբերաբար ֆինանսական խնդիրներ էր ունենում՝ բազմիցս կանգնելով փակման վտանգի առջև: Բացի այդ, պարբերականի շուրջ հավաքված անձանց և մանուկ ընթերցողների երագանքն է «թերթը տեսնել գունավոր»: Թերթի խմբագրի խոսքերով՝ «Այստեղի հայկական դպրոցներ ուղարկում ենք, կեսն անվճար ենք տալիս, կեսին գոնե ասում ենք՝ վճարեք, որ կարողանանք հաջորդ համարը թողարկել: Տպարանում շաբաթներով մնում է, չենք կարողանում հանել... Նամակներ ենք ստանում, ուզում են, որ գունավոր լինի, բայց ֆինանսի պատճառով դեռ անհնար է»¹⁴⁸: Այժմ այն այլևս չի հրատարակվում:

¹⁴⁸ Հարցազրույցներ..., դաշտային հետազոտություն, 2006:

Մյուս հայալեզու հրատարակությունն արդեն վերը նշված «Նորաշեն» հանդեսն է: Հանդեսի անդրանիկ համարում կարդում ենք. «Նոր պարբերականը ծառայելու է հայության միասնականության ամրապնդմանը, հուզող հիմնախնդիրների վերհանմանն ու դրանց հնարավոր լուծմանը: Այն դառնալու է հայության տարբեր շերտերի ու դիրքի ներկայացուցիչների համար մտքերի և կարծիքների արտահայտման միջոց»¹⁴⁹: Հանդեսը, տեղի հայությանը հուզող թեմաներից զատ, անդրադառնում էր նաև Հայ եկեղեցու պատմությանը, ծեսերի նկարագրությանը, դրանց խորհրդի պարզաբանմանը և այլն:

Նշված հրատարակությունները հայալեզու են: Ակտիվ անդամներից մի քանիսի կարծիքով՝ հայալեզու հրատարակության պահանջարկն օր օրի նվազում է, քանի որ մայրենի լեզուն հասկանալի է հիմնականում ավագ սերնդի ընթերցողներին: «Նոր սերունդ» ՀԿ ջանքերով կրկին կարճ ժամանակով լույս է տեսել համանուն թերթ ռուսալեզու հայ ընթերցողների համար: Սակայն այն զանգվածային լրատվամիջոց համարել չի կարելի, քանի որ թերթի էջերում առավելապես լուսաբանվում էին ՀԿ սեկտորին, նշված կազմակերպության գործունեությանն առնչվող թեմաներ:

Բոլորովին վերջերս Բաց հասարակություն ինստիտուտի աջակցությամբ սկսել է տպագրվել «Արձագանք» հայալեզու թերթը: Այն ունի նաև քառալեզու կայքէջ՝ www.ardzagank.ge:

Էլեկտրոնային մամուլ

Տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներից է համացանցը: 2005-2008թթ. գործարկվել է առաջին հայկական կայքը (<http://www.armenia.ge>), որը բավական մեծ թվով այցելուներ ուներ: Կայքում գործում էր մշտական ֆորում, որտեղ տարբեր թեմաներով քննարկումներին ակտիվ մասնակցում էին ոչ միայն թիֆլիսահայերը, այլև

¹⁴⁹ Հարցազրույցներ..., դաշտային հետազոտություն, 2006:

երիտասարդներ Հայաստանից, սփյուռքից, անգամ վրացի երիտասարդներ: Այն ռուսալեզու էր: Թեպետ նման կայքի գոյությունն արդեն մեծ առաջընթաց էր, այնուամենայնիվ, այն չէր կարող զանգվածային լրատվական ծառայության վերածվել այդ փուլում դեռևս համացանցից օգտվողների սահմանափակ քանակի պատճառով:

Ինչպես վերը նշվեց, ներկայումս կայքէջ ունի «Արձագանք» թերթը՝ <http://ardzagank.ge>: Այն քառալեզու է՝ հայերեն, վրացերեն, անգլերեն և ռուսերեն:

Վիրահայոց թեմը նույնպես ունի իր քառալեզու (հայերեն, վրացերեն, անգլերեն, ռուսերեն) կայքէջը, որն ունի բազմաթիվ այցելուներ և մշտապես թարմացվում է: Այստեղ ներկայացվում են ոչ միայն հոգևոր հարցերն ու թեմի գործունեությունը, այլև մշակութային անցուղարձին առնչվող տեղեկատվություն:

Եթերաժամ (հեռուստատեսություն, ռադիո)

Վրաստանի հեռուստատեսությամբ շաբաթը մեկ անգամ հեռարձակվում էր ընդամենը մեկ հայերեն հաղորդում (ինչը Եվրախորհրդի պահանջն է):

Առանց մեկնաբանության ներկայացնենք հարցազրույցից մի հատված.

Հարց – Հեռուստատեսության ընթացքում էթնիկ, քաղաքական խնդիրներ շոշափո՞ւմ էք:

Պատ. – 2004թ. դեկտեմբերի 22-ից եթերում ենք... էթնիկ պրոբլեմների մասին չենք խոսում: Մեզ խնդրել են, որ ոչ մի պոլիտիկայի մասին չխոսենք:

Հարց – Իսկ Հայաստանի մասին լուրեր տալի՞ս էք:

Պատ. – Չէ, Հայաստանը մեր ֆորմատում չի նստում, մենք պիտի լուսաբանենք միայն Վրաստանի և Վրաստանի հայության վերաբերյալ լուրեր, ուրիշ բան չի կարելի: Եթե Հայաստանից պաշտոնական

այցով գալիս են, մենք ունենք թույլտվություն 1.5 րոպեում դա լուսաբանել:

Հարց - Ձեր արդեն 1.5 տարվա գործունեության ընթացքում երբևիցե Ղարաբաղի մասին գոնե 1 սյուժե տվե՞լ եք, կամ «Ղարաբաղ», «Արցախ» բառերը երբևէ եթերից արտասանվե՞լ են:

Պատ. - Չէ, մեզ թույլ չեն տալիս¹⁵⁰:

Զրույցից պարզ է, որ պետական հովանավորությամբ հեռարձակվող այս հեռուստահաղորդումը գրաքննության նման պայմաններում ի գործու չէ ապահովելու տեղեկատվական հոսքերն այն քանակով և բովանդակությամբ, որն անհրաժեշտ է հայապահպանության համար:

Սակայն նշենք, որ ներկայումս այս ձևաչափը փոփոխության է ենթարկվել: Հեռուստաեթերը գործում է ամեն օր, ժամը 20.00-ին, 10-12 րոպե՝ բառացությամբ շաբաթ-կիրակի օրերի:

Ժամանակին թիֆլիսահայերը Հայաստանի մասին հայերեն կցկտուր տեղեկություններ կարող էին ստանալ նաև ռադիոէթերով, որը տևում էր ընդամենը 5 րոպե, նույնպես ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից: Այժմ այն դադարել է հեռարձակվել: Մեր գրուցակիցները (հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչները) խոր ափսոսանքով նշում են, որ չկա հայկական ռադիո. «Ռադիոն շատ կարևոր է, երբ որ լույս չկար, մարդիկ էլեմենտներ էին առնում, որ լսեն: Մենք էդ ռադիոյով ենք մեծացել, մասսայաբար բոլորը լսում էին: Հաղորդում էին հայկական երգ-երաժշտություն»¹⁵¹:

Փաստորեն, վիրահայությունը հայալեզու հրատարակություններն ընթերցում է հիմնականում այն պատճառով, որ դրանք հայալեզու են, իսկ համապարփակ տեղեկատվություն շարունակում է քաղել ռուսալեզու կամ վրացալեզու մամուլից, հեռուստահաղորդումներից

¹⁵⁰ Հարցագրույցներ..., դաշտային հետազոտություն, 2006:

¹⁵¹ Հարցագրույցներ..., դաշտային հետազոտություն, 2006:

և ռադիոհաղորդումներից: Այսինքն՝ առկա տեղեկատվական լրահոսը չի բավարարում (եթե օբյեկտիվ լինենք, չի էլ կարող բավարարել) տեղեկատվության պահանջը, քանի որ այն գործում է Վրաստանի պետության ֆինանսների հաշվին:

Մշակութային օջախներ

Թիֆլիսում հայության ներկայության մասին հիշեցնող ևս մեկ կարևոր և առանցքային օջախ է գործում՝ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը: Այն իր խաղացանկում ունի 20-ից ավելի ներկայացումներ, հանդիսատեսի դատին է հանձնում տարեկան 4-5 ներկայացում, կոլեկտիվը բաղկացած է 103 հոգուց: Թատրոնը ֆինանսավորվում է Վրաստանի մշակույթի նախարարության կողմից¹⁵²: Պետք է նշել, որ Հայաստանի կառավարությունը մշտապես մեծ ուշադրություն է արժանացրել Թիֆլիսի հայկական թատրոնի խնդիրներին: ՀՀ պետական բյուջեից տարեկան ֆինանսական աջակցություն է տրվում, ինչի շնորհիվ թատրոնը պահպանվել է և գործել գրեթե անխափան: Հատկապես 1990-ականների ճգնաժամային իրավիճակում այդ օգնությունը խիստ կարևոր է եղել: Թատրոնի շենքն այսօր աստիճանական վերանորոգման է ենթարկվել: 2005 թվականից թատրոնի շենքը ՀՀ նախագահի (Ռ.Քոչարյան) հովանավորությամբ նաև ջեռուցվում է: Իսկ 2006թ. հոկտեմբերին անցկացվեցին 150-ամյա թատրոնի հոբելյանական միջոցառումները, որոնք ընթացան ՀՀ վարչապետի (Ա.Մարգարյան) հովանավորությամբ: Թատրոնի հանդիսատեսների թիվն աստիճանաբար ավելանում է: Ներկայացումները հայերեն են: Բայց արդեն լուծվել է նաև ռուսալեզու և վրացալեզու հայ հանդիսատեսին թատրոն բերելու խնդիրը: Ինչպես նշեց իմ զրուցակիցը, «վերջին երկու տարիներին մեր թատրոնը սկսեց ուրիշ մեթոդ էլ կիրառել, ռուսալեզու հայերի հետ աշխատելը շատ կարևոր է, սկսեցինք զանգել տները, հրավիրել

¹⁵² <http://tbilarmtheatre.ge/1100.htm>

թատրոն: Ներկայացումները հայերեն են, բայց արդեն ունենք սինխրոն թարգմանություն՝ ռուսերեն ու վրացերեն: Հայերի 80%-ը ռուսախոս է, շատերը խոսում են, բայց չեն կարդում: Մենք պետք է հավաքվենք, թե չէ կկորենք»¹⁵³:

Բացի թատրոնից, որը, ինչպես նշեցինք, պետական հովանավորության շնորհիվ է իրականացնում իր գործունեությունը, հետխորհրդային շրջանում հասարակական կազմակերպության կարգավիճակով գործել են հայ մշակույթի պահպան և մի քանի՝ հիշատակության արժանի օջախներ: Դրանցից էր Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, որտեղ միավորված էին ամբողջ Վրաստանի հայազգի գրողները:

Գործում են նաև մի քանի հայկական պարային համույթներ: Հայկական պարարվեստը ճանաչված ու սիրված է վրաց հանդիսատեսի կողմից: Օրինակ՝ «Վանք» համույթը 2 անգամ՝ 1998 և 1999թթ., արժանացել է Թբիլիսիում անցկացվող «Ոսկե արծիվ» փառատոնի ոսկե մեդալին՝ հետևում թողնելով մրցույթին մասնակցող վրացական համույթներին:

Բավական ակտիվ գործում է Հայ Առաքելական Ուղղափառ սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի մշակույթի, կրթության և երիտասարդության «Հայարտուն» կենտրոնը: Այն հիմնադրվել է 2010թ., իսկ 2011թ. հունիսին օծվել վեհափառ հայրապետի ձեռամբ: Կենտրոնին կից գործում է նախակրթարան: 2011թ. հիմնվել են նաև «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ջեյրան» համույթը և Ներսես Շնորհալի երգչախումբը: Համույթը հաջողությամբ մասնակցել է ՀՀ սփյուռքի «Իմ Հայաստան» փառատոնին՝ պարգևատրվելով ՀՀ Սփյուռքի նախարարության շնորհակալագրով և «Կոմիտաս» մեդալով, ելույթ է ունեցել Վրաստանում անցկացված «Բրավո» ազգագրական պարերի փառատոնին և դարձել ոսկե մեդալակիր:

«Հայարտունը» հայոց մշակույթի և ավանդույթների պահպանման ուղղությամբ ակտիվ գործող կարևորագույն օջախ է: Այստեղ կազմա-

¹⁵³ Հարցազրույցներ..., դաշտային հետազոտություն, 2006:

կերպվում են բազմաթիվ մշակութային միջոցառումներ, հոբելյանական երեկոներ, հիշարժան տարելիցներ և այլն: Կենտրոնի գործունեությունը լայնորեն լուսաբանվում է ՋԼՄ-ում և սոցիալական ցանցերում:

Թբիլիսիում շարունակում է մեծ հանդիսությամբ նշվել սայաթնոյան Վարդատոնը, որն անցկացվում է յուրաքանչյուր տարվա մայիսի վերջին կիրակի օր: Իսկ սույն թվականի ապրիլին Վիրահայոց թեմում Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցին նվիրված հիշատակի միջոցառումների շարքում Թբիլիսիի Սբ.Էջմիածին եկեղեցու բակում տեղադրվեց և օծվեց խաչքար՝ նվիրված եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Թբիլիսիի մերձակա բնակավայրերը

Հարկ է նշել, որ հետխորհրդային շրջանում Թբիլիսիի մերձակա բնակավայրերի հայությունն աստիճանաբար նուսրանում էր: Պատճառներից մեկը հանրապետության ազգային փոքրամասնությունների, հատկապես հայերի, շրջանում արձանագրված արտագաղթի ալիքն էր: Սակայն գավառաբնակ հայության փոշիացումը գլխավորապես տեղի ունեցավ հատկապես լեզվական ձուլման ճանապարհով, քանի որ մինչև ԽՍՀՄ փլուզումն արդեն նրանց մի մասը վրացախոս էր:

Խորհրդային տնտեսական համակարգի փլուզման արդյունքում Ռուսթավ քաղաքից նույնպես արտագաղթ եղավ, որի արդյունքում, 2002թ. տվյալներով, այստեղ մնացել էր ընդամենը 2809 հայ՝ բնակչության 2,4%-ը:

Կախեթի շրջանում, որը ներառում է Թելավ, Սագարեջո, Սղնախ, Լագոդեխ և այլ քաղաքներ ու գյուղեր, 2002թ. մարդահամարով բնակվում էր ընդամենը 3.789 հայ: Նրանցից միայն 1146-ն են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ: Մցխեթ քաղաքում ևս 427 հայ է ապրում, որոնցից հայադավան է 101-ը:

2002թ. տվյալներով, Թեթրիձղարոյի շրջանում բնակվում է 2632 հայ, որոնք կազմում էին ամբողջ բնակչության 10.38%-ը: Եթե համե-

մատենք 1926, 1939, 1959 և 2002թթ. հայկական բնակչության տվյալները, ապա այն կարտացուլվի այսպես.

Աղյուսակ 8

Թեթրիծղարոյի հայ բնակչության թվաքանակը 1926, 1939, 1959 և 2002թթ.

	1926	1939	1959	2002
Թվաքանակ	4916	11 444	6887	2632
Ամբողջ բնակչության համեմատ	47.2%	25.8%	17.6%	10.4%

2002թ. պաշտոնական տվյալներով, հայերը կազմում էին Դաղեթ-Խաչենի բնակչության 99%-ը (235-ից 232-ը հայ են), Շամշուղայի՝ 98%-ը, Մեծ Դուռնուկի՝ 76%-ը, Փոքր Դուռնուկի՝ 85%-ը, Սամղրեթի՝ 25%-ը և այլն¹⁵⁴:

Ներկայումս այս գյուղերը, բացի Սամղրեթից, շարունակում են առավելապես հայաշատ մնալ: Ոչ պաշտոնական տվյալներով, այսօր հայերի թիվը կազմում է. Շամշուղա՝ 360 մարդ, Դաղեթ-Խաչեն՝ 150, Սամղրեթ 51՝ Դուռնուկ (Մեծ ու Փոքր)՝ 30:

Նշված գյուղերի բնակլիմայական պայմանները բավական հրապուրիչ են, այդ պատճառով շատերն իրենց տներն օգտագործում են որպես ամառանոցներ: Ընդհանրապես, Թեթրիծղարոյի գյուղերում ավանդաբար հանգստացել են հայ գրականության ու մշակույթի գործիչները: Այսպես, հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը 1901-1902թթ. ընտանիքով հանգստացել ու կազդուրվել է Թեթրիծղարոյում և հմայվել նրա բնությամբ ու մարդկանցով: 1902թ. նրա հետ մեկնել էր նաև Ղազարոս Աղայանը, որը ժամանակին սովորել է Շամշուղա գյուղի քահանա Տեր-Պետրոսի մոտ: Նա հետագայում իր «Երկու քույր» վեպի նյութը վերցրել է Դաղեթ-Խաչեն և Շամշուղա գյուղերի կյանքից¹⁵⁵:

¹⁵⁴ Տախտաշվազյանի մոնոգրամի 2002 թվականի փորձերը չեն համընդհանուրացվում 2002 թվականի վերջին տվյալների հետ: Մ. Գրախանյանի «Բնակչության և տեղափոխության վիճակը Հայաստանում 2002 թվականին» համազորությունը, Երևան, 2003, էջ 208-210 [Վրաստանի բնակչությունը 2002թ. համընդհանուր մարդահամարի արդյունքներով, հատ. II, Թբիլիսի, 2003, էջ 208-210]:

¹⁵⁵ Մաղախյան Վ., Պատմական Թեթրի ներկան, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 204:

VI. ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Թիֆլիսում և մերձակա բնակավայրերում հայերի ներկայությունը դարերի պատմություն ունի: Հայերի ներդրումն այս շրջանների, հատկապես մայրաքաղաքի զարգացման գործում իրապես անգնահատելի է: Մեծ է նաև հայության դերը վրացական պետության ստեղծման, կայացման և զարգացման գործում: Հիրավի, հայությունը Վրաստանում պետականաստեղծ ազգ է: Այս մոտեցումն արմատացած է նաև տեղի հայության շրջանում, ինչը խոչընդոտում է նրանց կողմից Հայաստանի՝ իբրև միակ Հայրենիքի, ընկալմանը:

Ներկայացնենք Թիֆլիսում և ուսումնասիրվող շրջաններում հայության ներկայացվածության, ուժի և հզորության դինամիկան.

1. Vդ. մինչև XIXդ.՝ աստիճանական կուտակման և հզորացման շրջան: Տեղի էր ունենում հայության զանգվածային ներգաղթ նշված շրջաններ և առանձին տարածքներում հոծ բնակեցում:
2. XIXդ.-1918թ.՝ վերելքի շրջան: Հայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական դիրքը հատկապես Թիֆլիսում աննախադեպ հզորության էր հասել: Այս փուլում սրվեցին հայ-վրացական հարաբերությունները:
3. 1918-1921թթ.՝ հայության հզորության անկման շրջան: Այս կարճատև ժամանակահատվածում լուրջ հարված հասցվեց հայության դիրքերին, փոշիացվեցին ահռելի դրամական միջոցներ, տեղի ունեցան հալածանքներ և զանգվածային ձերբակալություններ:
4. 1921-1991թթ.՝ դանդաղ ձուլման շրջան: Խորհրդային Վրաստանը կառուցում էր ազգային պետություն, որտեղ տիտղոսակիր ազգն աստիճանաբար հզորանում էր թե՛ ժողովրդագրական, թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումով:
5. 1991թ. առ այսօր՝ կրկին անկման շրջան: Վրացական ազգայնականության բուռն վերելքի պայմաններում հայկական կազմակերպված միավորի թուլացում, արտագաղթ, հայկական դպրոցական համակարգի փլուզում, հայապահպանության հեռանկարների կորուստ:

VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Թբիլիսիի և մերձակա բնակավայրերի հայությունը ներկա փուլում աստիճանաբար անկում է ապրում թե՛ քանակապես, թե՛ որակապես: Նախկին Թիֆլիսի գավառի հայությունը նույնպես, ինչպես երևում է վիճակագրությունից, այսօր գրեթե փոշիացել է: Ոստի մեր խնդիրն է մտածել առկա անցանկալի զարգացումներին հակազդող ծրագրերի մշակման և իրականացման մասին, միաժամանակ զարկ տալ Թբիլիսիի հայ համայնքի զարգացման ծրագրերին: Այս հարցում ՀՀ-ն իր դերակատարումն ունի, ընդ որում՝ ոչ միայն պետական և քաղաքական կառույցների (ինչը կարող է բացասաբար ընկալվել վրացական իշխանությունների, հնարավոր է՝ նաև տեղի հայության կողմից), այլև հասարակական կառույցների միջոցով: Անշուշտ, հայեցակարգային դրույթները պետք է մշակվեն պետական մակարդակով և խնդրին ծանոթ փորձագետների կողմից, իսկ ծրագրերի ամփջական իրականացումը կարելի է տեղափոխել հասարակական սեկտոր՝ կիրառելով այդ դաշտին հատուկ ճկուն մեխանիզմներ:

Նախ անհրաժեշտ է հաշվի առնել տեղական հետևյալ առանձնահատկությունները¹⁵⁶.

1. Թիֆլիսահայությունը Թբիլիսի քաղաքում իրեն որպես համայնք չի ընկալում և, հետևաբար, համայնքային վարքագիծ չի դրսևորում: Առկա է այն գիտակցությունը, որ իրենք ապրում են իրենց տանը, որ իրենք այս քաղաքի տերն են, քանի որ այն կառուցվել է հայկական կապիտալի կողմից և հայ հմուտ վարպետների ձեռքով և այլն: Թերևս, «տիրոջ» զգացողությունն է պատճառը, որ ինքնապահպանման մեխանիզմները խոր արմատներ չունեն այստեղ: Նաև այս զգացողությունն է պատճառը, որ վրացական միջավայրում հայկական տարրն ընկալվում է որպես առաջնա-

¹⁵⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Վարդանյան Թ., Թիֆլիսի հայ համայնքը. հին խնդիրներ, նոր մարտահրավերներ, «21-րդ ԴԱԸ» հանդես, թիվ 4 (14), 2006թ., էջ 94-128:

յին (եթե ոչ միակ) խոչընդոտներից մեկը Վրաստանի մայրաքաղաքում վրացական էթնոսի գերիշխանության վերջնական հաստատման ճանապարհին:

2. Թիֆլիսը միշտ եղել է բազմազգ քաղաք և հատկապես 19-րդ դ. ի վեր ընկալվել որպես տարածաշրջանի մայրաքաղաք: Հետևաբար, թիֆլիսահայությունը կրում է կոսմոպոլիտ միջավայրին և մայրաքաղաքային բնակիչներին հատուկ աշխարհընկալում և վարքաբանություն՝ առավել քաղքենի, զուսպ, ապաքաղաքական, կենցաղային շքեղությանը հակված, մշակութային կյանքում ակտիվ ներկայացվածությամբ, թույլ արտահայտված ազգային դիմագծով, ինչը դրսևորվում է առաջին հերթին կենցաղում, տոնածիսական կյանքում, ուտեստներում, բացի մայրենիից այլ լեզուներին տիրապետելու և ակտիվ գործածելու մեջ և այլն:
3. Հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունները՝ պարզ է դառնում, որ թիֆլիսահայությունը բավական տարբերվում է ջավախահայությունից, բայց նաև գիտակցում է, որ կա Ջավախքի հիմնախնդիրը: Այս գործոնն ազդում է թիֆլիսահայության վարքաբանության վրա: Ազգային խնդիրներում ջավախահայության առավել հաստատակամ վարքագիծը հանգեցրել է նրան, որ թիֆլիսահայությունն իրեն պատանդի կարգավիճակում է տեսնում, ինչը խորացնում է բարոյահոգեբանական անջրպետը ջավախահայերի և թիֆլիսահայերի միջև: Ջավախքի խնդրի միտումնավոր բացասական երանգավորմամբ արծարծումը վրացական ներքաղաքական քարոզչական դաշտում նպաստում է թիֆլիսահայության շրջանակներում քննադատական վերաբերմունքի ձևավորմանը ջավախահայության քաղաքական կամ որպես այդպիսին ներկայացվող ձեռնարկումների նկատմամբ: Այս երևույթն էլ ինքնաբերաբար հանգեցնում է քաղաքական պասիվությանը:
4. Ներկայումս թիֆլիսահայության հասարակական կյանքի կազմակերպումն ընթանում է Վիրահայ թեմի շուրջ: Սակայն դեռևս

լուրջ խնդիր է համայնքում ներքին միասնության բացակայությունը, որն ունի մի քանի պատճառներ: Դրանք են՝ ակտիվիստների անհատական նկրտումները, համայնքային կյանքին բնորոշ ինքնապահպանման մեխանիզմների բացակայությունը, անկախացումից ի վեր հայ մտավոր և ֆինանսական ներուժի արտագաղթը երկրից, հնարավոր է նաև վրացական հատուկ ծառայությունների նպատակաուղղված քաղաքականությունը և այլն:

5. Վրաստանում հայկական կապիտալի գրեթե բացակայությունը (չնայած վերջին տարիներին այս ուղղությամբ որոշ տեղաշարժեր կան)¹⁵⁷:
6. Թիֆլիսահայությունը կրում է անցումային շրջանի բոլոր բացասական հետևանքները. սոցիալ-տնտեսական ծանր պայմաններ, սոցիալական կապերի թուլացում, լիբերալ արժեքների գերակայություն ավանդական-պահպանողականի հանդեպ, սպառողական մտածողություն ի վնաս հոգևորի, կոսմոպոլիտ (իբրև ժամանակակից) արժեհամակարգի տարածում ի հաշիվ ազգայինի և այլն:
7. Այս ամենին գումարվում են նաև Հայաստանի և Վրաստանի արտաքին քաղաքականության հարթությունում տարբեր կողմնորոշումները, ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար կենսական խնդիրներում Վրաստանի թուրքամետ և ադրբեջանամետ դիրքորոշումները և այլն:

Առաջնային խնդիրն է՝ տեղում տիրող տրամադրությունների ուսումնասիրությունը և փորձագիտական գնահատումը՝ մոնիթորինգը, իրենց ապագայի վերաբերյալ համայնքի անդամների ծրագրերը պարզելու նպատակով: Հիմնական հարցադրումը պետք է լինի այն, թե որտեղ է թիֆլիսահայը տեսնում իր և իր երեխաների ապագան: Մենք պետք է վեր հանենք ճամպուրկային տրամադրությունների մակարդակը՝ *արտագաղթի պոտենցիալը*: Մեզ համար պետք է պարզ լինի՝

¹⁵⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Վարդանյան Թ., Թիֆլիսահայություն. նոր իրողություններ, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», Եր., 2011, թիվ 2:

մեծամասնությունը, ի վերջո, մնալու է Թիֆլիսում, թե՛ հակված է արտագաղթի և, անշուշտ, արտագաղթի ուղղությունը՝ Հայաստան, թե՛ ոչ Հայաստան (ՌԴ, ԱՄՆ, Եվրոպա և այլն):

Հետազոտության արդյունքում պետք է մշակվեն առնվազն երկու գուգահեռ ծրագրեր.

ա) զարգացման ծրագիր այն հատվածի համար, որն իր ապագան տեսնում է Վրաստանում;

բ) հայրենադարձության ծրագիր պոտենցիալ արտագաղթողների համար:

1. Զարգացման ծրագիր

Խնդիր. Խթանել հայաստանակենտրոն հայկական էլիտայի ձևավորմանը

Աշխատանքային ուղղությունները.

- «Հայ-վրացական համալսարանի» բացման (նախընտրելի է Ջավախքում) գործընթացի ձեռնարկում
- Նոր կառույցների ձևավորում. Թբիլիսիում հայաշատ թաղամասում շենքային պայմանների ապահովում, կից գործող գրախանութ, գրադարան, հայկական հեռուստաալիքները դիտելու հնարավորություն
- Թբիլիսիի հայկական դպրոցի հովանավորություն
- Թբիլիսիում հայերեն լեզվով թերթ(եր)ի հրատարակում և առաքում Ջավախք (Ջավախքում՝ սեփական թղթակից և թերթի սպառման պատասխանատու)
- ՀՀ-ում հրատարակվող թերթերի և ամսագրերի մշտական առաքում
- Հայկական ֆիլմերի փառատոնի, երգի-պարի համույթների ելույթների կազմակերպում
- Էլեկտրոնային հայալեզու ՋԼՄ:

2. Հայրենադարձության ծրագիր

Հայրենադարձության կազմակերպումը նուրբ ու ցավոտ խնդիր է, այն պահանջում է խոշոր ներդրումներ: Թիֆլիսահայության պա-

րագայում այն առավել խոցելի է, քանի որ գործ ունենք քաղաքային (առավել ևս մայրաքաղաքային) բնակչության հետ: Պետք է խուսափել Բաքվի հայության տխուր ճակատագրի կրկնությունից, երբ վերջիններս, նույնպես լինելով քաղաքային բնակչություն, ձգտում էին հաստատվել միմիայն Երևանում: Սակայն մեր մայրաքաղաքն այսօր ունի բեռնաթափման խնդիր: Հայտնի է, որ 1988-1991թթ. Բաքվից բռնագաղթածների մեծ մասը նախընտրեց օտար ավերն ու անորոշ ապագան առավել ապահով Հայրենիքից:

Սակայն միանգամայն իրավացի է դոկտոր Ա.Այվազյանը, երբ նշում է, որ «առաջիկա 10-20 տարիների ընթացքում Թբիլիսիի հայերը կամ կտեղափոխվեն Ռուսաստան, կամ կենթարկվեն վրացացման: Սակայն Հայաստանի համար նրանք մեծ արժեք են ներկայացնում որպես հայության գրագետ, մշակութային ավանդույթներով հարուստ մի մասնիկ»: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ նա նպատակահարմար է գտնում թիֆլիսահայության հայրենադարձությունը կազմակերպել դեպի Վանաձոր, հաշվի առնելով և՛ կլիմայական նմանությունները՝ ավելի խոնավ կլիմա՝ ի տարբերություն Արարատյան դաշտավայրում իշխող չոր կիսաանապատային կլիմայի, և՛ աշխարհագրական դիրքը՝ առավել մոտ գտնվելը Թբիլիսիին¹⁵⁸: Այս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են խոշոր ներդրումային ծրագրեր Վանաձորում և քաղաքի վերաճում Հայաստանի գոնե մշակութային կենտրոնի՝ ցուցահանդեսների կազմակերպում, մշակութային օջախների ստեղծում, թատերական կյանքի աշխուժացում, ստեղծագործական բարենպաստ միջավայր և այլն:

Հայրենադարձության կազմակերպումը համապարփակ ծրագիր է, պահանջում է տարբեր ոլորտների մասնագետների կարծիքների ու հետազոտության արդյունքների համադրում՝ տնտեսագիտական հաշվարկներ, աշխատաշուկայի ուսումնասիրություն և մասնագիտական կարողությունների ու կրթական մակարդակի բացահայտում:

¹⁵⁸ Տե՛ս *Այվազյան Ա.*, Главная идея всех армян – Армения, «Голос Армении» газ., Ер., 25 июня, 2005.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղբյուրներ

1. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, Հայաստանի լուսավորության ժողովում, ց. 1, գ. 932, թ. 13:
2. Гильденштедт И.А., Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809.
3. Иоселиани Платон, Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866.
4. Кавказский Календарь на 1907 год, Тифлис, 1906.
5. Кавказский Календарь на 1914 год, Тифлис, 1913.
6. Кавказский Календарь на 1915 год, Тифлис, 1914.
7. Первая Всеобщая перепись населения Российской империи 1897г., под ред. Н.А. Тройницкого, СПб., 1905.
8. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Тифлис, 1883.
9. საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთა აღწერის შედეგები, ტომი II. ტბილისი, 2003.

Դաշտային նյութեր

10. Վարդանյան Թ., Հարցազրույցներ թիֆլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ, 2006, 2011թթ. («Նորավանք» ԳԿՀ արխիվ):

Գրքեր

11. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հ. II, Եր., 1956:
12. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1971թ.:
13. Հակոբյան Պ., Հայ կաթողիկոսությունը պատմա-քննական լույսի տակ, «Հրավեր Ողջամտության», Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 1993:
14. Մաղայան Վ., Դաղթ-Խաչեն, Եր., 1999:
15. Երիցյանց Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա. Թիֆլիս:
16. Խուղոյան Ս.Կ., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987:
17. Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիոր, «Միտք» վերլուծական կենտրոն, Եր., 2011:
18. Հայկական գիրքը Վրաստանում 1921-1938 թթ. (բիբլիոգրաֆիա), Թբիլիսի, 1941:
19. Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, Եր., 1986:

20. Авторханов А., Загадка смерти Сталина (заговор Берии), Франкфурт на Майне, 1976.
21. Андерсон Б., Воображаемые сообщества: размышления об истоках и распространении национализма, М., 2001.
22. Анчабадзе Ю.Д., Волкова Н.Г., Старый Тбилиси: Город и горожане в XIX веке. М., Наука, 1990.
23. Как мы жили вместе в Грузии в XX веке, проект евроклио/матра, Тбилиси, 2008/2011.
24. М-ко Н.Н., Грузино-армянские претензии и Закавказская революция, Киев, 1906.
25. Трансформация миграционных процессов на постсоветском пространстве, под ред. Л.Рыбаковского, М., 2008, <http://rybakovsky.ru/migracia3c2.html>.

Հոդվածներ

26. Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-30-ական թվականներ), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 2:
27. Ստյան Լ.Ա., Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2003, թիվ 3:
28. Բաղայան Գ., Գուգարքի հյուսիս-արևելյան գավառների հայ բնակչությունը 1886-2002, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», հոդվածների ժողովածու, Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009:
29. Բայրամյան Հ., Թիֆլիսի հայ գրական կյանքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1992, թիվ 2:
30. Գևորգյան Լ.Ս., Գրիգոր Արծրունու «Մշակը» և գրաքննությունը (1872-1892), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1990, թիվ 9:
31. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
32. Մախիյան Բ., Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918թ. օգոստոս – 1921թ. փետրվար), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2011, թիվ 1:
33. Մարտիրոսյան Վ., Հայ-վրացական առնչությունները XVIIIդ. 50-60-ական թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1980, թիվ 1, էջ 45:
34. Մախիյան Բ., Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում. 1918-1920, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 1:
35. Մաղալյան Վ., Վրաստանի արվեստագիտական հայ մամուլը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1991, թիվ 3:
36. Մաղալյան Վ., Պատմական Թոեղքի ներկան, «Հայոց հյուսիսային դար-

- պասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009:
37. Մաղալյան Վ., Վրաստանի հայկական դպրոցները, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009:
 38. Մելիքսեթ-Բեկ Լ., Հին Թբիլիսիի և հայ-վրացական մշակութային կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական պրպտումներ», խմբ. Պ.Մուրադյան, Ս.Էջմիածին, 2010:
 39. Մելիքսեթ-Բեկ Լ., Հայերը Վրաստանում, «Պատմա-բանասիրական պրպտումներ», խմբ. Պ.Մուրադյան, Ս. Էջմիածին, 2010:
 40. Մխիթարյան Ա., Թբիլիսիի Ա.Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1971, թիվ 3:
 41. Մխիթարյան Մ.Հ., Թիֆլիսյան խճանկար, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1991, թիվ 5:
 42. Շիլակաձե Ի., Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1971, թիվ 3:
 43. Պետրոսյան Ա., Սոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1966, թիվ 12:
 44. Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 1928, No 6:
 45. Վարդանյան Թ., Այսրկովկասում թաթարական ազգայնականության դրսևորման արմատները, «Դրոշակ», Եր., 2002, թիվ 4:
 46. Վարդանյան Թ., Վրաստան. Ինքնությունը քաղաքական ծրագրերում և գործողության մեջ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ» ամսագիր, Եր., 2010, թիվ 3:
 47. Վարդանյան Թ., Հայ-վրացական ազգամիջյան հարաբերությունների պատմությունից, «Դրոշակ», Եր., 2003, թիվ 1:
 48. Վարդանյան Թ., Երկլեզու (բիլինգվալ) կրթության առանձնահատկություններն ազգապահպանության հարցերի տեսանկյունից, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», Եր., 2010, թիվ 5:
 49. Վարդանյան Թ., Թիֆլիսի հայ համայնքը. հին խնդիրներ, նոր մարտահրավերներ, «21-րդ ԴԱԸ» հանդես, թիվ 4 (14), 2006թ.:
 50. Վարդանյան Թ., Թիֆլիսահայություն. նոր իրողություններ, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս Ազգային անվտանգություն», Եր., 2011, թիվ 2:
 51. Վրացյան Ս., Հայաստանը և իր հարևանները, «Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի», 4-րդ հատ., Եր., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009:
 52. Айвазян А., Главная идея всех армян – Армения, «Голос Армении», Ер., 25 июня, 2005.
 53. Волкова Н.Г., Этнические процессы в Закавказье в XIX-XXвв., «Кавказский

- этнографический сборник». Вып. 4, М., 1969.
54. Волкова Н.Г., Этнические процессы в Грузинской ССР, «Этнические и культурно-бытовые процессы на Кавказе», М., Наука, 1978.
 55. Комахия М., Формирование этнической карты Грузии и современные миграционные процессы, «Центральная Азия и Кавказ», 2008, но. 1.
 56. Кочоян А.Н., Отражение структурных особенностей тбилисского диалекта в произведениях Г.Сундукяна, Автореф. канд. дисс. Ереван, 1958.
 57. Максудов С., Миграции в СССР в 1926-1939гг., «Cahiers du monde russe», 1999, 40/4.
 58. Путкарадзе Т., Вуркадзе З., Этническая структура и демографические проблемы в Грузии, «Этнографическое обозрение», М., 2007, но. 5.
 59. Чхетия Ш., Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1958, թիվ 3:
 60. Chkhartishvili M., “On Georgian Identity and Culture”, Nine International Presentations, Tbilisi, 2009.

Տպագիր և էլեկտրոնային մամուլ

61. «Լումա», Թիֆլիս, 1896, Գիրք Ա, խմբագրական:
62. <http://www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html>.
63. <http://www.geostat.ge/>.
64. http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_26.php?reg=2330.
65. <http://www.azg.am/?lang=AM&num=2006060707>
66. <http://armenianchurch.ge/hy/tem>
67. http://www.armenia.ge/norashen/norashen_2_arm.pdf
68. <http://tbilarmtheatre.ge/1100.htm>

